



ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Սիրելի ընթերցող,

Քո դատին է ներկայացվում «Բանբեր Հայաստանի գրադարանների» հանդեսի հինգերորդ հատորի առաջին համարը:

Հոդվածներ են ներկայացված հետևյալ թեմատիկ ուղղություններով՝ «Մատենագիտություն. տեսական և գործնական խնդիրներ», «Մարզային և համայնքային գրադարաններ», «Անձնական գրադարաններ», «Մշակութային ժառանգություն», «Գրադարան. տեսություն և պրակտիկա»:

2019 թ. նշվում է Հայաստանի ազգային գրադարանի պետական կարգավիճակ ստանալու 100-ամյակը: Ամսագրի այս համարում ներկայացրել ենք Երևանի արական գիմնազիայի ստեղծման պատմությունը, գիմնազիայի գրադարանը, որի հավաքածուի հիմքի վրա հետագայում ձևավորվել, իսկ ավելի ուշ պետական կարգավիճակ է ստացել Հայաստանի ազգային գրադարանը: Ներկայացրել ենք նաև ՀՀ հանրային գրադարանի առաջին տնօրեն Ստեփան Կանայանի գործունեության վերաբերյալ փաստաթղթեր, որոնք լավագույնս պատկերացնում են տալիս գրադարանի այդ շրջանի գործունեության ու վիճակի մասին:

Այսօր առանձնահատուկ ուշադրության կարիք ունեն մարզային և համայնքային գրադարանները, որոնց խնդիրները լուծել հնարավոր է միայն պետական աջակցության շնորհիվ: Ամսագրի այս համարում առանձնացրել ենք Արմավիրի մարզի գրադարանների ընդհանուր պատկերը:

Քննության են առնվել մանկական, դպրոցական և անձնական գրադարանները, ինչպես նաև Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի ֆոնդերը: Ներկայացվել են նաև հայ պարբերական մամուլի խմբագիրների կենսագրական տվյալների որոնման աղբյուրներն ու նյութերը, որոնց ուսումնասիրմամբ հարստանում են Հայաստանի ազգային գրադարանի շտեմարանները:

Այս համարում ներկայացրել ենք ՀՊՄՀ Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի 2 ավարտական աշխատանքի և 2 մագիստրոսական թեզի հիմնական դրույթները:

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՏՆՕՐԵՆ ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բանալի բառեր՝ Հայաստանի ազգային գրադարան, գրադարանի պատմություն, փաստաթղթեր, գրադարանային կապեր, հավաքածուներ:

Keywords. National Library of Armenia, Library History, Documents, library cooperation, Collections.

Գիտնական, բանահավաք, մանկավարժ, քաղաքական, հասարակական, մշակութային գործիչ, ՀՀ Հանրային գրադարանի առաջին տեսուչ Ստեփան Մկրտչի Կանայանը ծնվել է 1860 թ. դեկտեմբերի 25-ին՝ Երևանի նահանգի Իգդիր-Մավա գյուղում, գյուղացու ընտանիքում¹:

Սկզբնական կրթությունը ստացել է Իգդիրի Վարդանյան-Շուշանյան դպրոցում: Այնուհետև 1874 թվականից ուսումը շարունակել է նորաբաց Գևորգյան ճեմարանում, որի լսարանական բաժինն ավարտել է 1883 թվականին: Այդ շրջանի լավագույն ճեմարանական ուսուցիչներն էին Վահան վարդապետ Բաստամյանցը, Սուքիաս եպիսկոպոս Պարզանցը, Արիստակես վարդապետ Սեդրակյանը, Սեդրակ Մանդինյանը, Կարապետ Կոստանյանցը, Ստեփանոս Պալասանյանը և այլք²:

Ճեմարանական կրթությանը հաջորդում է եվրոպականը՝ Դորպատի, Տյուբինգենի, Մյունխենի, Բեռլինի և Ստրասբուրգի համալսարաններում: Պատմությունից և բանասիրությունից բացի, նա խորապես ուսումնասիրել է գերմաներեն լեզուն, այնուհետև 1888-1889 թթ. Հունաստանում դասական լեզուներ է ուսումնասիրել³:

Դեռևս 1881 թ. էջմիածնի Մանկավարժական խորհրդի արձանագրությունից հայտնի է դառնում նրան հայոց լեզվի ուսուցիչ նշանակելու մասին⁴:

Իսկ արդեն 1891 թ. Ստ. Կանայանը հրավեր է ստանում Գևորգյան ճեմարանի ղեկավարության կողմից՝ այնտեղ նաև գերմաներեն դասավանդելու նպատակով: Ընդունելով առաջարկը՝ վերադառնում և հաստատվում է Վաղարշապատում, դասավանդում գերմաներեն, հայոց լեզու և ընդհանուր պատմություն:

¹ ՀԱԱ. Ֆ.312, ց. 1, գ. 39, թ.1-3:

² Նշանավոր ճեմարանականներ, պրակ 1, Մ. Ա. Ս. էջմիածին, հեղ.Ա.Ղազինյան էջ 293-301:

³ ՀԱԱ Ֆ.57, ց. 2, գ. 915, թ.10:

⁴ ՀԱԱ Ֆ.312, ց.1, գ. 83, թ.7:

1900 թ. նա Գևորգյան ճեմարանի մանկավարժական խորհրդի քարտուղարն էր⁵:

1909 թվականին՝ մատենադարանապետ Առաքել Մնացականյանի մահվանից հետո, Մայր Աթոռի հոգևոր ճեմարանի վարչության հայտարարությամբ նույն պաշտոնում է նշանակվում Ստ. Կանայանը⁶: Այնուհետև նույն թվականին, երբ ողջ ուսուցչական կազմը, բացի Ստ. Կանայանից, հրաժարական էր տվել, նա ստանձնում է ճեմարանի տեսչի պարտականությունը⁷: Դրա մասին մենք տեղեկանում ենք Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալ Գևորգ արքեպիսկոպոսի՝ Ստեփան Կանայանին Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ նշանակելու մասին նամակից⁸:

Նորանշանակ տեսչի հիմնական նպատակն է դառնում մեր եկեղեցու համար ժամանակի պահանջներին համապատասխան կրթված հոգևոր սպասավորներ պատրաստելը և մատաղ սերնդին դասավանդող գրագետ, հայրենասեր և բազմակողմանի գիտելիքներով օժտված ուսուցիչներ ունենալը: Կրթությունը ճեմարանում գնալով առավել գիտական բնույթ է ստանում, չնայած որ Ստեփան Կանայանը բազմիցս հոգեբանական հարձակումների և անբարյացակամ վերաբերմունքի է արժանանում ճեմարանի մի շարք պաշտոնյաների կողմից: Եւ ոչ միայն նա. այս շրջանում ճեմարանից ուսուցիչների կամայական հեռանալը զանգվածային բնույթ էր կրում. ուսուցիչ Խաչիկ Սամուելյան⁹, վերակացուներ Ա. Մնացականյան, Վ. Տեր-Առաքելյան, Ն. Քյուրդյան¹⁰ և այլք: Գալիս է մի շրջան, երբ ճեմարանի ուսուցիչներն իրենք էին կազմում դասավանդվող առարկաների ծրագրերը: Սա առաջընթաց քայլ էր, որի նախաձեռնությունը պատկանում էր Ստ. Կանայանին: Հայոց լեզվի դասավանդումը և խորացված ծրագիրը, գրաբարի և աշխարհաբարի բոլոր դասարաններում պարտադիր դարձնելը նոր շունչ և որակ էր ստեղծում ճեմարանում: Հայոց լեզվի հիմնավոր իմացությունը՝ օտար լեզուներ յուրացնելու և տիրապետելու նախապայմանն է դառնում:

Անդրադառնանք Թիֆլիսում նրա քաղաքական, հասարակական, մշակութային գործունեությանը և վարած պաշտոններին: Դեռևս 1893-94 թթ. հոգևոր իշխանությունների հրահանգով Ստ. Կանայանը կարճ ժամանակ աշխատել է Թիֆլիսի Ներսիսյան և Շուշիի թեմական հոգևոր դպրոցներում՝ որպես ուսուցչական խմբի ղեկավար: Ապա 1915 թվականին ստանձնել էր Թիֆլիսի նպաստամատույց ընկերության անդամ-քարտուղարի պաշտոնը¹¹:

⁵ ՀԱԱ ֆ.457, ց.1, գ.1, թ.1-2:

⁶ ՀԱԱ ֆ.312, ց.1, գ.60, թ. 54:

⁷ ՀԱԱ ֆ.312, ց.1, գ. 60, թ. 16:

⁸ ՀԱԱ ֆ.312, ց.1, գ. 60, թ. 16:

⁹ ՀԱԱ ֆ.312, ց.1, գ. 60, թ. 58:

¹⁰ ՀԱԱ ֆ.312, ց.1, գ. 60, թ. 49:

¹¹ ՀԱԱ ֆ.472, ց.1, գ. 26, թ. 2:

1918 թ. Ստ. Կանայանին ներգրավում են գերմանա-հայկական մշակութային ընկերության աշխատանքներին՝ որպես ընկերության անդամ¹²:

Նույն թվականին նա ստանձնում է ՀՀ Դաշնակցական կառավարության դիվանագիտական միսիայի ներկայացուցիչի պաշտոնը Վրաստանում¹³:

1919 թ. ապրիլին Հայաստանի Մինիստրների խորհրդի հերթական նիստում ընդունված՝ «Պետական հանրային մատենադարանի մասին» օրենքով հանրային գրադարանը ստանում է պետական գլխավոր գրադարանի կարգավիճակ:

1919 թ. ապրիլին Ստ. Կանայանը Դավիթ Ջարյանի նամակից տեղեկանում է, որ ՀՀ Լուսավորության նախարար Մելիք-Կարակեոզյանը առաջարկում է իրեն ստանձնել ՀՀ Հանրային գրադարանի տեսչի պաշտոնը: Նույն թվականի ապրիլի 14-ին նա տալիս է իր համաձայնությունը: 1919 թ. հունիսի 1-ին Ստեփան Կանայանը նշանակվում է ՀՀ Պետական Հանրային գրադարանի վերատեսուչ:

Մնալով Թիֆլիսում՝ այդ պաշտոնը նախ համատեղում է դիվանագիտական միսիայի աշխատանքների հետ, միաժամանակ ձեռնարկում է Հանրային գրադարանի ֆոնդի համալրման համար անհրաժեշտ գրքերի հայթայթումը և դրանք Հայաստան տեղափոխելու աշխատանքները¹⁴: Այս շրջանի նրա գործունեությունը խիստ արգասավոր է եղել: Առանձնակի ուշադրության են արժանի Ստեփան Կանայանի և ՀՀ Հանրային կրթության և արվեստների նախարար Նիկոլ Աղբալյանի միջև տեղի ունեցած գրագրությունը, որ վերաբերում է հիմնականում ՀՀ Հանրային պետական գրադարանի համար գրականության ձեռք բերման դժվարին գործընթացին¹⁵: Այդ կարևոր գործի համար նա ջանք չի խնայել. ոտքի էր հանել Թիֆլիսի ողջ մտավորականությանն ու հայտնի գրավաճառներին, հայկական բոլոր ընկերությունները (ազգագրական, բժշկական, իրավաբանական և այլն): Սակայն այդ դժվար ժամանակահատվածում գումար հայթայթելը և վաճառվող արժեքավոր հավաքածուներից գրքեր ձեռք բերելը միշտ չէր հնարավոր լինում: Շատերն անգամ չգիտեին, որ Հայաստանի հանրային գրադարանի համար գրքեր են հավաքում, և տեղեկանալուց անմիջապես հետո միայն մեծ խանդավառությամբ բերում և հանձնում էին միսիայի հայ աշխատողներին. «Հայ հասարակությունն արդեն միսիա է բերում նուէրները, նոյնիսկ վաճառելիք գրքերը»: Առանձին ուշադրության են արժանի նվիրատվությունները: Մի այլ դժվար խնդիր էր այդքան մեծ քանակի գրքեր կուտակելու համար տարածք ունենալը, որի բացակայության պատճառով շատ նվիրատվություններ ժամանակավորապես մերժվում էին:

Կանայանը կազմում է ՀՀ Պետական Հանրային գրադարանի Կանոնադրությունը, որը ՀՀ կառավարության կողմից հաստատվում է 1919 թ. նոյեմբերի 20-ին: Սակայն գործի

¹² ՀԱԱ ֆ.457, ց.1, գ. 14, թ. 1:

¹³ ՀԱԱ ֆ. 276, ց.1, գ. 108, թ. 166:

¹⁴ ՀԱԱ ֆ.307, ց.1, գ. 26, թ. 22:

¹⁵ ՀԱԱ ֆ.307, ց.1, գ. 26:

անհրաժեշտությունից ելնելով, մինչև 1921 թվականը Ստ. Կանայանը գործում է Թիֆլիսում՝ առաջնորդվելով ստանձնած առաքելության կարևորությամբ:

ՀՀ Հանրային գրադարանի տեսուչ Ստեփան Կանայանի ջանքերով հաջողվում է հավաքել, գնել և կուտակել Թիֆլիսի, Բաքվի, Ախալցխայի, Կարսի և այլ վայրերի հայկական կազմակերպությունների, ընկերությունների, ուսումնական հաստատությունների, մասնավոր հավաքածուների գրադարանները, ապա՝ դրանք տեղափոխել Երևան:

Մեր երկրի գլխավոր գրադարանը ստեղծվում է Ալ. Մյասնիկյանի, Ն. Արղությանի, Բ. Ղորղանյանի, Լեոյի և այլոց անձնական գրադարանների, Ներսիսյան դպրոցի և այլ ազգային, մշակութային, ուսումնական հաստատությունների հավաքածուների հիման վրա:

Արժեքավոր և հետաքրքրական է նաև Ստ. Կանայանի գիտական ժառանգությունը:

Դեռևս 1902 թվականից նա «Պատմագիրք Հայոց» մատենաշարի հեղինակային հանձնաժողովի անդամ էր:

Վաստակաշատ գիտնականի մեզ հայտնի աշխատություններից են՝

«Յուցակ հայերէն ձեռագրերի Թիֆլիսի Ներսիսեան Հոգևոր դպրոցի». Թիֆլիս, 1893թ.

«Lehrbuch der Neuesamenischen Literatursprachen», 1902 թ.

«Պատմութիւն Յունաստանի, Ալի փաշա և Հետերիա», 1902 թ.

«Մամիկոնյաց պատմություն», Վաղարշապատ, 1907 թ.

«Ջոջանց տան ծռեր», Վաղարշապատ, 1910 թ.

«Անհայտ գավառներ հին Հայաստանի», 1914 թ.

Ստ. Կանայանը երեք տասնամյակ գիտական և հասարակական հնչեղության հող-վաճներով թղթակցել է հայկական և օտարերկրյա մամուլին: Տպագրվել է «Արմեն», «Հայ», «Հայ ճամբորդ» ծածկանուններով:

1925-1930 թթ. վաստակաշատ մտավորականը եղել է Հայաստանի Գիտության և արվեստի ինստիտուտի աշխատակից, ապա՝ նույն ինստիտուտի գիտական քարտուղար: Ստ. Կանայանը քաղաքացիական պատասխանատվությամբ է ծառայել հայ ժողովրդին: Նա իր փորձն ու իմացություններն ի սպաս է դրել սերունդներ դաստիարակելու պատվավոր գործին:

Ստ. Կանայանը վախճանվել է 1937 թ. հոկտեմբերի 8-ին, Երևանում:

Ստորև ներկայացվող վավերագրերն ընդհանուր պատկերացում են տալիս Ստեփան Կանայան մտավորականի անցած ճանապարհի և հիմնականում Հայաստանի ազգային գրադարանի կայացման կարևորագույն ժամանակաշրջանում նրա ունեցած դերի ու վաստակի մասին:

Վավերագրերը հրատարակվում են առանց որևէ փոփոխության:

**ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՀՈԳԵԻՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԱՆԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԱԴԵՏ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

7 փետրվարի 1909 թ.

Էջմիածին

Տեղակալի Հայրապետության Ամենայն Հայոց ամենապատիւ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի

Մ. Աթոռի Հոգևոր ճեմարանի վարչությանց

Յայտարարութիւն

Այսու պատիւ ունեմ յայտարարելու, որ պ. Առաքել Մնացականեանի մահուամբ բաց մնացին վերակացուի ու մատենադարանապետի պաշտօնները: Վերակացութեան պաշտօնի համար հրաւիրուեցաւ Երևանի Ռուսաց սեմինարիա ասարտած ու տարիների ընթացքում հայոց ու ռուսաց դպրոցներում ուսուցչութեան պաշտօն վարած պ. Գրիգոր Յակովբեանը, իսկ մատենադարանապետութիւնը յանձնուեց պ. Ստեփան Կանայեանին, որը արդէն երկրորդ տարին է, որ զբաղուած է մատենադարանիս գրքերի ցուցակագրութեամբ:

Վարչութեան պայմանները նոյնն են, ինչ որ հանգուցեալ Մնացականեանինը, որը ստանում էր 600 ռուբլի՝ վերակացութեան համար և 200 ռ.՝ մատենադարանապետութեան:

Տեսուչ ճեմարանի՝ Մ[ինաս] Բ[երբերեան]

Քարտուղար՝ Կ. Քոչարեան

ՀԱԱ Ֆ. 312, ց. 1, գ. 60. թ. 54: Բնագիր, ձեռագիր:

N 2

**ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԱՆՑԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ Ս.ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵԻՐԳՅԱՆ
ՀՈԳԵԻՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ Պ. ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐՅԱՆԻՆ**

17 ապրիլի 1909թ

Վաղարշապատ

Յայտարարութիւն

Երէկ՝ ամսիս 16-ին թէ՛ առաւօտեան՝ նախնական խորհրդածութեան եւ թէ՛ մանաւանդ ճաշից յետոյ՝ պաշտօնական ժողովում Ձեր վարմունքը դէպի ինձ, որ առաջին անգամը չէ, վիրաւորական համարելով՝ դուրս եկայ ժողովից:

Այժմ էլ, ինչպէս ժողովում յայտնեցի, կրկնում եմ և գրաւոր Ձեզ՝ իբրև տեսչի և ժողովի նախագահի, որ այլևս չեմ կառոյ մասնակցել ժողովներին. քանի որ դուք թոյլ էք տալիս Ձեզ ինձ վերայ գորգողալ, տեղից վերկենալով և վերուվար շրջելով ինձ անտեղի խօսքեր ուղղել, իբր ես Ձեր կարծիքին համաձայն չեմ լինում:

Խնդրում եմ յայտնել այս մասին ժողովին:

Ուսուցիչ ճեմարանի

Ստեփան Կանայեան
ՀԱԱ §. 312, g. 1, գ. 60. թ. 59: Բնագիր, ձեռագիր:

N 3

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՒՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ՆԱՄԱԿԸ ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԱՆԻՆ՝ ԷԶՄԻԱԾՆԻ ԳԵՒՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ
ՏԵՍՈՒՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

18 մայիսի 1909 թ.

Ս. Էջմիածին

Արգոյ ուսուցչի Գէորգեան հոգևոր ճեմարանի
Մայր Աթոռոյ պ. Ստեփանայ Կանայեան.

Քանզի ըստ հրաժարականի ուսուցչաց ճեմարանի մեք ի սոյն թիւ ազատ կացուցանք զամենեսեան ի պաշտամունս, ուստի և կարգիմք զԱրգութին Ձեր՝ իբրև զբազմամեայ և փորձառու վաստակաւոր յասպարիզի ուսուցչութեան, պաշտօնակատար տեսչի ճեմարանի Մայր Աթոռոյ ցառանձին տնօրէնութիւն, առաջարկելով Ձեզ ընդունել զամենայն գործս և զհաշիւս, զորմէ առաջադրեցաք Պ. Մանուկայ Աբեղեան : Յանձն առնիք Ձեզ կառավարել զճեմարանն՝ գործակցութեամբ տնտեսի և քարտուղարի դորին և արձակել աշակերտս ի գնալ ի հայրենիս խորքանց, իսկ որք չունին իսպառ հնարաւորութիւն՝ առաքել զնոսա ըստ օրինակի անցելոյ ամի ի փառս Սևանայ, հոգալով զծախս ճանապարհի և սննդեան ի վանսն: Իսկ որ ինչ հայի ի խնդիր աշակերտաց Զ(6)րդ դասարանի, մեք ունիմք ընդ փոյթ առնել զառանձինն տնօրէնութիւն:

Տեղակալ՝ Գէորգ սրբազան:
ՀԱԱ §.312, g.1, գ.60, թ16. ինքնագիր:

N 4

**ԳԵՒՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՉԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՍՏԵՓԱՆ
ԿԱՆԱՅԱՆԻՆ ՈՒՍՈՒՑԻՉ ՎԱՀԱՆ ՏԵՐ-ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

24 մայիսի 1909 թ.

Ս. Էջմիածին

Յայտարարութիւն

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ճեմարանը՝ մեր ապաքախտ Alma mater-ը իւր վարիչներով հանդերձ, Երջանկայիշատակ Հիմնադրի մահից յետոյ համարեայ միշտ ենթակայ է եղել վանքի իշխանաւորների բացարձակ կամայականութեան, նրանց անզուսպ թշնամանքին և թունալից քմահաճոյքին: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ արգահատելի հաստատութիւնը տարիներ շարունակ՝ մանաւանդ տեղապահութիւնների միջոցին, դարձել է անհատական գծով հաշիւներ մաքրելու կրկէս եւ սանձարձակ շահատա-

կոթինների ասպարէզ. ի նկատի ունենալով եւ այն, որ մօտիկ ապագայում էլ, հակառակ բոլոր ոսկի ակնկալութիւններին, այս թշուառ կրթավայրը զերծ չի մնալու վանական ինտրիգներից, ես բարոք եմ համարում ներկայացնել հրաժարականս եւ հեռանալ:

Վահան Տէր-Առաքելեան
ՀԱԱ ֆ.312, ց.1, գ.60, թ 18. ինքնագիր:

N 5

**ՍՏ. ԿԱՆԱՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Հ. ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ
ԿԱՐՍԻ ԲԵՐԴՈՒՄ ԱՌԿԱ ԳՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ**

7 ապրիլի 1919 թ.
Թիֆլիս

Արտաքին գործերի պ. Մինիստրին

Մինիստրութեանս հասած տեղեկութիւնների համաձայն Կարսի զանազան հիմնարկութիւնների և բերդի նկուղներում, ոտի տակ ընկած ոչնչանում են բազմաթիւ գրքեր:

Անգլիական միսսիայի թարգման Բոյաջյանի ասելով գեն. Անուսերը պատրաստակամութիւն է յայտնել այդ գրքերը Երևան փոխադրել այն պայմանով սակայն, որ Հայկական կառավարութիւնը վերադարձնի այդ գրքերը իրենց տէրերին, եթէ վերջիններիս կողմից լինի դիմում:

Արդ, խնդրում ենք Ձեզ դիմել համապատասխան քայլերի՝ յիշեալ գրքերը Երևան փոխադրելու մասին:

Ստ. Կանաեանց
ՀԱԱ ֆ.307, ց.1, գ.26, թ. 21: Բնագիր, ձեռագիր:

N 6

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ
ՍՏ. ԿԱՆԱՅԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

14 ապրիլի 1919 թ.
Թիֆլիս

Յարգելի պ. Դ. Զարեան

Ձեր N 8 գրութիւնը, թուարկեալ 8 ապրիլի 1919 ամի երեկ պատասխանելով բանաւոր, այսօր շտապում եմ տալ Ձեր ցանկութիւնը գրաւոր ևս պատասխանելու, որ դժուարութեամբ, բայց ամենայն սիրով յանձն եմ առնում «Должность директора Государственной библиотеки» Հայաստանի Հանրապետութեան Լուսաւորութեան Նախարար Մելիք-Կարակեղեանի [առաջարկութիւնը]:

Ինձ դժուարութիւն պատճառողը դժբախտաբար ռոճկի խնդիրն է, որով անհնարին կը լինի Հայաստանում այժմ ապրել, մանաւանդ ընտանիքով: Բայց յուսալով, որ Հայաստանում

կեանքի պայմանները տանելի կը դառնան և որ կառավարութիւնս անտես չի առնի իւր պաշտօնեաների համար ապահով դրույք ստեղծելու և մանաւանդ մի տարի, ինչպէս դուք ասացիք, այդ պաշտօնի համար ես Թիֆլիսում եմ աշխատելու, ուր ապրուստս աւելի աժան է, ուստի և ուրախութեամբ յանձն եմ առնում՝ թողնելով առայժմ այս խնդիրը և չկամենալով հրաժարուել հայրենիքին ծառայելու բախտից: Բայց պէտք է ձեզ յայտնեմ շեշտելով, որ իմ փորձը, ինչպէս և բազմաթիւ օրինակներ ցոյց են տալիս, որ դժուար կլինի այս պաշտօնը բարեխղճութեամբ վարել առանց մատենադարանում կամ գոնեայլ կից բնակարան ունենալու:

Մնամ յարգանք

Ձեր անձնուէր Ստ. Կանայեանց.

Թիֆլիս, Олегинская 37.

ՀԱԱ Ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 22: Բնագիր, ձեռագիր:

N 7

ՀՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳՅՈՋՅԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՏ.

ԿԱՆԱՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 ապրիլի 1919 թ.

Թիֆլիս

Մեծարգոյ պ. Մելիք-Ղարակոզեան

Մօտ երկու շաբաթ առաջ Դ[աւիթ] Ջարեանի միջոցով Ձեր հեռագրով ինձ առաջարկած Հայաստանի պետական մատենադարանապետի վերատեսուչի պաշտօնի համար ես պատասխանել եմ Ջարեանին դրական մտքով:

Քանի որ ինչպէս իմացայ Ջարեանից, հենց իմ նամակն էլ ձեզ է ուղարկուած, ուրեմն Դուք ունիք, այսպէս ասենք, Ձեր պաշտօնական առաջարկին պաշտօնական պատասխանն արդէն: Թող ներուի ուրեմն ինձ Ձեր ապրիլի 4-ի Նոր ստացած և աւելի անձնական բնոյթ կրող նամակի արթիւ անկեղծօրէն Ձեզ յայտնելու իմ խորին շնորհակալիքը Ձեր ուշադրութեան համար:

Ապա պէտք է յայտնեմ Ձեզ, որ ես այստեղ շատ աւելի ռոճիկ եմ ստանում քան Ձեր առաջարկածը, ուստի կուզենայի իմանալ, կան ևս յաւելումներ բացի հիմնական ռոճիկը և որքան. այնուհետև արդեօք ճիշտ է, որ պաշտօնեաները կարող են ստանալ կենսական մթերքներ՝ ինքնարժէք գներով. իսկ որ գլխաւորն է, մատենադարանապետը ունենալու է մատենադարանում և կամ կից պետական բնակարան՝ իւր յարմարութիւններով (լուսատրութիւն, վառելիք և ծառայ), ինչպէս այդ պահանջում է գործը և ընդունուած է այլ երկրներում:

Ես շատ կը ցանկանայի Ձեզնից իմանալ և հետևեալը: Ես այստեղ պետական երրորդ վարժարանում ստանում եմ բացի 12 դասի վարձատրութիւնից ևս չորս հնգամեակի (Пятилетки 2400 руб.) վարձատրութիւն:

Կարո՞ղ եմ յոյս ունենալ, որ ինձ Երևանում պետական վարժարաններում կը տրուի նոյն պայմանները, իհարկէ առանց խանգարելու մատենադարանի պարապմունքները, ինչպէս այստեղ, գէթ մի տարով. և վերջապէս մատենադարանի ծառայութիւնը կը համարուի շարունակութիւն ուսուցչականի:

Յուսով եմ, թէ չէք վշտանայ ինձնից, որ իբրև ընտանիքի հայր մտածում եմ հացի հոգսից գերծ մնալ և միանգամայն նուիրուել:

Այս բոլորից յետոյ, կարծում եմ անհրաժեշտ կլինի Ձեզ տեսնել՝ գործը սկսելուց առաջ, Ձեզ թէկուզ ժամանակաւոր ծրագիր և շտապ ներկայացնել, հրահանգներ ստանալ և այլն և հաստատապէս որոշել թէ իրօք մի տարի պէտք է մնամ այստեղ՝ աշխատելու, ինչպէս Դ. Զարեանն էր ասում, մանաւանդ որ Ձեր նամակում այս մասին անորոշ է ասուած:

Այս բոլորն անհրաժեշտ էր հաղորդել Ձեզ, որպէսզի ես Ձեր պատասխանից յետոյ կարողանայի լուծել այստեղ իմ զբաղմունքների խնդիրը և գործին նուիրուել. գուցէ և այս անկարևոր չէր և Հանրային կրթութեան նախարարութեան տեղեկանալ և կարևորը տնօրինել, որ թերևս կատարուել է, բայց ինձ անյայտ:

Յարգանք՝ Ձեր անձնանուէր
Ստ. Կանայեանց

N 7

**ՀՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳՅՈՂՅԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՏ.
ԿԱՆԱՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ
ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

21 ապրիլի 1919 թ.
Թիֆլիս

Մեծարգոյ պ. Մելիք-Ղարակոզեան

Մօտ երկու շաբաթ առաջ Դ[աւիթ] Զարեանի միջոցով Ձեր հեռագրով ինձ առաջարկած Հայաստանի պետական մատենադարանապետի վերատեսուչի պաշտօնի համար ես պատասխանել եմ Զարեանին դրական մտքով:

Յ.Գ.

Օգտուելով առիթից ի դէպ պէտք է յայտնեմ Ձեզ, որ Կարսում՝ սպայական ակմբանոցում (офицерский клуб) կար մօտ 10.000 գիրք, ինչպէս և ռեալական դպրոցում՝ մօտ 5000: Վերջինս ունէր և Կովկասում առաջնակարգ ֆիզիքական կաբինէտ և քիմիական աշխատանոց-լաբորատորիա, որի նմանը ըստ քիմիկոս Ярошенко-ի շատ ոռու համալսարաններ չունեն: Այս բաները ես գիտեմ իմ աշակերտ և բարեկամ Ադամ Օլթեցեանից, որ այս տարի Թիֆլիսի պետական երրորդ վարժարանի (գիմնազիօնի) ուսուցիչ է. իսկ առաջ

12 տարի Կարսի ռեալական ուսուցիչ և տնտեսական յանձնաժողովի(хозяйствен. комитетъ) անդամ է եղել:

Ցանկալի կը լինէր, քանի որ Կարսը շուտով Հայաստանին է միացուելու, որ մի անձն ուղարկուէր այնտեղի ռեալական և միւս դպրոցական գոյքերը կորստից ազատելու: Ես կառաջարկէի, որ Հայաստանի կառավարութեան ուշադրութիւնը հրափրէիք այս հանգամանքի վրայ: Օլթեցեանն իբրև ընթացիկ-au courant այս խնդրին երկիւղ էր կրում, որ տեղական յոյները կարող են ձեռք դնել ռեալական դպրոցի գոյքի վրայ:

Ինձ թուում է, որ Ադամ Օլթեցեանը յարմարագոյն անձը կլինէր այդ բանի համար, որպէս գործից տեղեակ, Կարս ուղարկելու, թէպէտև այս արդէն Ձեր կամ կառավարութեան գիտենալիքն է:

Նոյն

ՀԱԱ Ֆ.307, ց.1, գ.26, թ. 23-25: Բնագիր, ձեռագիր:

N 8

**ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Գ. ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳՅՈՋՅԱՆԻ ՀՐԱՄԱՆԸ
ՍՏ.ԿԱՆԱՅԱՆԻՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

5 հունիսի 1919 թ.

Երևան

Հրաման N 29

Ստեփան Կանայեանը սոյն յունիսի 1-ից նշանակում է Հայաստանի Հանրապետութեան Պետական Հանրային գրադարանի վերատեսուչ:

Հանրային կրթութեան Մինիստր՝

Գ. Մելիք-Ղարազեօզեան

Ֆ. 307, ց. 1, գ. 26, թ.108: Բնագիր, ձեռագիր:

N 9

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ ՍՏ.ԿԱՆԱՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀՀ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՍԻԱՅԻՆ՝ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՄԹԵՐՔՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

8 դեկտեմբերի 1919 թ.

Երևան

Հայաստանի Հանրապետության Դիանագիտական միսիային Վրաստանում

Ըստ բանաւոր հրամանի, ՀՀ Հանրային կրթության նախարարի՝ պատիւ ունիմ խնդրելու, որ Դիանոգ բարեհաճէ առաջարկել ՀՀ պարենաւորման մինիստրութեան ներկայացուցիչ Դաւիթխանեանին ՀՀ Պետական հանրային գրադարանի պաշտօնեաներին ևս տալ այն բոլոր մթերքներից և նիւթեղէններից, որ ստանում են ՀՀ Վրաստանում գտնուած հաստատութեանց բաժանմունքի պաշտօնեաները:

Ընդ սմին ներկայացնում եմ պաշտօնէութեան ցուցակը:

Յուցակ

Հայաստանի Հանրապետության Պետական հանրային գրադարանի պաշտօնեաների

1. Ստեփան Կանայեանց, վերատեսուչ գրադարանի, ընտանիքը բաղկացած է հինգ հոգուց:

2. Ներսէս Տէր-Միքայէլեան, ներկայացուցիչ Թիֆլիսում. ընտանիքը բաղկացած է հինգ հոգուց:

3. Խաչատուր Խաչատրեան, գրագիր. ընտանիքը բաղկացած է հինգ հոգուց:

Տեսուչ գրադարանի՝ Ստ. Կանայեանց

ՀԱԱ \$.275, ց.5, գ.108, թ.165-6. Բնագիր, ձեռագիր:

N 10

**ՀՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳՅՈՂՅԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՏ.
ԿԱՆԱՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՐՂՈՒԹՅԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ**

14 հունվարի 1920 թ.

Թիֆլիս

Ընդ սմին ուղարկելով Ձեզ իշխան Բորիս երկայնաբազուկ-Արղութեանի և իր եղբոր իրաւասութեան տակ գտնուող հոր՝ Նիկոլայ Արղութինսկու գրադարանի ցուցակը, որ բաղկացած է 7495 անուն և 9798 հատոր փառակազմ ռուսերէն և ֆրանսերէն գրքերից տասն և չորս պահարանով, պատիւ ունեմ յայտնելու, որ Կովկասում գտնուող մասնաւոր գրադարանների մէջ հազուագիւտ և կարևորներից մէկն է այս: Սակայն ձեռք բերել այս գրքերը

ամբողջապես ՀՀ պետական հանրային գրադարանի համար բաց արած սոյն թուի վարկով հնարաոր չէ, որովհետև գրադարանը անդրկովկասեան բռնաներով իշխանը այժմ գնահատում է մինչև չորս միլիոն ռուբլի: Եւ որովհետև ես իրաւունք չունեմ գրադարանի վարկի սահմաններից դուրս գալ, կարևոր սեպեցի այդ մասին յայտնել Ձեզ, որովհետև անհրաժեշտ գրադարան է և երկիւղ կայ, որ վրաց կառավարութիւնը կարող է գնել, որովհետև առաջարկուած է նրան ևս:

Գրադարանը, ճիշտ է, մի որոշ սիստեմով կազմուած չէ, ինչպէս կտեսնէք ցուցակից, բայց մեր Հանրային գրադարանի համար անհրաժեշտ է: Իշխանը թէև սկզբում եղբօր կողմ յայտնեց, որ գնահատում է վեց միլիոն, բայց իմ առաջակութիւնից յետոյ՝ միւս օրը յայտնեց, որ եղբայրը զիջում է չորս միլիոնի, աւելացնելով, թէ՛ դուք էլ Ձեր գինն ասէք. իսկ երբ հարցրի, թէ՛ պահարաններն էլ է հաշուում հետը, իշխանը յայտնեց, որ այդ մասին առայժմ ոչինչ մի ասէք. ես ինձ հասանելիք գումարից մի կերպ կհանեմ: Մինչոյն ժամանակ հաղորդում եմ, որ գրադարանը ունի իր տպագրած ցուցակը, որից գրադարանը գնելու դէպքում մենք կստանանք, որպիսի ցուցակ կազմելն ու տպագրութիւնը տասնեակ հազարներ կարող է նստել մեզ վրայ: Յայտնելով վերոյիշեալի մասին, մինիստրութեանդ ուշադրութեանն եմ հրաւիրում այս ձեռնարկութեան վրայ, խնդրելով իւր կարծիքն ու որոշումն այդ մասին յայտնել ինձ, և պարզելու՝ ինձ և առաջարկողի համար գրադարանի գնման խնդրով:

Վերատեսուչ գրադարանի Ստ.Կանայեանց
Ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 220: Բնագիր, ձեռագիր:

N 11

**ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ ՍՏ.ԿԱՆԱՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ
ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՐՎԵՍՏԻ ՆԱԽԱՐԱՐ Ն.ԱՂԱՎԱՅԱՆԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ ՊԱՇՏՍԱՎՈՐԵԼՈՒ ՏԵՂԻ ՄԱՍԻՆ**

30 հունվարի 1920 թ.

Թիֆլիս

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՐՎԵՍՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսու պատիւ ունեմ յայտնելու նախարարութեանդ, որ նրան ենթակայ պետական-հանրային գրադարանիս վարչութիւնը, որի գրքերը մինչև այսօր տեղաւորուած են Թիֆլիսի Գայեանեան օրիորդաց դպրոցի ներքին յարկում, այս երկրորդ անգամն է, որ գրութիւն է ստանում նոյն դպրոցի հոգաբարձութիւնից ազատելու դպրոցի շէնքը, պատճառաբանելով, որ ցրտերի պատճառով աշակերտութիւնը խոնուում է միջանցքում և երկրորդ, որ սեղանատունը բռնուած լինելով որպէս գրադարանիս պահեստ, աշակերտութիւնը նախաճաշելու հնարաւորութիւնից զրկուում է:

Գրադարանիս վարչութիւնը բոլոր միջոցները գործադրեց, ազգային բոլոր հաստատութիւններին դիմեց՝ վիրահայոց ազգային խորհրդին, Ներսէսեան դպրոցին, Յովնանեան դպրոցին և Ղուկասեան թանգարանին, որպէսզի գրադարանի պահեստի համար որևէ տեղ յատկացուի. սակայն և ոչ մի տեղ այդ հաստատութիւններից որևէ մէկում չկարողացանք ցարդ ստանալ, այդ պատճառով ոչ մի հնարաւորութիւն չը կայ որևէ կերպ ազատել յիշեալ դպրոցի շէնքը. ինչ վերաբերում է հոգաբարձութեան պատճառաբանութեան, դպրոցում վերացուել է աշակերտների նախաճաշիկը, իսկ ցրտերը մի երկու շաբաթից կը մեղմանան. բացի այդ երկու տարի շարունակ նոյն այդ շէնքը եղել է զինուորական վարչութեան տրամադրութեան տակ, երբ նոյն պատճառները կային և այժմ կարծում եմ կարող է այն տրամադրելի լինի Հայաստանի հանրապետութեան գրադարանի պահեստի համար՝ մինչև նրա տեղափոխութիւնը:

Ի նկատի ունենալով վերոյիշեալը՝ խնդրում եմ նախարարութեանդ հեռագրով յանձնարարել Գայեանեան դպրոցի հոգաբարձութեանը, որ նա թոյլ տայ գրադարանիս գրքերը պահելու նրա խնամքին յանձնուած դպրոցի շէնքում, այլապէս կմնանք միանգամայն դուրսը և գրքերը տեղափոխութեան ժամանակ կվնասուին ու կորստի կմատնուին:

Վերատեսուչ գրադարանի՝ Ստ. Կանայեանց
Ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 231: Բնագիր, ձեռագիր

N 12

**ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ ՍՏ. ԿԱՆԱՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ
ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՐՎԵՍՏԻ ՆԱԽԱՐԱՐ Ն.ԱՂԲԱԼՅԱՆԻՆ ԳՆՎԱԾ
ԳՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ**

11 փետրվարի 1920 թ.

Թիֆլիս

Տպագրական օրէնքի կանոնադրութեան համար բոլոր իմ դիմումները մեր յայտնի և անյայտ փաստաբաններին ապարդիւն անցնելուց յետոյ՝ ես յաջողեցրի տպագրուած երկու գիրք, ա. գնուած մեր գրադարանի համար N6445 Դ. Мсерианц, з.м. Закон печати, М-ва 1878 և Բ. նուէր՝ ստացուած N6297 «Уставъ о цензуре печати», т. XIV, издание 1890 года Ст.

Գալով պ. Աւետեանի միջոցով պատուիրած ձեռնարհեստի գրքերի և զանազան դպրոցների ծրագրին, պէտք է ասեմ, որ շրջել եմ և հարցնել տուել բոլոր գրավաճառներից և հնագրավաճառներից և նոյնիսկ մասնաւոր հաստատութիւններից ու անձերից, բայց կարողացել եմ առայժմ ճարել միայն մի ծրագիր՝ «Маврицкий, В. Правила и программы классич. гимназій и прогимназій ведомства Министерства народн. просвещения и правила объ испытанія зрелости, М-ва 1908.»:

Ուղարկելով ձեզ այս գրքերը, պետք է ասեմ, որ մնացեալների մասին այստեղ հարց ու փորձը շարունակելու եմ և ապա դիմելու եմ Բագու ևս: Առ այժմ բոլոր հանգամանքներից երևում է, որ շատ հազուադիւս են գոնեալ] ձեռնարհեստի վերաբերեալ գրքերը:

Վերատեսուչ գրադարանի Ստ. Կանայանց
Ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 237: Բնագիր, ձեռագիր:

N 13

**ՍՏ. ԿԱՆԱՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԱՐՎԵՍՏԻ
ՆԱԽԱՐԱՐ Ն.ԱՂԲԱԼՅԱՆԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ և ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

10 փետրվարի 1920 թ.

Թիֆլիս

Ի լրումն իմ ամսիս 7-ի հեռագրի՝ պատիւ ունեմ հաղորդելու հետևեալը, որ Ձեզ առաջարկուած պարսկերէն, արաբերէն, թուրքերէն և թաթարերէն ձեռագրերի հաւաքածուն մօտ 510 հատ է՝ հաւաքուած զանազան ժամանակ, և պատկանում է մի քան[ի] անձերի, որոնց ներկայացուցիչն է Սմբատ Տէր-Աւետիքեանը:

Այս հաւաքածուի մէջ մտնում են և Տէր-Աւետիքեանի 60[-ի] չափ վերոյիշեալ լեզուներով ձեռագիրը, բայց ոչ իւր 20-ից աւելի հայերէն ձեռագրերը որ անցեալ ամառը առաջարկել էր մեզ՝ գնելու:

Երբ ես իմ զարմանքս արտայայտեցի, որ գոնեայ նախ Հայաստանին չի առաջարկում այս հաւաքածուն, նա պատասխանեց, որ ամառը ՀՀ Հանրային գրադարանի «Յատուկ մասնաժողովը» այնպիսի գին՝ 2000 մնթ. նշանակեց իմ հայերէն ձեռագրին, որ ես չէի կարծում, թէ Հայաստանը կը գնի և որ Ձեր գրադարանն այդքան վարկ ունի:

Վերջապէս յայտնեց, որ ինքը պարապ մնալով մտադիր է այսուհետև այս և նոյնիսկ մի հնավճառանոց հիմնելու՝ Կովկասի հնութեանց առևտրով զբաղելու:

Кавказское слово-ի, այն լուրը, թէ այս հաւաքածուն նկարիչ Եղիշէ Թադէոսեանինն ու Շմիլինգինն են, ճիշտ չէ. սրանք միայն վկայում են այդ ձեռագրերի գեղարուեստական և գիտական արժէքը: Ես իհարկէ խոնարհում եմ այդ նկարիչների հեղինակութեան առաջ՝ ի գեղարուեստականին, և կարծում եմ գիտնականին պէտք է այլ գնահատումներ լինեն:

Ես ունեմ թէկուզ ոչ հիմնական, բայց բաւական ապահով առհաւատչեայ՝ այս ձեռագրի և գիտական աժէքի համար: Մի պաշտօնական գրութեամբ Թադէոսեանին ուղղուած 2 նոյեմբերի 1919 ամի N11933 Ադրբեջանի Լուսաւորութեան նախարարութիւնը խնդում է «подробную опись ... коллекции рукописей и миниатюр с указанием цены, по коей вы согласны продать эти предметы»:

Այս նամակի պատասխանը նույն ամսին եղել է, որ ցուցակ չունեն և չեն կարող այժմ կազմել և յայտնում են միայն ձեռագրի բովանդակությունը, որի մասին իմ ձեռագրում յիշել եմ:

Աւելացնելու է միայն, որ [կան] հարիւրի չափ ձեռագրեր՝ գեղեցիկ մանրանկարչություն և գեղարուեստական ու խարանած կազմով: Մէկ երկուսը ես տեսայ, ուղղակի գեղարուեստական նմուշներ են: Ձեռագրերը, որոնցից ամենահինը հասնում է մինչև ԺԲ դարը, թղթեայ են, մագաղաթից մնուշի համար չկայ: Պատասխանը վերջանում է այսպէս «Владельцами оценена и желают получить теперь в одинъ миллионъ двести тысячь рублей минимумъ общерусскими денежными знаками»:

Ամենագլխաւորը գիտական արժէքը գնահատելու համար, կարելի է և քննութեան ենթարկել, եթէ բաւական չէ այն հանգամանքը, որ Ադրբեջանն առանձին մասնաժողով է ուղարկել, որոնք մօտ մի շաբաթ քննել են և կազմել սոսկ ձեռագրերի հեղինակների ցուցակ, որի մի մասը ես տեսայ: Այս հաւաքածուի մէջ բացի պարսիկ նշանաւոր բանաստեղծների՝ Ֆէրդուսի, Հաֆըզ, Նիզամի և այլ հեղինակներից կայ և այնպիսին, որ ցարդ հրատարակուած չէ. այլև մի ձեռագիր, որով մի պարսիկ նկարագրում է շէյխ Իբահուվաիի գործերը՝ քրիստոնէաների կոտորածը, որ մեզ առանձնապէս պիտի հետաքրքրի:

Պէտք է յայտնեմ Ձեզ, որ Ադրբեջանի մասնաժողովի լամուկները արժէք չեն տուել կրօնական ձեռագրերին առհասարակ, յայտնելով որ իրենց բնաւ չի հետաքրքրում, ինչպէս որ մեր ազատամիտները Խորենացին փէյին էին համարում:

Ձեռագրեր գնահատելը շատ ծանր ու դժուարին գործ է, մանաւանդ այժմ երբ թղթադրամի արժէքը օրըստօրէ ընկնում է: Լէօի գրադարանը, որ գնուելու վրայ էփ մեր գրադարանին նուիրելու նպատակով, արդէն կրկնակի է գնահատուում քան սեպտեմբերին էր. իսկ երբ Վրաստանը տպել տայ հիմնադիր ժողովով որոշուած 8 միլիոն թղթադրամը ի հարկէ աւելի ևս կը բարձրանայ, նոյնը կը լինի և այս ձեռագիրը: Ձեռագրին թէկուզ աւելի տուած դրամը կորած չէ:

Երկու օր առաջ պարսիկներ էին գնացել այս ձեռագրերի միայն նկարներն և կազմերը գնելու. բացի այս տեսակ գիրվաճառողներից կան և ուրիշ գիտական հաստատութիւններ, որոնք անտարբեր չեն այս հաւաքածուն ձեռք բերելու:

Ես կարծում եմ այս մի հազագիւտ դէպք է, որ չպէտք է ձեռքից բաց թողնել: Այդ հաւաքածուն կը բարձրացնի մեր գրադարանի անունը գիտական և մանաւանդ մահմեդական աշխարհում, որ համոզուած եմ քաղաքական բարերար ազդեցութիւն կարող է ունենալ Հայաստանի հպատակ մահմեդականութեան վրայ, երբ իմանան, որ իւր գրականութեան ու սրբութեանց մեր կողմից այսպիսի արժէք է տրուում:

Վերատեսուչ գրադարանի Ստ. Կանայեանց
Ֆ. 307, ց.1, գ. 26, թ. 238 և շրջ.: Բնագիր, ձեռագիր:

**ՍՏ. ԿԱՆԱՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԱՐՎԵՍՏԻ
ՆԱԽԱՐԱՐ Ն.ԱՂԲԱԼՅԱՆԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ և ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՁԵՌՔԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

11փետրվար 1920 թ.

Թիֆլիս

Այսու ուղարկում եմ Ձեզ այս ձեռագիրը, որով մօտաւորապէս ուզում եմ պայմանաւորուել Արդութեան երկու եղբայների հետ:

9 փետրուարի 1920 ամի Թիֆլիս.

Ա. Գրադարանը իր բոլոր պահարաններով և տպագրուած ցուցակը իւր գտնուած ու գտնուելիք օրինակներով վաճառում է 1.700.000 կովկասեան բոնի՝ երկու շաբաթուան ընթացքում վաճառելու պայանաւ:

Բ. Սենեակը իւր վերոյիշեալ գոյքերով մնում է ՀՀ պետական-հանրային գրադարանի վարչութեան տրամադրութեան տակ, մինչև նոյները Հայաստան տեղափոխելը:

Գ. Դրամի մի և վերջին մասը վճարում է, երբ հաշուով ու համարով կընդունուի գրքերը՝ ըստ ցուցակի և միւս իրերը: Ամեն մի պակասած գրքի համար պէտք է հանուի համապատասխան արժէքը, որ կորոշի երկու կողմից ընտրուած մի չեզոք մարմին:

Դ. Արդութեան երկու եղբայրները յանձն են առնում այլ ժառանգներից յարուցուելիք պահանջների պատասխանատուութիւնը:

Ա. Կէտի վերաբերութեամբ պէտք է յայտնեմ, որ գրացուցակից տպագրուած է եղել 300 օրինակ, սակայն Արդութեան եղբայրները չգիտէին պահեստի տեղը և այժմ ձեռքի տակ ունեն միայն, ինչպէս Բորիսն է յայտնել ինձ, մի 10-15 օրինակ, որին հասկանալի պիտի լինի ընդգծուած «գտնուելիք» բառի նպատակը:

Բ. Այս Բ. կէտը մեզ կազատի շատ անելորդ ծախքերից, և թերևս մի այլ օգուտ ևս ունենայ, որ մենք մի անկիւն ունենանք աշխատելու, թէ և չեմ կարծում որ այս պայմանի երկրորդ մասին համաձայնի. նոյն իսկ եթէ Ա. մասին համաձայնեն, անշուշտ կուզենան մեզնից մի վերջին պայմանաժամ, ուստի անհրաժեշտ է, որ Դուք ինձ յայտնէք, թէ ե՞տրե է հարկաւոր գրքերը Հայաստան տեղափոխել: Ես ուզում էի, եթէ Արդութեանները խստապահանջ լինեն, մինչև սեպտեմբեր կամ գոնեայ յունիս նշանակել. վերջնական խօսքը դուք պիտի ասէք, քանի որ ես չգիտեմ, թէ մեր շէնքը ե՞տրե պատրաստ կը լինի: Այս խօսքերը գրում էի մեր միսիայում, երբ իշխան Բորիսը ներս մտաւ և ի միջի այլոց ասաց. եթէ տունը չծախենք կամ եղբայրս չտեղափոխուի տանից՝ ինքը վաղուց է դուրս եկել՝ պէտք է գրադարանի գոյքը յունիսից ոչ ուշ տանէք և որ իրենք ոչ մի պատասխանատուութիւն գոյքի անկորուստ պահպանման յանձն չեն առնելու և խորհուրդ տուաւ կրակի դէմ ապահովելու, մինչև իսկ Հայաստան տեղափոխելը:

Գ. կէտը հասկանալի զգուշաւորութիւն է, կարող են գրքեր անյայտացած լինել, որ սեփականատէրերն անգամ չգիտենան:

Դ. և վերջին կէտը անհրաժեշտ է, քանի որ ինձ քաջ յայտնի է, որ Արղութեան երեք եղբայրներից մինն այժմ Պետրոգրադումն է, և վերջապէս միգուցէ մեզ անյայտ ժառանգորդներ ևս երևան գան:

Այս պայմանների մասին խօսել եմ միսիայում այլ և պ.պ. Ս.Մամիկոնեանի, Ս. Խաչատրեանի և Ա. Զամալեանի հետ:

Ես ոչ իրաւաբան այսպէս և այսքանն եմ մտածել. թերևս Դուք այդտեղից Ձեր կողմից կամ խորհրդակցութեամբ մեր մասնագետ իրաւաբանների հետ այլ կամ նոր բան կունենաք ասելու, խնդիր չապաղէք յայտնելու:

Ես այս էլ եմ մտածում, որ Արղութեան եղբայրներից ստանամ մի գրութիւն, իբր թէ նոքա իրենց գրադարանը նուիրում են Հայաստանին, այս պատահարի առաջն առնելու, եթէ գնուելիք գրքերը հանկարծ Վրաստանը չթողնի արտահանելու, ենթադրելով՝ թէ նուէրների համար այսպիսի արգելք դժուար թէ լինի. ի՞նչ կասէք: Բորիսը պնդում է, որ նոտարով հաստատի մեր ստորագրութիւնը, իսկ ես ուզում եմ մեր միսիայի միջոցով, այլապէս ծախք շատ կլինի և նուիրատութեան սարքովի ձևը իր նշանակութիւնը կարող է կորցնել:

Առհասարակ ժամանակ[ն] է իմանալու, թէ որքան հիմնաւոր են այս մասին տարածուող լուրերը. և ինչ պէտք է անել առաջն առնելու համար:

Այս արդէն իմ ոյժերից վեր է. միայն մեր բարձրաստիճան պաշտօնեաները կարող են այսպիսի մի դեր ըստանձնել: Ես կարող եմ, եթէ դէմ չէք լինի Վրաստանի լուսաւորութեան նախարարի օգնականի հետ իբրև նախկին պաշտօնակցի հետ խօսել:

Վերատեսուչ գրադարանի Ստ.Կանայեանց

Ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 239 և շրջ.: Բնագիր, ձեռագիր:

N 15

**ՍՏ. ԿԱՆԱՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԱՐՎԵՍՏԻ
ՆԱԽԱՐԱՐ Ն.ԱՂԲԱԼՅԱՆԻՆ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ**
24 փետրվարի 1920 թ.

Թիֆլիս

Ի Պատասխան Ձեր ամսիս 1-ի Հմր...հեռագրի, որով խնդրում էք Ձեզ առաջարկած մուսուլմանական ձեռագրի ցուցակը, պատիւ ունեմ յայտնելու ի լրումն ցարդ այս մասին հաղորդածներիս.

1) Բոլոր ձեռագրերը 504 հատ են, որոնցից 142-ը մեծադիր, 262-ը՝ միջադիր և 100-ը՝ փոքրադիր:

2) Այս բոլոր ձեռագրերից նկարներ և մանրանկարներ ունեն 103 գրչագիր:

3) Բոլոր ձեռագրերը շատ քիչ բացառությամբ, կարծես մօտ 10 հատ, կաշեկազմ են և ըստ մեծի մասին ունեն գեղարուեստական արժեք:

Ձեռագրերի մասին, գեղարուեստական արժեքի մասին, հետևեալը հաղորդեց ինձ՝ գրաւոր, մեր յայտնի նկարիչ Եղիշէ Թադէոսեանը, որ բառացի մէջ եմ բերում:

«Իմ դատողութեամբ գտայ Սմբատ Տէր-Աւետիքեանի մահմեդական ձեռագրերի ժողովածուն շատ գնահատելի, որոնց մասին տեղեկութիւն տուի գրաւոր Ատրպատականի կառավարութեան, շեշտելով ձեռագրերի գեղարուեստական արժեքը:

Թողնելով մասնագտներին գնահատել յիշեալ ժողովածուի գրական և գիտական արժեքները, համոզուած եմ, որ գեղարուեստական արժեքը մեծ է, թէև մանրամասն դեռ չեմ ուսումնասիրել. այդ մեծ ժամանակ և յարմարութիւն է պահանջում: Հարիւրի չափ ձեռագրեր կան նկարազարդուած, որոնց կարելի է բաժանել երեք շրջանի. հնագոյն պարսական, որոնց մէջ կան ուղղակի կլասիկ նմուշներ, միջին շրջանի և նորագոյն տաճկական. կան և պարսկերէնով շարադրուած: Շատերը կազմած են կաշուց և խորաքանդ (тиснением по коже) և ձեռանկար իւղաներկով. մնում է ասել, որ շատ խնամքով են հաւաքուած ու պահուած այդ 500 օրինակ ձեռագրերը»:

Գալով ձեր հեռագրին հաղորդել Ձեզ ձեռագրերի ցուցակը, այդ շատ դժուարին գործ է: Ադրբեջանի յատուկ ներկայացուցիչները մի շաբաթ աշխատելով կարողացել են միայն մի շատ համառօտ ցուցակ կազմել, նոյնիսկ անուշադիր թողնելով կրօնական և շարիաթի, լեզուագիտական, մասամբ բնագիտական և մաթեմատիկական ձեռագրերը (յայտնի կրօնական մեկնիչ Բուխարի, Ուլուխբէգի աստղաբաշխական աղիւսակները-Մարաղայի դպրոցի): Կազմած ցուցակը Ադրբեջանի ներկայացուցիչները տարել են հետները՝ խոստանալով Բագում անելիք զեկուցումից յետոյ կամ բնագիրը կամ մի պատճէն ուղարկել: Միայն վերջին օրը՝ մեկնելու օրը, Սմբատ Տէր-Աւետիքեանը կարողացել է Ադրբեջանի ներկայացուցիչներից ստանալ 107 ձեռագրի ցուցակ, աւելի շուտ անունները, որ ես արտագրելով ձեզ եմ ուղարկում՝ կցելով սոյն գրութեան:

Մեր նորագոյն պատմութեան համար հատկապէս հետաքրքրական է, ինչպէս առաջ հաղորդել էի, Աբդուլա Աֆշարի История нашествія и грабежей курдовъ под предводительствомъ шейха Ибадули, գրուած Հիջրայի 1297 թուականին:

Պէտք է ձեզ ասեմ, որ Ադրբեջանի ներկայացուցիչները շատ գիտական պատրաստութիւն և հմտութիւն ունեցողներ չեն եղել, եթէ ի նկատի ունենանք, որ մինքա.... բառի վերջին մասը թուրքերէն դուր բառով են բացատրելիս եղել. իսկ գնի մասին յայտնել են, որ թուրքերը տպագրութեան օրից մինչև այսօր այդքան փող չեն տուել թղթի կամ գրքի. սակայն տէրերն անողորմ ... և Սմբատը կարճ է կտրել:

Մեր բախտից Ադրբեջանից սրտատրուի սպասուելիք պատասխան հեռագիրը այս ձեռագրերի գնման մասին ուշանում է. ամենայն հաւանականութեամբ Ադրբեջանի նախա-

րարութեան մէջ տեղի ունեցած փոփոխութեան պատճառով (Շախտախտինսկին իւր կուսակցութեան կողմից ետ է կանչուած). սակայն միւս կողմից հանդէս է եկել մի նոր մրցակից, որն է Վրաց կառավարութիւնը:

Հաստատ աղբիւրներից գիտեմ, որ Վրաց հիմնադիր ժողովում խօսուել է միլիոնների առաջ կանգ չառնել, որպէսզի Ադրբեջանին ու Հայաստանին վաճառուելիք գրքերը կարելի լինի կասեցնել, գոնեայ մեծ գրադարանները և հաւաքածոները: Եւ ահա նախկին կովկասեան թանգարանի վարչութիւնը հրաւիրում է Սմբատ Տէր-Աւետիքեանին մոռացութեան տալ անցեալը և հրա[հա]յնգել վարչութեան թանգարանը պահելու-պահպանելու և վարելու գործը. ոմն Բարաթաշուիլսկին, այդ թանգարանի վարչութեան պաշտօնուհի, առաջարկում է իւր ամուսնու՝ հիմնադիր ժողովի անդամի միջոցով մուսուլմանական ձեռագրերը ծախել և հիմնադիր ժողովի գրադարանապետ Կեխտմանը, որ հրաւիրուած է հրաժարուած Նագաշիճէի տեղ, կողմնակի առաջարկ է անում նոյնպէս:

Ես հատկապէս խնդրեցի Ս. Տէր-Աւետիքեանին, որ համբերի, մինչև Ձեզնից պատասխան ստանամ: Նա դժուարութեամբ յանձն առաւ, որովհետև պարապ մնալով, ինչպէս Ձեզ գրել էի, այս տեսակի.....¹⁶, 50-ի չափ դարձեալ մուսուլմանական, գլխաւորապէս պարսկերէն ձեռագրեր գնելու առաջարկ, որ կուզենար ձեռք բերել:

Յայտնելով Ձեզ այս բոլորը և ենթադրելով, որ գնելու դէպքում այդ լեզուներին գիտակ անձերի մի մասնաժողով կարևոր կլինի, խնդրում եմ շտապել. ժամանակը չի սպասում, կեանքը ժամ ժամ է թանգանում, որ ազդել է, ազդում է և ազդելու է իհակէ և գների շուկայի վրայ:

Վերատեսուի՝ Ստ. Կանայեանց
Ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 254-255: Բնագիր, ձեռագիր:

N 16

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԱՐՎԵՍՏԻ ՆԱԽԱՐԱՐ Ն.ԱՂԲԱԼՅԱՆԻՆ ՍՏ. ԿԱՆԱՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ՄԱՍՆԱԽՈՐ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՄԱՍԻՆ

28 փետրվարի 1920

Թիֆլիս

Յունուարի վերջին ինձ մօտ եկաւ օր. Մանէ Հախվերդեանը, հանգուցեալ մեր յայտնի բժշկի քոյրը, որ ինչպէս Ձեզ ևս յայտնի է, իւր հօր ինքնագիրը, նամակները և մէկ երկու ձեռագիր մատեան նուիրել է ՀՀ պետական հանրային գրադարանին, յայտնելով, որ գտել է իւր հօր այլ նամակները, որ ես գնամ և ստանամ և թախանձագին պնդելով, որ անպատճառ հրատարակուի մանաւանդ ռուսերէն «СЛОБО» օրաթերթում, մանաւանդ, որ ուրիշներին էլ դիմում են և խնդրում իւր հօր ինքնագիրը:

¹⁶ Պահպանել ենք բնագրային ձևը (Ս. Ն.):

Խօսակցութեան ընթացքում օրիորդը յայտնեց, թէ Լալայեանն է իւր մօտ եղել մի ինչ որ պարոնի հետ և ասել, թէ ինչո՞ւ էք ձեր հօր գործերը նուիրել Հայաստանի հանրապետութեան Գրադարանին, ուր մշակներն են միայն լրագրեր կարդալու, և ոչ թէ ազգագրական և այլն:

Այս մասին ես ձեզ չէի գրելու, եթէ նոյնանման առտառոց խօսքերով որակած չլինէր Լալայեանը մեր գրադարանը Գարեգին Լևոնեանի, Զալալ Գրիգորեանի և ուրիշների առաջ, ասելացնելով, որ պետական հանրային գրադարանը լոկ ընթերցարան լինելով բուն գիտականը Ազգագրականինն է, ուստի և ինքը շուտով մեկնելու է Պոլիս և այլն և այլն, և եթէ նոյն այդ ‘Գիտնական ազգագրագէտ’ պարոնը մեր գրադարանին խոստացուած գրքերը չերթար կորզելու ազգագրականի համար, ինչպէս այդ արել է դիմելով Եփրեմ Ծատուրեանին, խնդրելով նրա հաւաքածուն՝ 600-ից ասելի գիրք և լրագիր-ամբողջապէս կամ գոնեայ մի մասը, առ որ յանդիմանութեան է ստացել վերոյիշեալ բոլոր անձերից:

Մի բնորոշ իրողութիւն ևս չեմ կարող չիշատակել այս առթիւ: Անցեալ տարուայ յուլիսից ես դիմել էի և ցարդ դիմում եմ շատ հաստատութիւնների և մասնաւոր անձերի կցելով Ձեզ ոչ անյայտ կոչը՝ գրքեր նուիրելու մեր գրադարանին: Եւ ահա թէ՛ մեր և թէ՛ մանաւանդ օտար հաստատութիւններից իսկոյն պատասխան և ապա ցուցակով նուէրներ ստանում, իսկ մեր ազգագրական ընկերութեան կողմից և ոչ իսկ պատասխանի արժանացայ. Երբ պ. Մելիք-Ազարեանին իբրև ազգագրականի նախագահի մէկ երկու շաբաթ առաջ յայտնեցի, թէ ինչու իմ նամակին չեն պատասխանում, զարմացաւ՝ յայտնելով, որ այդպիսի թուղթ չի ստացուել, ես նրան տարայ և անձամբ ցոյց տուի իմ անցեալ յուլիսի 7-ի Հմր 25 գրութեան պատճէնը: Մելիք-Ազարեանը խոստացաւ տեղեկանալ և երրորդ անգամ հանդիպելիս յայտնեց ինձ, թէ Լալայեանն ասում է, որ ինքը իբրև թէ նուիրել է մեր գրադարանին Ազգագրականի բոլոր հրատարակութիւնները: Ես պատասխանում եմ, պահանջեցէք նրանից իմ ստորագրութիւնը: Այս յայտնի անպատկառ սուտը բնութելուց յետոյ արդէն յայտնում է, թէ Դաւիթ Զարեանին է տուել, իբրև թէ այդ ‘հանճարը’ այնքան էլ չգիտէր, թէ Զարեանը Սո. Կանայեանցը չէ և գործ չունի ՀՀ Պետական հարային գրադարանի հետ: Վերջապէս ինչ գլուխներդ ցաւացնեմ, պատեպատ ընկնելուց յետոյ ասելացնում է. ինչի՞ն է պէտք, շուտով ազգագրականը կը տեղափոխուի Հայաստան:

Արդ այս «երևելի ազգագրագէտը» թող ինձ վրայ ինչ ուզում է խօսի և իրեն էլ ոչ միայն գիտնական, այլ հանճար համարի, բայց կարծում եմ չպէտք է այնքան ստորանայ, որ գործն ու անձն իրար հետ շփոթի և մեր վերածնունդ մայր Հայաստանի մի հաստատութիւնը՝ մեր գրադարանի վարկը քցի հասարակութեան առաջ:

Բայց որովհետև սա ընդունակ չէ այս պարզ գաղափարն ըմբռնելու, ինչպէս համոզուած եմ, ուստի և կարծում եմ, Ձեր ազդարարութիւնը թերևս կարաղացայ այս անհեթեթութիւններին վախճան դնել:

Վերատեսուչ գրադարանի՝ Սո. Կանայեանց:
Ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 262: Բնագիր, ձեռագիր:

N 17

**ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՐՎԵՍՏԻ ՆԱԽԱՐԱՐ Ն.ԱՂԲԱԼՅԱՆԻՆ ՍՏ.
ԿԱՆԱՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ և ՁԵՌԱԳՐԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ**

24 փետրվարի, 1920 թ.

Թիֆլիս

Ձեր անցեալ՝ նոյեմբեր 8-ի N4017 գրութեամբ յայտնում էք, որ Ձեր N3936 գրութեամբ կարգադրուած է մեզ ուղարկելու 50.000ռ.՝ անցեալ տարւայ 100.000ռ. նախահաշուի մնացորդը, որպիսի գումար չնայելով իմ գրութեանց 24 դեկտեմբերի N170 և 14 յունուարի N181, այլև իմ հեռագրին 16 փետրուարի N197, ես ցարդ չեմ ստացել (50.000)այլև վաղուց է, որ սպասում եմ դեկտեմբեր 17-ի օրէնքի համաձայն պաշտօնեաների ռոճիկների յաւելման հոկտ.-դեկտեմբեր 10.500ռ.:

Աւելի ևս անտանելի է այն հանգամանքը, որ գրադարանն այստեղ տակաւին չկարողացաւ ունենալ գէթ մի շատ փոքրիկ առանձին անկիւն, որպէսզի կարողանայինք գնուած, մանաւանդ նուէր ստացած հարիւրաւոր գրքերը կարգաւորել, ցուցակագրել, կապտտել: Ահա այս հանգամանքի շնորհիւ տակաւին չենք կարողացել ստանալ Աղթամարի չորս արկղ գրքերը, և այն էլ չգիտեմ թէ երբ հնարաւոր կլինի, երբ մեր միսիայում (դուք լաւ գիտէք) նոյնիսկ տեղ չկայ. Իսկ Ներսիսեան դպրոցը իւր գրադարանը բաց է անում շաբաթը միայն 3 անգամ, այն էլ 1-11/2 ժամ: Բժշկական ընկերութիւնից ստացայ մօտ 500 գիրք, մեր պատի պահարանում հազիւ զետեղուեց և ահա կնքելու, համարագրելու և ցուցակագրելու ինչպէս և կապտտելու համար ամեն իրիկուն պէտք է հանել և կրկին յետ դարսել պատի պահարանում, որովհետև ցերեկն այդ սենեակում ուրիշներն են լինում, երբ մեր պաշտօնեան միսիայի ընդունարանում, այցելուների անդադար հարցումների ենթական, ստիպուած է ընդհատումներով աշխատելու, իսկ գրքերը սենեակում թողնել ոչ թոյլ կտան, ոչ էլ կարելի է անկորուստ մնալուն երաշխաւորել:

Միւս կողմից չմոռանանք պահեստի դժուարութիւնները, մի կողմից հոգիս հանում է Գայեանեան դպրոցի վարչութիւնը, միւս կողմից յուսահատեցնում է Ղուկասեան թանգարանի անշարժ վարչութիւնը, որոնց իմ անդադար դիմումները ցարդ իզուր են անցել:

Այնուհետև ես յատուկ խնդրում եմ, որ շտապէք հաստատել տալ կանոնադրութիւնը կամ գոնեայ, եթէ այդ հնարաւոր է, գրադարանի բովանդակ պաշտադասը-շտատը, որովհետև ինձ հետ այժմ անհրաժեշտ է մի գրադարանապետ, քանի որ ես առաւօտ և իրիկուն, շատ անգամ ևս գիշերները զբաղուած եմ միմիայն գրադարանով, բնաւ ժամանակ չեմ ունենում գրավաճառանոցները յաճախելու և գրքեր ընտրելու: Ապա ժամանակն է, որ

մենք կազմենք առանձին գէթ մի համառօտ ցուցակ-ցանկ, մեր արդէն 6000-ի չափ գրքերի, որպէսզի բազմաթիւ կրկնականներ իզուր չգնենք, և մանաւանդ երբ գրքերի գներն անչափ բարձրանում են:

Եթէ աւելացնենք այժմ Արդութեան մասնաւոր գրադարանը գնելուց յետոյ ծագելիք աշխատանքները, ընդունելու թերևս փոխադրելու մեր միսիան և կամ հսկողութեան և այլ հոգսերը հայրենիք փոխադրելու, հարկաւոր կլինի արդէն մի այլ գրադարանապետ ևս կամ գոնեայ գրապահ, բայց որ գրադարանագիտութեան տեղեակ լինէր, քանի որ անհրաժեշտ է արդէն լուրջ մտածել գրքերը սիստեմատիկ դասաւորելու մասին և ըստ այնմ մատեաններ պատրաստել տալ հենց այստեղ:

Եթէ ես ազատ ժամանակ ունենամ գոնեայ կիրակի օրերը և կարողանամ մարդկանց ժամանակին տեսնել, այցելել, մեծ հաւաքածուներ նուէր կստանանք: Ահա Բագուից եկել է օր. Ալիբեգեանը, որ սպասում է այցելութեան, որպէսզի իւր հանգուցեալ եղբօր, գլխաւորապէս տեխնիկական հաւաքածուն նուիրի, բայց ժամանակ չեմ գտնում, որովհետև դժբախտաբար ես ստիպուած եմ լինում կանխապէս միշտ առաւօտեան և երեկոյեան լինել միսիայում, իսկ այնուհետև ուշ է և անյարմար, կան և այլ դէպքեր, որ չեմ կարող մի առ մի թուել:

Բացի այս բոլոր պատճառներից անհրաժեշտ է և ժամանակ, որ ես իմանամ, թէ այդտեղ ինչքան և ինչ գրքեր կան, որի համար թերևս հարկաւոր է գոնէ մի ժամանակաւոր պաշտօնեայ: Եթէ իմ Բագու գնալն անհրաժեշտ չլինէր, կուզէի ինքս գալ, սակայն իմ գալուց առաջ գէթ մի սենեակ լինէր պատրաստ գրադարանի շէնքից կամ թէկուզ այլուրէք, որ հնարաւոր լինէր կենտրոնացնել տեղիդ մեզ յատկացնելիք գրադարանները և թէկուզ համառօտ ցուցակագրել:

Ուրեմն անհրաժեշտ է մի սենեակ, այստեղ՝ հենց միսիայում կամ այս տանը, որովհետև հայ հասարակութիւնն արդէն միսիա է բերում նուէրները, նոյնիսկ վաճառելիք գրքերը. թերևս մի սենեակ Երևանում, ապա կանոնադրութեան հաստատութիւնը և պաշտադասինը, որոնց ռոճիկները յայտնի լինի որպէսզի հրաւիրելի պաշտօնեաներն իմանան իրենց ստանալիքը:

Վերատեսուի՝ Ստ. Կանայեանց
Ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 264: Բնագիր, ձեռագիր:

**ՍՏ. ԿԱՆԱՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՐՎԵՍՏԻ
ՆԱԽԱՐԱՐ Ն.ԱՂԲԱԼՅԱՆԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

2 մարտի 1920

Թիֆլիս

Կարողացայ վերջապես մի երեկոյ այցելել օր. Լ. Ալիբեկեանին և իմանալ, որ եղբօր տեխնիկական գրադարանի հետ է և օրիորդինը՝ ատամնաբուժական. բացի այդ Թիֆլիսի լաբորատորիայի վարիչ իւր եղբօր տանը կան 2 սնդուկ ևս գրքեր:

Խօսակցութիւնից պարզուեց, որ Ալիբեկեանները մտադիր են իրենց հանգուցեալ եղբօր անունով մի տեխնիկական դպրոց բանալու, ուստի առաջարկում էին գրադարանին, որ գրքերն ընդունի՝ ի ժամանակաւոր գործածութիւն, և ուրեմն դպրոցը բացուելու դէպքում վերադարձնել:

Երկար խօսակցութիւնից յետոյ խնդրեցի, որ ձևաւորի իւր ցանկութիւնը և առաջարկի գրադարանիս վարչութեան: Տակաւին չստացայ այս առաջարկը, բայց մտածելով, որ կարող են նման դէպքեր դարձեալ պատահել, ուստի յայտնում եմ Ձեզ այս՝ ի գիտութիւն և կսպասեմ Ձեր տնօրինութեան: Ինձ թւում է, եթէ գրքերը բազմաքանակ են, արժէ ընդունել, այլապէս մատենադարանը կը տրոհուի բազմաթիւ մանր գրադարանների և կարող է դժուարացնել սիստեմատիկ կարգաւորութեան գործը:

Այլև խնդրում եմ, որ մինիստրութիւնդ առաջարկի Գայեանեան դպրոցի վարչութեան, քանի որ արդէն ցրտերն անցան, որ սա իւր շէնքի ներքին յարկը թողնի մեր տրամադրութեան տակ՝ մինչև սեպտեմբեր, որովհետև եթէ նոյնիսկ յաջողուի ստանալ Ղուկասեան թանգարանի շէնքը գրքերի համար, բացի Արղութեան գրադարանից՝ այսօր մեր միսսիան կվավերացնի երկուստեք կնքուած պայմանագիրը. նախ ես յոյս ունեմ 3-4 հազար հաւաքածոներ, եթէ չասեմ գրադարաններ, նաև Լեօի գրադարանը նուէր ստանալու, իսկ որ գլխաւորն է Արղութեանի գրադարանի գեղարուեստական ճաշակով և նրբակազմ գրքերը կարելի կլինի միայն, ինձ թւում է, արկղներով տեղափոխել..... մատենադարանագէտներից մի խորհրդակցութիւն իմ հրա.... շուտով ուստի հարկաւոր է հարիւրից ասելի անհրաժեշտ գրքերը մի տեղ զետեղել, որի համար միակ յարմար և ընդարձակ շէնքը դպրոցի մեր այժմեան պահեստն է:

Վերատեսուչ գրադարանի՝ Ստ. Կանայեանց
Ֆ. 307, ց. 1, գ. 26, թ. 269: Բնագիր, ձեռագիր:

**ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՐՎԵՍՏԻ ՆԱԽԱՐԱՐ Ն.ԱՂԲԱԼՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՏ. ԿԱՆԱՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԵՒ ԱՅԼ
ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ**

6 մարտի 1920

Երևան

Ի պատասխան Ձեր ս.թ. փետրուար 24-ի N199 գրության, յայտնում եմ.

1. 50.000 ռ. փոխադրության կարգադրությունն արած է նոյեմբերին, բայց հազիվ յաջողել են փոխադրել նորերս: Փոխադրական գործը մեր ձեռքը չէ. մենք կարող ենք ամեն անգամ պնդել, խնդրել և այլն. բայց ֆինանսական մինիստրությունն ունի իր դժուարությունները՝

2. Ձեր յաւելեալ ռոճիկների մասին կարգադրություն արած է, որ փոխադրեն:

3. Որոնեցէք երկու սենեակ, որ յարմար լինի թէ՛ Ձեր պարապմունքների և թէ՛ գրքեր պահելու համար և վարձեցէք մի քանի ամսով, մինչև հնար ունենաք վերջացնելու մատենադարանին յատկացրած շէնքի յարդարումը և վերջապէս փոխադրուէր Երևան: Բնակարանի ծախսը հոգացէք գնման յատկացրած գումարից:

4. Մեր նախահաշիւը հաստատած չէ դեռևս. է՛լ ուշ կը հաստատուի: Եթէ անհրաժեշտ է, որ Դուք ունենաք մի նոր օգնական ուժ, կարող էք հրաւիրել ոչ իբր պաշտօնեայ, այլ իբր ազատ վարձուր, նրան տալիք վարձատրութիւնը դուրս գալով դարձեալ նոյն գումարից:

5. Գրքերի ցուցակ կազմել անհրաժեշտ է, բայց հարկ չկայ մի գործն երկու անելու: Եթէ սկսելու էք կազմել տալ թող կազմեն ինչպէս պէտքն է գրադարանագիտութեան պահանջների համեմատ: Առայժմ կարող են քարերի վրայ գրել. գործի սկիզբը քիչ խաւաքարտ կը պահանջէ, որ կարող էք տեղումդ գտնել ու գործն սկսել: Դա մի գործ է, որ շտապողական չէ, կարելի է նաև այստեղ անել:

6. Ամենից կարևորը գրքերի փոխադրութիւնն է: Անմիջապէս արկղներ գնեցէք, որքան որ թանկ նստեն և գրքերը մէջը տեղաւորելով մեխել տուէք ու մաս-մաս տեղափոխէք Երևան: Եթէ ամեն գնացքով մի երկու արկղ ուղարկուած լինէր այստեղ՝ հիմայ տեղ կունենային նոր գնած գրքերը դարսելու: Այդ գործում Ձեզ կարող է օգտակար լինել պ. Մինաս Մակարեանը, որին եթէ չէք ճանաչում հասցէն կարող էք իմանալ «Աշխատաւոր»-ի խմբագրատանը՝ պ. Կորիւն Ղազազեանից: Ներփակ նամակս ծրարէք և տւէք իրան. գրում եմ, որ աջակցէք փոխադրութեան գործին:

7. Արդութեան գրադարանի համար փոխադրում եմ այժմ մէկ միլիոն: Յուսով եմ, որ պարլամենտը մեծ վարկ քւեարկէ գրքերի համար: Ի՞նչ եղաւ Լեօյի գրադարանը. գրում էք, որ մտադրութիւն ունեն գնելու, այդ գրադարանը և մեզ նուիրելու: Ո՞վ է գնողը և քանիսո՞վ

են գնում: Արդյութեանի թանկարժեք գրքերը յատուկ արկղներում դարսէք և մաս-մաս ապահով ճամբով փոխադրէք Երևան:

8. Գրադարանի կանոնադրութիւնը պարլամենտումն է. պէտք է ինչ ինչ փոփոխութիւններ մտցնեն, որ մինչև այժմ չեն արած: Շտապողական չէ այդ գործը, ուստի չեմ հետապնդում, որ արագացնեն աշխատանքը: Երբ վերջապէս գաք Երևան՝ կարելի կլինի զարկ տալ նրա քննութեանը:

9. Զարմանում եմ, որ ասում էք, թէ մեզ գրադարան նւիրաբերող օր. Ալիբեկեանին տեսնել չէք կարողանում՝ ժամանակ չունենալով: Դրա համար բաւական է, թէև մէկ օր կերթաք միասիա կամ ուշ կերթաք եւ ահա Ձեզ ժամանակ: Դուք կարող էք միասիա գնալու օրեր նշանակել Ձեզ համար օրինակ շաբաթը 3-4 օր. մնացած 2-3 օրը գրախանութներն այցելել: Ի՞նչ դրութեան մէջ են եղբարք Մայիլեանների հետ ձեռնարկած գրախանութների գործը և ո՞րն է մեր մասնակցութեան չափը:

10. Այստեղ սենեակ գտնելու համար պէտք է անձամբ Երևան լինել. մարդը շատ է սենեակները քիչ և սենեակն ազատւելուն պէս գրաւում են: Յարմարութիւնների մասին մտածել Երևանում զուր է. այստեղ չկան յարմարութիւններ: Եթէ երկու բնակարան և չորս սենեակ չգտնելու պատճառով համալսարանն ստիպած եղանք փոխադրել Ալեքսանդրապոլ, կարող էք դրանից եզրակացնել, որ այստեղ յատուկ սենեակ ունենալ այցելու պաշտօնեայի համար անհնարին բան է: Մարդիկ գալիս են, մի կերպ տեղաւորում և ապա կամաց կամաց յարմարութիւն ստեղծում: Այդպէս էլ պէտք է դուք անէք:

1707. **Բուդուլյան Ա.** Մեր նյարդերը.- Թիֆլիս: Տպ. Հ. Մարտիրոսյանցի, 1900.- 109 էջ:
1708. **Բուդուլյան Ա.** Սիֆիլիս.- Թիֆլիս: Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1900.- 56 էջ:
1709. **Բուդուլյան Ա.** Վեներական ախտեր.- Թիֆլիս: Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1900.- 58 էջ:

1710. **Դոդե Ա.** Պապի ջորին.- Թիֆլիս: Տպ. Վրաց. հրատ. ընկ., 1900.- 43 էջ:
1711. **Երզնկյան Ե.** Դասագիրք կրոնի: Քրիստոնեական ուղղափառ դավանության Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո: Առաջին գրքույկ.- Թիֆլիս: Տպ. Վրաց. հրատ. ընկ., 1900.- 58 էջ:
1712. **Երզնկյան Ե.** Դասագիրք կրոնի: Քրիստոնեական ուղղափառ դավանութ. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո: Երկրորդ գրքույկի առաջին մասը.- Թիֆլիս: Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1900.- 109 էջ:
1713. **Եոկա Մ.** Ուրացողը.- Թիֆլիս: Տպ. Մ. Շարաձեի, 1900.- 64 էջ:
1714. **Ջելինսկի Ս.** Պտուղ չորացնելը.- Թիֆլիս: Տպ. Մնացական Մարտիրոսյանցի, 1900.- 52 էջ:
1715. **Թառայան Ս.** Գյոթե.- Թիֆլիս: Տպ. Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1900.- 148 էջ:
1716. **Թումանյանց Հ.** Մելիք-Բեգլար.- Թիֆլիս: Տպ. Վրաց. հրատ. ընկ., 1900.- 24 էջ:
1717. **Թումանյանց Հ.** Մելիք-Յուսուփ.- Թիֆլիս: Տպ. Մ. Շարաձեի, 1900.- 32 էջ:
1718. **Լալայան Ե.** Գանձակի գավառ: Հտ. Ա.- Թիֆլիս: Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1900.- 152 էջ:
1719. Խորհրդածություններ Հիսուս Քրիստոսի չարչարանքների և մահվան մասին.- Թիֆլիս: Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1900.- 199 էջ:
1720. **Կուսիկյան (Կ.), Սարգսյան (Լ.),** Մայրենի խոսք.- Թիֆլիս: Տպ. Վրաց. հրատ. ընկ., 1900.- 199 էջ:
1721. 1901 Ս. Էջմիածնի տասնակեցերորդ դարադարձը.- Թիֆլիս: Տպ. Մ. Շարաձեի, 1900.- 48 էջ:
1722. Հաշիվ Թիֆլիսի Տափի թաղի (Քամոյենց) Ս. Գեորգ եկեղեցվո երեցփոխ Կ. Ս. Ջալալյանի օրերով. սկսյալ 1895 թ. հունիս 1 – 1899 թ. դեկտեմբերի 16-ին.- Թիֆլիս: Տպ. Մնացական Մարտիրոսյանցի, 1900.- 4 էջ:
1723. **Հյուկո Վ.** Արդար ծերունի.- Թիֆլիս: Տպ. Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1900.- 81 էջ:
1724. **Ճանիկյան Հ.** Դժոխք: Հտ. Բ. Մասն Բ.- Թիֆլիս: Տպ. Մ. Վարդանյանի, 1900.- 90 էջ:
1725. **Մալխասյանց Ս.** Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի յոթանասուն և հինգամյա գոյության.- Թիֆլիս: Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1900.- 214 էջ:
1726. **Մամին-Սիբիրյակ Դ.** Պառավ ծիտը.- Թիֆլիս: Տպ. Մնացական Մարտիրոսյանցի, 1900.- 18 էջ:
1727. **Մելիք-Շահնազարյան Կ.** Վազի մշակությունը.- Թիֆլիս: Տպ. Մնացական Մարտիրոսյանցի, 1900.- 206 էջ:

1728. Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի 1898/9 ուսումն տարվա տեղեկագիրը.- Թիֆլիս: Տպ. Մնացական Մարտիրոսյանցի, 1900.- 24 էջ:
1729. **Շահագիզ Ե.** Մկրտիչ Հովսեփյան էմին.- Թիֆլիս: Տպ. Մ. Շարաձեի, 1900.- 270 էջ:
1730. **Շչեգլով Ի.** Դոկտոր Թաթոս.- Թիֆլիս: Տպ. Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1900.- 44 էջ:
1731. **Պարոնյան Հ.** Երկասիրություններ. Գ.- Թիֆլիս: Տպ. Մ. Շարաձեի, 1900.- 223 էջ:
1732. **Պարոնյան Հ.** Հոսիոսի ձեռատետրը.- Թիֆլիս: Տպ. Մ.Դ. Ռոտինյանցի, 1900.- 438 էջ:
1733. **Պարոնյան Հ.** Մեծապատիվ մուրացկանները.- Թիֆլիս: Տպ. Մ.Դ. Ռոտինյանցի, 1900.- 163 էջ:
1734. **Պետրովսկի Ա.** Ամենահեշտ միջոց հայերենի միջոցով սովորել, կարդալ, գրել և խոսել ռուսերեն.- Թիֆլիս: Տպ. Մովսես Վարդանյանի, 1900.- 55 էջ:
1735. **Պոռշյան Պ.** Հունոն.- Թիֆլիս: Տպ. Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1900.- 317 էջ:
1736. **Պոտապենկո Ի.** Ֆարաջավոր ուսանողը.- Թիֆլիս: Տպ. Մ.Դ. Ռոտինյանցի, 1900.- 75 էջ:
1737. **Ջավախեցի (Տեր-Գրիգորյան Դ.),** Ջավախքի աղետը.- Թիֆլիս: Տպ. Մնացական Մարտիրոսյանցի, 1900.- 32 էջ:
1738. **Ջիվանի [Աշուղ],** Ջիվանու քնարը: Հտ. 1.- Թիֆլիս: Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1900.- 119 էջ:
1739. **Ռոտինյան Վ.** Գործնական խոհարարական դասագիրք.- Թիֆլիս: Տպ. Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1900.- 214 էջ:
1740. **Սահակյան Ս.** Դասատետր կրոնի: Գ տարի.- Թիֆլիս: Տպ. Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1900.- 62 էջ:
1741. **Ստանիվկովիչ Կ.** Մաքսիմկա.- Թիֆլիս: Տպ. Մովսես Վարդանյանի, 1900.- 58 էջ:
1742. **Վազներ,** Առակներ բնական պատմությունից.- Թիֆլիս: Տպ. Հ. Մարտիրոսյանցի, 1900.- 30 էջ:
1743. **Վազյան,** Լիակատար հեշտ միջոց ռուսերեն լեզվով կարդալ, գրել և խոսել սովորելու հայոց լեզվի օգնությամբ.- Թիֆլիս: Տպ. Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1900.- 64 էջ:
1744. **Վարդանյան Տ.** Ժողովրդական անգիր բանաստեղծություններ: Մաս 1-3.- Թիֆլիս: Տպ. Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1900.- 123 էջ:
1745. **Վորոնցովա Ի.** Մագնիս.- Թիֆլիս: Տպ. Հովհաննես Մարտիրոսյանցի, 1900.- 42 էջ:
1746. Տեղեկագիր 1899 թվի գործունեության.- Թիֆլիս: Տպ. Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1900.- 36 էջ:
1747. **Տեր-Գաբրիելյան Գ.** Քրիստոնեական վարդապետություն Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո.- Թիֆլիս: Տպ. Հ. Մարտիրոսյանցի, 1900.- 86 էջ:

- 1748. Տեր-Ղևոնդյան Ն.** Մայրենի լեզու: Առաջին տարի: Այբբենարան և սկզբնական ընթերցարան մանուկների համար.- Թիֆլիս: Տպ. Մ. Մարտիրոսյանցի, 1900.- 89 էջ:
- 1749. Տեր-Միքելյան Ա.** Հայաստանյայց սուրբ եկեղեցու քրիստոնեականը.- Թիֆլիս: Տպ. Մ. Շարաձեի, 1900.- 576 էջ:
- 1750. Տեր-Միքելյան Ա.** Ուսումն Սուրբ գրոց.- Թիֆլիս: Տպ. Մ. Շարաձեի, 1900.- 231 էջ:
- 1751. Ուայթ Է.** Խղճով դատաստան.- Թիֆլիս: Տպ. Վրաց. հրատ. ընկ., 1900.- 56 էջ:
- 1752. Քերական կամ այբբենարան.-** Թիֆլիս: Տպ. Մ.Դ. Ռոտինյանցի, 1900.- 32 էջ:
- 1753. Օժեշկո Է.** Գռնիկը.- Թիֆլիս: Տպ. Մնացական Մարտիրոսյանցի, 1900.- 214 էջ:
- 1754. Օժեշկո Է.** Եասի արկածքները.- Թիֆլիս: Տպ. Մ. Մարտիրոսյանցի, 1900.- 40 էջ:
- 1755. Օժեշկո Է.** Յուլիանկա.- Թիֆլիս: Տպ. Վրաց. հրատ. ընկ., 1900.- 64 էջ:
- 1756. Ֆլամմարիոն Կ.** Ուրանիա.- Թիֆլիս: Տպ. Մ. Մարտիրոսյանցի, 1900.- 376 էջ:

**ԱՆԹՎԱԿԻՐ, ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ՉՆՇՎԱԾ ԵՎ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԵՐՆ ԸՆԿԱԾ ԳՐՔԵՐ**

- 1757.** Թուղթ յայտարարութեան նոր կուսակալին Պասկևիչի, Պարսից պատերազմի մասին.- Թիֆլիս: Տպ. Ներսիսյան դպրոցի:
- 1758.** Կանոններ Ղրուզինո Իմերետինսկի գուբերնիայի նահանգական շտապից դուրս ելած քաղաքներումը մուլքերից ստանալի մատախիլները կարգելու համար (Ռուս. վրաց. հայ. և ադրբ. լեզուներով).- Թիֆլիս: Տպ. Հ. և Դ. Արզանյանցների, 47 էջ:

Վերջ

ԲԱՅՐԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ Ն.

Եզիպտոսի հայկական թեմական խորհրդի անդամ,
հասարակական գործիչ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

2012 – 2019

Յաւելուած՝ Տոքթ. Սուրեն Ն. Պայրամեանի
«ՀԱՅ ԳԻՐՔԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ 1888-2011» հատորին

2012

1. ԳԷՈՐԳԵԱՆ ՌԷՅՄՈՆ (ՅԱՐՈՒԹԻՒՆ)

Հինգհարիւրամեակ Հայկական Հրատարակութեան

Հայ Գիրքի Տպագրութեան 500-ամեակին Առթիւ

Ֆրանսերէն Բնագրէն Թարգմանեց՝ Անայիս Ճիզմէճեան

Յաւելուած՝ Գահիրէի ՀԲԸՄ-ի «Տեղեկատու» Պարբերաթերթի

թիւ 64 , Յուլիս 2012

Գահիրէ , Տպ. Նուպար , 2012 , 12 էջ , /18,1X12,7/ - /23,9X16,9/ սմ.

2. ԹԷՐԶԵԱՆ ՊԵՐՃ

Գահիրէի ՀԲԸՄ-ի Սաթենիկ Չազըր Հիմնադրամի

Հրատարակչական Գործունէութիւնը

(Հայ Գիրքի Տպագրութեան 500-ամեակին Առթիւ)

Յաւելուած՝ Գահիրէի ՀԲԸՄ-ի «Տեղեկատու» Պարբերաթերթի

թիւ 63 , Ապրիլ 2012

Հրատարակութիւն՝ Տէր Էմ Տիկին Պերճ Թերզեան

Գահիրէ , Տպ. ??? , 2012 , 44 էջ , /17,7X12,4/ - /22,9X16,3/սմ.

3. ԹԷՐԶԵԱՆ ՊԵՐՃ

ՀՀ Եզիպտոսի Դեսպանատան Ծննդոցը

Ակնարկ Քսանամեայ Հեռաւորութենէ

Հրատարակութիւն՝ Թերզեան Պերճ

Գահիրէ , Տպ. Էլ Աֆրիքէյա (Աֆրիքըն Փրէս) , 2012 ,

92 էջ , /18,9X13,1/ - /24,1X16,8/սմ.

4. ՊԱՅՐԱՄԵԱՆ ՍՈՒՐԵՆ Ն. ՏՈՔԹ. (կազմեց)

Հայ Գիրքը Եզիպտոսի Մէջ 1888-2011 - Մատենագիտական Յուցակ

Տպագրություն՝ Գահիրեի Ազգային Առաջնորդարանի

Բօլ Քիլիտճեան Հրատարակչական Ֆոնտի Միջոցներով
Գահիրե , Տպ. Նուպար , 2012 , 290 էջ , /17,8X11/ - /25,2X17,6/սմ.

5. ՏՆԿՃԵԱՆ ՆՈՒՊԱՐ (Հաւաքեց)

Հոգեզմայլ էջեր

Հրատարակություն՝ Գալուստեան Ազգային Վարժարան
Գահիրե , Տպ. ??? , 2012 , 55 էջ , /20,7X14,6/սմ.

2013

6. *Արամ Խաչատուրեան Ծննդեան 110-ամեակ*

Յոբելենական Համերգ (Յայտագիր-գրքոյկ)

Գահիրեի Ազգային Առաջնորդարանի «ԱՐԱՔՍ» Երգչախումբին
Պատրաստություն՝ Միհրան Ղազելեան
Հրատարակություն՝ «Նուպար Տպագրատուն»
Գահիրե , Տպ. ??? , 2013 , 80 էջ , /16,5X10,9/ - /21X15,3/սմ.

7. *Զանգեզուր Պարախումբի Ելոյթ*

(Յայտագիր-Պրակ)

Կազմակերպություն՝ Կոկանեան Սրահ
Եւ Հայ Գեղարուեստասիրաց Միություն
Համակարգչային Ձեւաւորում՝ Շահէ Լուսարարեան
Յայտագրի Հրատարակություն՝ «Նուպար Տպագրատուն»
Գահիրե , Տպ. Նուպար , 2013 , 22 էջ ,
Պատկերազարդ (գունաւոր) , /14,3X20,3/սմ.

8. ՊԱՅՐԱՄԵԱՆ ՍՈՒՐԷՆ Ն. ՏՈՔԹ. (պատրաստեց)

Հայ Մամուլն Ու Գրատպութիւնը Եզիպտոսի Մէջ

Եւ Հայ Գրատպութեան 500-ամեակի 1512-2012 Ոգեկոչումը

Գահիրեի Մէջ

Գահիրե , Տպ. Նուպար , 2013 , 48 էջ , /19,5X12,6/ - /26,5X18,3/ սմ.

9. Ս. Ն. Պ. (համադրություն - պրակ)

Յ Ո Ւ Ս Ս Բ Ե Ր 100-ամեակ 1913-2013

Եզիպտահայ Մամուլի Ցուցահանդէսին Առիթով
Հրատարակություն՝ «Յուսաբեր» Մշակ. Ընկերակցություն - 1913
Գահիրե , Տպ. Նուպար , 2013 , 24 էջ , /21,1X14,6/ - /26,5X18,1/ սմ.

10. «ՎԵՐԵԼՔ» Ապրիլեան - (Ապրիլ 2013)

Աշակերտական Պարբերաթերթ

Հրատարակություն՝ Գալուստեան-Նուպարեան

Ազգային Վարժարանի (Հելիոպոլիս-Գահիրե)

Գահիրե, Տպ. ???, 2013, 25 էջ, Պատկերազարդ-Գունաւոր, /13,9X20,2/սմ.

2014

11. «Արաքս» Երգչախումբ 10-ամեակ - Յոբելենական Երգահանդես

(Յայտագիր-Գրքոյկ)

Կազմակերպություն՝ Գահիրեի Ազգային Առաջնորդարան

Աջակցություն՝ Եգիպտոսի Մօտ Հ.Հ. Դեսպանություն

Գրքոյկի Ձեւաւորում՝ Շահէ Լուսարարեան

Գահիրե, Տպ. Նուպար, 2014, 56 էջ, Պատկերազարդ (գունաւոր), /17x23,7/սմ.

12. Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարանի

«Արցախ» Պատանեկան Երգչախումբ

Մասնակցություն «Իմ Հայաստան»

Համահայկական Երկրորդ Փառատօնին (Հայաստան)

Ծրագիր-Պրակ (27 Յուլիս – 8 Օգոստոս 2014)

Գահիրե, Տպ. ???, 2014, 36 էջ, Պատկերազարդ (գունաւոր), /14,3X20,7/սմ.

13. Զանգեզուր Պարախումբի Ելոյթ

(Յայտագիր-Պրակ)

Կազմակերպություն՝ Կոկանեան Սրահ

Էւ Հայ Գեղարուեստասիրաց Միություն

Գահիրե, Տպ. Նուպար Տիճիթըլ, 2014, 21 էջ,

Պատկերազարդ (գունաւոր), /14,5X20,3/սմ.

14. ԹԷՐԶԵԱՆ ՊԵՐՃ

«ԱՐԵՒ»ի Արաբերէն Ամսօրեայ Յաւելուածը

Հրատարակություն՝ Թերզեան Պերճ

Գահիրե, Տպ. Էլ Աֆրիքէյա (Աֆրիքըն Փրէս), 2014

132 էջ, /18,4X13/ - /23,9X16,9/սմ.

15. ԹԷՐԶԵԱՆ ՊԵՐՃ

Պատասխան Առ Որ Անկ Է

«ԱՐԵՒ»ի 24 Յունիս 2014-ի թիւին մէջ

Կ.Ե.ի «ԱՐԵՒ»ի Արաբերէն Ամսօրեայ Յաւելուածը խորագրով

լոյս տեսած յօդուածին առիթով

Հրատարակութիւն՝ Թերզեան Պերճ

Գահիրէ , Տպ. Էլ Աֆրիքէյա (Աֆրիքըն Փրէս) , 2014 , 60 էջ ,

/18,5X13,1/ - /24X16,8/սմ.

16. ԹԷՐԶԵԱՆ ՊԵՐՃ - ՏԷՕՎԼԷԹԵԱՆ ԱՐԱՔՍԻ

Սպիտակի Երկրաշարժը , Եգիպտոսի ՀԲԸՄ-ը Եւ Եգիպտահայ

Համայնքը (Երկրաշարժի 25-ամեակին Առիթով)

Յաւելուած՝ Գահիրէի ՀԲԸՄ-ի «Տեղեկատու» Պարբերաբերթի

թիւ 70 , Յունուար 2014

Գահիրէ , Տպ. Նուպար , 2014 , 32 էջ , /18,3X12,8/ - /22,9X16,5/սմ.

17. Շարլ Ազնաւուր Ծննդեան 90-ամեակ

Տօնական Համերգ «Կեանք Մը Ծով Սիրոյ» (Յայտագիր-գրքոյկ)

Կատարողութիւն՝

Գահիրէի Ազգային Առաջնորդարանի «ԱՐԱՔՍ» Երգչախումբ

Եւ Երաժիշտ-թարգմանիչ Պերճ Թիւրապեան

Գրքոյկի պատրաստութիւն՝ Միհրան Ղազէլեան

Հրատարակութիւն՝ Նուպար Տիճիթըլ

Գահիրէ , Տպ. ??? , 2014 , 54 էջ , /20,4X11,9/ - /24X16,8/սմ.

2015

18. Զօրավար Անդրանիկ Ծննդեան 150-ամեակ

Յորելենական Հանդէս (Յայտագիր-գրքոյկ)

(Հայոց Ցեղասպանութեան 100-րդ Տարելիցին Առիթով)

Կատարողութիւն՝ ԾԻԱԾԱՆ Մանկական Երգչախումբ

Կազմակերպութիւն՝ ՀԲԸՄ-Գահիրէի

Յայտագիր-գրքոյկի պատրաստութիւն՝ Միհրան Ղազէլեան

Գահիրէ , Տպ. ??? , 2015 , 32 էջ , /16,8X11,4/ - /20,1X14/սմ.

19. ԹԷՐԶԵԱՆ ՊԵՐՃ

Սրտցաւ Կոչ Հայոց Լեզուին Համար

Հրատարակութիւն՝ Թերզեան Պերճ

Գահիրէ , Տպ. Էլ Աֆրիքէյա (Աֆրիքըն Փրէս) , 2015

40 էջ , /17,9X13/ - /23,9X17/սմ.

20. ՅԱԿՈԲԵԱՆ-ԿԱՆԻՄԵԱՆ ԱՆԺԻԿ

Մեծ Եղեռնի Վկայության Արձանագրություններ

Յաւելուած՝ Գահիրէի ՀԲԸՄ-ի «Տեղեկատու» Պարբերաբերթ

թիւ 75 , Ապրիլ 2015

Գահիրէ , Տպ. Նուպար , 2016 , 24 էջ , /18,2X12,9/ - /23,7X16,8/սմ.

21. «ՎԵՐԵԼՔ» - (թիւ 3, Ապրիլ 2015)

Աշակերտական Պարբերաբերթ

Հրատարակութիւն՝ Գալուստեան-Նուպարեան

Ազգային Վարժարանի (Հելիոպոլիս-Գահիրէ)

Գահիրէ , Տպ. ??? , 2015 , 29 էջ , Պատկերազարդ-Գունաւոր , /20,8X29,2/սմ.

2016

22. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ (խմբագրեց եւ հաւաքեց)

Թէոթիկի Նամակները Արարատ Քրիսեանին

«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաբերթի Յաւելուած Գ.

Գահիրէ , Տպ. ??? , 2016 , 61 էջ , /18X12,9/ - /23,7X16,4/սմ.

23. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ

Փարիզի Քոմիւնը , Կայսրութիւնը Եւ Հայոց Ցեղասպանութիւնը

Մարքսիստական-Անարշիստական Ընթերցում Մը

(Փարիզի Քոմիւնի 145-ամեակին առիթով)

«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաբերթի Յաւելուած Դ.

Գահիրէ , Տպ. ??? , 2016 , 202 էջ , /18,2X13/ - /23,2X16,3/սմ.

24. Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարան

2015-2016 Տարեշրջանի Շրջանաւարտներու Հանդէս –

«Հայաստան 25-ամեակ» - (Յայտագիր-Պրակ)

Գահիրէ , Տպ. ??? , 2016 , 16 էջ , Պատկերազարդ (գունաւոր) , /14,5X20,8/սմ.

25. ԵՐԱՄԵԱՆ ՄԱՐՈՒՇ (պատրաստեց)

Գիտրակս

Գալուստեան-Նուպարեան Վարժարանի

Նախակրթարանի Ե.կարգի համար

Գահիրե , Տպ. ??? , 2016 , 36 էջ , /16,9X23,2/սմ.

26. ԶԷՔԻԵԱՆ ՀԱՅՐ ԼԵԻՈՆ (դասախօսություն)

Մեծ Եղեռնի Հարիւրամեակ՝ Յիշողութիւն Եւ Մարտահրաւր

Երկու Խօսք՝ Հայկ Աւագեան

«ԶԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յաւելուած Բ.

Գահիրե , Տպ. ??? , 2016 , 40 էջ , /18,3X13,1/ - /23,6X16,2/սմ.

27. ԹԷՐԶԵԱՆ ՊԵՐՃ (համադրեց)

Տիգրան Պապիկեան (Դաստիարակ – Տնօրէն 1908-1975)

Յաւելուած՝ Գահիրեի ՀԲԸՄ-ի «Տեղեկատու» Պարբերաթերթ

թիւ 80 , Յուլիս 2016

Հրատարակութեան Հովանաւոր՝ Տէր եւ Տիկին Պերճ եւ Սեդա Թերզեաններ

Գահիրե , Տպ. Էլ Աֆրիքէյա (Աֆրիքըն Փրէս) , 2016

64 էջ , /18X12,8/ - /22,9X16,4/սմ.

28. Խաչատուր Աւետիսեան Ծննդեան 90-ամեակ

Յորելենական Համերգ (Յայտագիր-գրքոյկ)

Կազմակերպութիւն՝ Գահիրեի Ազգային Առաջնորդարան

Մասնակցութիւն՝ Գահիրեի Ազգային Առաջնորդարանի

ԱՐԱՔՍ Երգչախումբ եւ

Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարանի

ԱՐՅԱԽ Երգչախումբ

Յայտագրի եւ գրքոյկի պատրաստութիւն՝ Միհրան Ղազելեան

Հրատարակութիւն՝ Գահիրեի Ազգային Առաջնորդարանի

Գահիրե , Տպ.Նուպար Տիճիրըլ , 2016 , 40 էջ , /20,8X12,3/ - /23,9X16,9/սմ.

29. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան

110-ամեակի Հանդիսութիւն 1906-2016 (Յայտագիր-Պրակ)

Գահիրե , Տպ. ??? , 2016 , 8 էջ , /16,9X24,3/սմ.

30. Չորս Հարցազրոյց Հրանդ Տինքի Հետ

Յառաջարկ՝ Հայկ Աւագեան

«ԶԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յաւելուած Ա.

Գահիրե , Տպ. ??? , 2016 , 59 էջ , /17,7X12,8/ - 23,5X16 սմ.

31. Մարտարապատ Պարախումբի Համոյթ (Յայտագիր-պրակ)

Կազմակերպութիւն՝ «Յուսաբեր» Մշակութային Ընկերակցութիւն

Գահիրե , Տպ. ??? , 2016 , 8 էջ , /20,7X14,3/սմ.

2017

32. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ (հաւաքեց)

Papasian & Co. Երաժշտական Ընկերությունը

(ըստ ազդագիրներու եւ յայտագիրներու)

«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յաւելում Ե.

Գահիրէ , Տպ. ??? , 2017 , 317 էջ , /16,8X12,4/ - 20,1X15,8 սմ.

33. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ (հաւաքեց)

Աղեքսանդրիոյ Հայկական Երաժշտական Կեանքի Ուրուագիծ

(ըստ ազդագիրներու եւ յայտագիրներու)

«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յաւելում Զ.

Գահիրէ , Տպ. ??? , 2017 , 201 էջ , /17,2X13,2/ - 23,5X16,1 սմ.

34. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ (հաւաքեց եւ պատրաստեց)

Դաշնակահար Եւ Մանկավարժ Նուարդ Տամատեանի

Կեանքի Ուղեգրությունը

(ըստ վաւերաթուղթերու եւ փաստագրություններու)

«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յաւելում Ը.

Գահիրէ , Տպ. ??? , 2017 , 546 էջ , /17,2X13,1/ - /23,6X16,1/սմ.

35. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ (հաւաքեց եւ պատրաստեց)

Խմբավար Եւ Երաժշտահան Հայկ Սարգիսեանի

Եզրպտոսի Շրջանի Գործունէութեան Ուրուագիծ

(ըստ վաւերաթուղթերու եւ փաստագրություններու)

«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յաւելում Է.

Գահիրէ , Տպ. ??? , 2017 , 561 էջ , /17,3X13,4/ - /23,7X15,8/սմ.

36. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ (պատրաստեց)

Ուրուագիծ Գոհար Գասպարեանի

Եզրպտոսի Շրջանի Գործունէութեան (1940-1948)

«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յաւելում Թ.

Գահիրէ , Տպ. ??? , 2017 , 88 էջ , /17,4X13,2/ - /23,7X16,2/սմ.

37. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ (հաւաքեց)

Տիրան Կարապետեան - Զօդուածներ Իր Մասին -

Նկարներու Աւանդ (Ծննդեան 135-ամեակին Առիթով)

«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յանվար Ժ.

Գահիրե, Տպ.??? , 2017 , 73 էջ (38ը՝ գունաւոր) , /17,4X13,2/ - /23,7X16,2/սմ.

38. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ (պատրաստեց)

Վանիա Էքսերճեան - Բազմերանգ Աշխարհ Մը

Համակ Կենսունակութեամբ

«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յանվար ԺԱ.

Գահիրե, Տպ.??? , 2017 , 53 էջ (6ը՝ արաբերէն) , /17,4X13,2/ - /23,7X16,2/սմ.

39. Գուսան Աշոտ 110-ամեակ - Ալեքսէյ Հեքիմեան 90-ամեակ

Գուսանական եւ Էսթրատային Երգի Երեկոյթ (Յայտագիր-գրքոյկ)

Կատարողութիւն՝

Գահիրեի Ազգային Առաջնորդարանի «Արաքս» Երգչախումբ

Գրքոյկի պատրաստութիւն՝ Միհրան Ղազելեան

Հրատարակութիւն՝ Գահիրեի Ազգային Առաջնորդարան

Գահիրե, Տպ.Նուպար Տիճիրըլ, 2017, 40 էջ , /16,6X10,8/- /21X14,9/սմ.

40. ԵՐԱՄԵԱՆ ՄԱՐՈՒՇ (համադրեց)

Ազգային Պատմութիւն - Նորագոյն Շրջան - Ա.Է. Բ. Երկրորդական

Հրատարակութիւն՝ Գալուստեան-Նուպարեան Ազգ. Վարժարան

Գահիրե , Տպ. ??? , 2017 , 88 էջ , /19,9X13,4/ - /25,2X17,5/սմ.

41. ԵՐԱՄԵԱՆ ՄԱՐՈՒՇ (պատրաստեց)

Միջին Գիրեր (Միջին Երեցեան)

Հրատարակութիւն՝ Գալուստեան-Նուպարեան Ազգ. Վարժարան

Գահիրե , Տպ. ??? , 2017 , 44 էջ , /16,9X23,2/սմ.

42. Զանգեզուր Պարախումբի Ելոյթ -

(Յայտագիր-Պրակ)

Ներկայացում՝ Կոկանեան Սրահ

Յայտագրի Ձեւաւորում՝ Լալա Նիկոլեան - Շահէ Լուսարարեան

Յայտագրի Հրատարակութիւն՝ «Նուպար Տպագրատուն»

Գահիրե , Տպ. Նուպար Տիճիրըլ , 2017 , 17 էջ ,

Պատկերագարդ (գունաւոր) , /14,5X20,4/սմ.

43. ԹԷՐԶԵԱՆ ՊԵՐՃ

Գահիրեի Համալսարանի Հայագիտական

Ուսումնասիրութիւններու Կեդրոնը

Հրատարակութիւն՝ Թերզեան Պերճ

Գահիրե , Տպ. Էլ Աֆրիքեյա (Աֆրիքըն Փրես) , 2017

52 էջ , /18,7X13,1/ - /24X17/սմ.

44. ՄԽՃԵԱՆ-ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ՇԱՔԷ (պատրաստեց)

Իմաստուն Խօսքեր - Ժողովրդական Աստվածներ - Մտածումներ

Խորհուրդներ եւ Առաժներ

Գահիրե , Տպ. Նուպար Տիճիրըլ , 2017 , 108 էջ , /19,6X12,7/ - /23,8X16,8/սմ.

45. ՊԱՅՐԱՄԵԱՆ ՍՈՒՐԷՆ Ն. ՏՈՔԹ. (համադրեց)

Հայկական Համայնքային Կառույցները Եզրիպտոսի Մէջ

Տպագրութիւն՝ Գահիրէի Ազգային Առաջնորդարանի Միջոցներով

Գահիրե , Տպ. Նուպար , 2017 , 314 էջ , /18,9X12,3/ - /25X17,6/սմ.

46. «ՎԵՐԵԼԷ» - (թիւ 4, Ապրիլ 2017)

Աշակերտական Պարբերաբերթ

Հրատարակութիւն՝ Գալուստեան-Նուպարեան

Ազգային Վարժարանի (Հելիոպոլիս-Գահիրե)

Գահիրե , Տպ. ??? , 2017 , 112 էջ (Հայ.-Արաբ.-Անգլ.-Ֆրանսերէն)

Պատկերազարդ-Գունաւոր , /20,8X29,5/սմ.

2018

47. ԱԼԵՔՍԱՆՏՐ ՍԱՐՈՒԽԱՆ

Յուշեր

(Ինչպէ՞ս Եզրիպտոս Եկայ և Ինչպէ՞ս Երգիծանկարիչ Եղայ)

Հրատարակուած՝ Ալ. Սարուխանի ծննդեան 120-ամեակին առթիւ

Հրատարակութիւն՝ Հայ Ազգային Հիմնադրամի

Կողքի ձեւաւորում՝ Վրէժ Քասունի

Գահիրե , Տպ. Նուպար Տիճիրըլ , 2018 , 150 էջ , /10X15,7/ , /12,9X19,9/սմ.

48. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ (պատրաստեց)

Արմենակ Շահմուրատեան. Ժամանակագրութիւն,

յօդուածներ , երգացանկ

«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաբերթի Յաւելուած ԺԸ.

Գահիրե , Տպ. ??? , 2018 , 580 էջ , /12,4X15,5/ , /16,1X23,5/սմ.

49. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ

Արփիար Արփիարեանի Մպանութիւնը

Ա.Արփիարեանի Սպանութեան 110-ամեակին առիթով Ա.
«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յանդիման ԺԲ.
Գահիրէ , Տպ. ??? , 2018 , 155 էջ , /17,4X13,2/ - 23,7X16,2 սմ.

50. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ (պատրաստեց)

Արփիար Արփիարեանի Լոնտոնեան Թղթածրարը Գահիրէի մէջ
Ա.Արփիարեանի Սպանութեան 110-ամեակին առիթով Բ.
«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յանդիման ԺԳ.
Գահիրէ , Տպ. ??? , 2018 , 497 էջ , /17,4X13,2/ - 23,7X16,1 սմ.

51. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ (պատրաստեց)

Գոհարիկ Ղազարոսեան. Յանկ ստեղծագործութիւններու ,
սկաւառակագրութիւն
«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յանդիման ԺԹ.
Գահիրէ , Տպ. ??? , 2018 , 160 էջ , /12,4X15,6/ , /15,9X23,6/սմ.

52. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ

Թաւշեայ Յեղափոխութիւն Հայաստանի Մէջ - Ա. փուլ (13-23 Ապրիլ 2018)
«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յանդիման ԺԶ.
Գահիրէ , Տպ. ??? , 2018 , 32 էջ , /13,2X17,2/ , /16,1X23,5/սմ.

53. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ

Թաւշեայ Յեղափոխութիւն Հայաստանի Մէջ
Բ. փուլ (25 Ապրիլ - 1 Մայիս 2018)
«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յանդիման ԺԷ.
Գահիրէ , Տպ. ??? , 2018 , 58 էջ , /13,2X17,2/ , /16,1X23,5/սմ.

54. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ (հաւաքեց)

Մարդը Ընդդէմ Մարդու - Մահափորձեր Եւ Սպանութիւններ
Հայկական Օրինակով (1890-1908)
Ա.Արփիարեանի Սպանութեան 110-ամեակին առիթով Գ.
«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յանդիման ԺԴ.
Գահիրէ , Տպ. ??? , 2018 , 169 էջ , /17,4X13,2/ - /23,7X16,2/սմ.

55. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ (հաւաքեց)

2008 Մարտ 1-ը Ըստ LRA GİR.AM-ի , A1+-ի Եւ ՀԵՏՔի
(10-ամեակին առիթով)
«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յանդիման ԺԵ.

Գահիրե , Տպ. ??? , 2018 , 625 էջ , /16X12,3/ - /23,4X16,2/սմ.

56. *Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարան
2016-2017 Տարեշրջանի Շրջանաւարտից Հանդէս –* (Յայտագիր-Պրակ)
Գահիրե , Տպ. ??? , 2018 , 12 էջ , /14,5X20,8/սմ.

57. *Եգիպտահայ Հրատարակութիւններ 2012-2018 -* (պրակ)
Յաւելուած՝ «Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ 1888-2011» հատորին
Պատրաստութիւն՝ Տոքթ.Սուրեն Ն.Պայրամեան
Գահիրե , Տպ. ??? , 2018 , 8 էջ , /11,6X15,6/ , /14,2X18,6/սմ.

58. *Եգիպտոսի Հայերը - Գիտածոյով -* Յայտագիր
Conference On ARMENIANS OF EGYPT
Կազմակերպութիւն՝
Եգիպտոսի Հայոց Թեմ - Գահիրէի Ազգային Առաջնորդարան
Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի
Ուսումնասիրութեան Կեդրոն
Գահիրե , Տպ. ??? , 2018 , 32 էջ , Հայերէն եւ Անգլերէն ,
/11,7X16,8/ - /14,5X20,8/սմ.

59. ԵՐԱՄԵԱՆ ՄԱՐՈՒՇ (պատրաստեց)
Ընկերներս եւ Ես - Գիտրակ Բ.
Վերին Կարգերու Աշակերտներուն Համար
Հրատարակութիւն՝ Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարանի
Գահիրե , Տպ. ??? , 2017-2018 , 48 էջ , /17,3X24,2/սմ.

60. ԵՐԱՄԵԱՆ ՄԱՐՈՒՇ (խմբագրեց)
Կանաչ Խնձորներ
«Փոքրիկ Գրողներու Ակումբ»ի Աշակերտական Գրութիւններ
Հրատարակութիւն՝ Գալուստեան-Նուպարեան Վարժարանի
Գահիրե , Տպ. ??? , 2018 , 44 էջ , /19,4X12,8/ - /23,6X16,6/սմ.

61. ԵՐԱՄԵԱՆ ՄԱՐՈՒՇ
Ուրուանկար 1965-1995 Թուականներու Սփիւռքահայ Բանաստեղծութեան
«ԶԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յաւելուած Ի.
Գահիրե , Տպ. ??? , 2018 , 182 էջ , /12,4X15,7/ , /15,9X23,7/սմ.

62. *Վահան Թէքէեանի Ծննդեան 140-ամեակ (1878-1945*
Յոբէլեակական Հանդիսութեան Պրակ

Կազմակերպություն՝ Կոկանեան Սրահի Մշակութային Յանձնախումբ
Պատրաստություն՝ Արփի Ս.Խաչերեան
Գահիրե , Տպ. Նուպար Տիճիրժլ , 2018 , 9 էջ , /13,2X19/ , /15,6X22,4/սմ.

63. «ՎԵՐԵԼՔ» - (թիւ 5, Ապրիլ 2018)

Աշակերտական Պարբերաթերթ (5-րդ տարի)
Հրատարակություն՝ Գալուստեան-Նուպարեան
Ազգային Վարժարանի (Հելիոպոլիս-Գահիրե)
Գահիրե , Տպ. ??? , 2018 , 136 էջ (Հայ.-Արաբ.-Անգլ.-Ֆրանսերեն)
Պատկերազարդ-Գունաւոր , /16X23/ , /20,7X29,2/սմ.

2019

64. ԱԼՊՕՅԱՃԵԱՆ ԱՐՇԱԿ

Պատմություն Հայ Ազատագրական Շարժման - Դասախօսություններու Շարք
Հրատարակութեան պատրաստեց՝ Հայկ Աւագեան
«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յաւելուած ԻԶ.
Գահիրե , Տպ. ??? , 2019 , 101 էջ , /12,3X16/ , /15,9X23,4/սմ.

65. ԱՂԱԹՕՆ Ե.Գ.

Պոլսոյ 1860-ի եւ Գահիրէի 1906-ի Բարեգործականներուն
Ծնունդը Եւ Պատմութիւնը
Ա.Տպագրութիւն՝ «Հայ Դպրոց» Պրնէէն եւ Ժընէվ, Զուիցերիա
Բ.Տպագր. Խմբագիր՝ Մարուշ Երամեան
Բ.Տպագր.՝ Գահիրէի Հ.Բ.Ը.Միութեան
Սաթենիկ Ճ.Զազըր Հիմնադրամին միջոցներով
Բ.Տպագր. , Գահիրե , Տպ. ??? , 2019 , 96 էջ , /12X18/ , /15,6X22,6/սմ.

66. ԱՐԻՍՏԱԿԵԱՆ ԵԻԳԵՆԵԱ

Յուշեր Գաղութահայ Կեանքից
Տեքստի կազմող, առաջաբանի
եւ ծանօթութիւնների հեղինակ՝ Արծուի Բախչինեան
Ներածություն՝ Հայկ Աւագեան
«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յաւելուած ԻԵ.
Գահիրե , Տպ. ??? , 2019 , 264 էջ , /12,3X16/ , /15,9X23,4/սմ.

67. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ

Արամ Խաչատուրեանի Ընկալումը

Եզիպտական Շրջանակներու Մէջ - Փոխուող Յարացոյցներ
«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յաւելուած ԻԳ.

Գահիրէ , Տպ. ??? , 2019 , 250 էջ , Հայերէն , Արաբերէն եւ Անգլերէն

Անդրադարձ-Յայտագիր-Ծանուցում-Նկարներ

/12,5X16,2/ , /16X23,8/սմ.

68. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ

Վահան Թէքէեանի Յօդուածները Արեւ Լրագիրին Մէջ

Հնարաւորութիւն Թէ Դիմադրութիւն

«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յաւելուած ԻԲ.

Գահիրէ , Տպ. ??? , 2019 , 124 էջ , /13,2X17/ , /16X24/սմ.

69. ԱԻԱԳԵԱՆ ՀԱՅԿ (հաւաքեց)

Քիրազ – Ընտրանի Եզիպտական Շրջանի Երգիծանկարներու

«ՋԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յաւելուած ԻԱ.

Գահիրէ , Տպ. ??? , 2019 , 81 էջ , Պատկերազարդ (սեւ-ձերմակ) , /20,6X29,1/սմ.

70. *Երեւանի 2800 – ամեակ . Տօնական Յոբելէնական Համերգ* -(Յայտագիր-գրքոյկ)

Կազմակերպութիւն՝ Գահիրէի Ազգային Առաջնորդարան

Կատարողութիւն՝ Գահիրէի Ազգային Առաջնորդարանի

Արաքս» Երգչախումբի եւ Մեներգիչներու

Յայտագիր-գրքոյկի պատրաստութիւն՝ Միհրան Ղազէեան

Գահիրէ , Տպ. Նուպար Տիճիրըլ , 2019 , 28 էջ , /12,2X20/ , /17X23,8/սմ.

71. *Զանգեզուր Պարախումբ*

(50-ամեակի Ելոյթ - Ուրբաթ, 12 Ապրիլ 2019) – (Յայտագիր)

Կազմակերպութիւն՝ Կոկանեան Սրահ (Հելիոպոլիս)

Տիգրան Երկաթ Մշակ. Միութիւն (Ադեքսանդրիա)

Գահիրէ , Տպ. Նուպար Տիճիրըլ , 2019 , 26 էջ ,

Պատկերազարդ (գունաւոր) , /11,6X16,6/ , /14,5X20,4/սմ.

72. *Զանգեզուր Պարախումբ - Յուշամատեն -*

50 ամեակ 1969-2019

(Գրքոյկ)

Գրքոյկի ձեւաւորում՝ Լալա Նիկոլեան եւ Շահէ Լուսարարեան

Հրատարակութիւն՝ «Նուպար Տիճիրըլ»

Գահիրէ , Տպ. Նուպար Տիճիրըլ , 2019 , 52 էջ ,

Պատկերազարդ (գունաւոր) , /14X20,8/ , /16,8X23,6/սմ.

73. *Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի - 90-ամեակին Նուիրուած Յուշահանդէս*

(Մասունքներ, Սուրբ Գիրքեր, Սրբապատկերներ,
Եկեղեցական Գանձեր, Իրեր, Ջգեստներ եւ Սպասներ)
Պատրաստեց՝ Հոգեշնորհ Տ.Դերենիկ Աբեղայ Սահակեան
Գահիրէ , Տպ. Նուպար Տիճիրժլ , 2019 , 104 էջ , /15,5X24/ , /20,6X29,4/սմ.

74. ՎԱՐԱՆ ՈՅԺ

Յակինթի Պարտեզը (Բանաստեղծություն)
«ԶԱՀԱԿԻՐ» Շաբաթաթերթի Յաւելուած ԻԴ.
Գահիրէ , Տպ. ??? , 2019 , 52 էջ , /13,2X17/ , /16,2X23,8/սմ.

ԱՆԹՈՒԱԿԻՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

75. Կրօնի Դասագիրք - Ա. Պատրաստական

Հրատարակութիւն՝ Գալուստեան – Նուպարեան Ազգային Վարժարան
Գահիրէ , Տպ. ???, 38 էջ , Գունաւոր և Պատկերազարդ , /17X25/ - /20,8X29,5/սմ.

76. Կրօնի Դասագիրք - Բ. Պատրաստական

Հրատարակութիւն՝ Գալուստեան – Նուպարեան Ազգային Վարժարան
Գահիրէ , Տպ. ???, 72 էջ , Գունաւոր և Պատկերազարդ , /17X25/ - /20,8X29,5/սմ.

77. Կրօնի Դասագիրք - Գ. Պատրաստական

Հրատարակութիւն՝ Գալուստեան – Նուպարեան Ազգային Վարժարան
Գահիրէ , Տպ. ??? , 48 էջ , Գունաւոր և Պատկերազարդ , /17X25/ - /20,8X29,5/սմ.

78. Կրօնի Դասագիրք - Դ. Նախակրթարան

Հրատարակութիւն՝ Գալուստեան – Նուպարեան Ազգային Վարժարան
Գահիրէ , Տպ. ???, 40 էջ , Գունաւոր և Պատկերազարդ , /17X25/ - /20,8X29,5/սմ.

79. Կրօնի Դասագիրք - Ե. Նախակրթարան

Հրատարակութիւն՝ Գալուստեան – Նուպարեան Ազգային Վարժարան
Գահիրէ , Տպ. ???, 60 էջ , Գունաւոր և Պատկերազարդ , /17X25/ - /20,8X29,5/սմ.

80. Կրօնի Դասագիրք - Զ. Նախակրթարան

Հրատարակութիւն՝ Գալուստեան – Նուպարեան Ազգային Վարժարան
Գահիրէ , Տպ. ???, 62 էջ , Գունաւոր և Պատկերազարդ , /17X25/ - /20,8X29,5/սմ.

81. Կրօնի Դասագիրք - Ա. Երկրորդական

Հրատարակութիւն՝ Գալուստեան – Նուպարեան Ազգային Վարժարան
Գահիրէ , Տպ. ???, 62 էջ , Գունաւոր և Պատկերազարդ , /17X25/ - /20,8X29,5/սմ.

ՆՈՐԱՅԱՅՏ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1909

Կանոնագիր Հայուհեաց Միության – Գահիրե

Գահիրե , Տպ. ??? , 1909 , 9 էջ , /6X9,8/ - /8,1X14,3/սմ.

1921

Կազմական Կանոնագիր

Ս. Դ. Հնչակեան Կուսակցության - Եգիպտոսի Մասնաճիւղերու

Գահիրե , Տպ. Ոսկետառ , 1921 , 30 էջ , /8,1X12,6/ - /10,5X16/սմ.

1937

Կանոնագիր «Բախտաբեր» Խնայասիրական Ընկերության – Գահիրե

Գահիրե , Տպ. Սահակ-Մեսրոպ , 1937 , 15 էջ , /6,2X9,9/ , 13,2X9,8 սմ.

1942

ՍՄԻԹՀ ՃԻՓՄԻ

Կորսուած Քրիստոսը

Հրատարակութիւն՝ Հայ Աւետ. Եկեղեցւոյ Ջանից Ընկերության - Գահիրե

Գահիրե , Տպ. Հապիպ-Մանսուր , 1937 , 16 էջ , /15,1X9,1/ - 19,9X13,9 սմ.

1957

Հ.Յ.Դ. 1890-1957

Գահիրե , Տպ. ??? (Յուսաբեր) , 1957 , 16 էջ , Պատկերազարդ , /9X15,1/ , 14,6X20,7/սմ.

ԱՐՇԱԿՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետ,
Թանգարանագիտության, գրադարանագիտության և
մատենագիտության ամբիոն

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ (Ընդհանուր տեսություն¹)

Բանալի բառեր՝ մարզային գրադարան, համայնքային գրադարան, մատենագիտական աշխատանքներ, գրադարանային միջոցառումներ, վիճակագրական տեսություն:

Keywords. Regional library, community library, bibliographic works, library events, statistical theory.

Ներկա ժամանակաշրջանում մեծ կարևորություն է տրվում ՀՀ մարզերի զարգացմանը, որի համատեքստում առանձնանում է մարզերում մշակութային կյանքի զարթոնքը: Այստեղ լուրջ դերակատարում ունեն գրադարանները՝ որպես մշակութային կյանքում իրադարձությունների համակարգողներ: Առանձնացնենք Արմավիրի մարզի գրադարանները՝ ներկայացնելով Արմավիրի մարզում գրադարանային-տեղեկատվական գործունեության ժամանակագրական զարգացումը, գրադարանային ֆոնդերի կազմը, կազմակերպված միջոցառումների մշակութային ու կրթադաստիարակչական նշանակությունը:

Արմավիրի մարզային գրադարան: Հիմնադրվել է 1938 թ. Հոկտեմբերյանի Լենինի անվան փողոցի վրա գտնվող այգում, 200 միավոր գրականությամբ և Մարուսյա Միրզոյանի գլխավորությամբ: 1941 թ. բացվում է գրադարանի մանկական բաժինը, իսկ գրքային ֆոնդը հարստացվում է փոստի միջոցով առաքվող գրքային կապոցներով և պարբերականներով: 1950 թ. այն կոչվում է Հոկտեմբերյանի քաղաքային գրադարան և տեղափոխվում շրջսովետի գործկոմի շենք, Սպանդարյան փողոց: Գրքային ֆոնդը կազմում էր 7947 միավոր գիրք, ուներ 748 ընթերցող, ստանում էր 18 անուն թերթ, ուներ 20 շրջիկ կետ, 6 ինքնակրթական խմբակ և 11 գրքատար: Գրադարանը հանդիսանում էր գյուղական գրադարանների մեթոդական կենտրոն՝ նրանց օգնելով միջգրադարանային բաժնույթի կարգով: Գրադարանների հանրապետական ստուգատեսի անցկացման կապակցությամբ գրադարանը առաջադրվել է պարգևատրման:

Հայաստանի Կոմունիստական կուսակցության ԿԿ-ի և ՀՍՍՀ մինիստրների սովետի 1974 թ.օգոստոսի 1-ի թիվ 474 որոշման համաձայն 1976 թ. Հոկտեմբերյանի գյուղական գրադարանները միավորվում են՝ ստեղծելով Գրադարանների կենտրոնացված համակարգ,

¹ Աշխատանքի արդյունքները քաղվել են գրադարանների հաշվետվություններից, ինչպես նաև ձևավորվել են սեփական ուսումնասիրության արդյունքում:

իսկ գրադարանը դառնում է միավորված համակարգի կենտրոնական գրադարան՝ ենթակայության տակ ունենալով 52 մասնաճյուղ-գրադարաններ, որից 1-ը կենտրոնական, 6-ը՝ քաղաքային, 3-ը՝ մանկական և 42-ը՝ գյուղական: 1976 թ. կենտրոնական գրադարանում բացվում են համալրման, մշակման, սպասարկման, մանկական, մեթոդ-մատենագիտական աշխատանքների, ֆոնդերի պահպանման և միջգրադարանային, ընթերցասրահի բաժինները: Կազմակերպվում է ընթերցողների սպասարկումը միջգրադարանային բաժնույթի միջոցով: Գրադարանում ստեղծվում է կազմարարական ծառայություն, կազմակերպվում են նաև նկարչական, գեղարվեստական ձևավորման խմբակներ: 1995 թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ Վարչատարածքային բաժանման մասին օրենքով Արմավիրի, Էջմիածնի, Բաղրամյանի շրջանների բազայի վրա ձևավորվում է Արմավիրի մարզը: 1996 թ. հոկտեմբերի 1-ից ՀՀ կառավարության որոշմամբ գյուղական գրադարանները անջատվում են միասնական ցանցից և ենթարկվում համայնքին: 1997 թ. հունվարի 1-ին ՀՀ կառավարության ապրիլի 30-ի որոշման համաձայն մարզկենտրոնում տեղակայված համակարգի կենտրոնական գրադարանը դառնում է Արմավիրի մարզի հանրապետական գրադարան: 2003 թ. հունվարի 1-ից ՀՀ կառավարության 2002 թ. հունիսի 5-ի 886-ն որոշման համաձայն գրադարանը վերանվանվում է Արմավիրի մարզային գրադարան: Առ այսօր գրադարանը զբաղվում է համայնքային գրադարանների տեղեկատվական, մատենագիտական և մասնագիտական խորհրդատվությունների տրամադրման աշխատանքներով:

Արմավիրի մարզային գրադարանի նպատակն է պահպանել և ընթերցողներին տրամադրել գրադարանի ամբողջ հավաքածուն, կատարել մատենագիտական-տեղեկատվական սպասարկում, բավարարել ընթերցողների տեղեկատվական պահանջները, ուսումնասիրել կատարած մերժումները, պլանավորել գրականության համալրման հարցերը, ներդնել նոր մոտեցումներ ու մեթոդներ բնակչության տեղեկատվական պահանջները ապահովելու, ընթերցողների ընթերցանությունը կազմակերպելու գործում: Գրադարանը ստանում է Հայաստանի Հանրապետության տարածքում տպագրվող 8 անուն պարբերական, առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ուսանողների համար անհրաժեշտ ուսումնական և մեթոդական ձեռնարկների ձեռքբերմանը:

Ներկայումս գրադարանային ֆոնդը կազմում է 110.737 միավոր գիրք: Կա նաև 19 համակարգիչ: Բարենորոգված գրադարանն այժմ ունի լայն հնարավորություններ՝ տարբեր տեսակի միջոցառումներ կազմակերպելու համար: Արմավիրի մարզային գրադարանը սպասարկում է 6728 ընթերցողի, անվճար տրամադրում է տեղեկատվություն, ինտերնետ կապի միջոցով սպասարկում 1050 օգտվողի:

Մատենագիտական- տեղեկատվական բաժնի հավաքածուն կազմված է տեղեկատու-ճյուղային և ընդհանուր բնույթի հանրագիտարաններից, բառարաններից, վիճակագրական տեղեկատուներից, մատենագիտական հրատարակություններից, գրացուցակների և քար-

տարանի համակարգից: Այն նախատեսված է տպագիր արտադրանքի և ընթերցանության նպատակասլաց ղեկավարման համար: Տարիների ընթացքում բաժնում ստեղծվել են թեմատիկ և ճյուղային մատենագիտական տեղեկատվական թղթապանակներ, հանձնարարական մատենագիտական ցանկեր, երկրագիտական քարտարաններ, մատենագիտական շտեմարաններ: Բավարարում է օգտվողների տեղեկատվական պահանջարկը: Մատենագիտական հարցումը ընդունվում է բանավոր և գրավոր ձևով, ճշտվում է հարցման տեսակը: Որոշակի թեմայի, առարկայի հարցման վերաբերյալ կազմվում է ցանկ, սպասարկվող տեղեկությունը պարունակում է պահանջվող նյութի վերաբերյալ բավարար տեղեկատվություն, ինչպես նաև նշվում է որտեղից է վերցված տեղեկատվությունը, կատարվում է սպասարկում: Ուսումնասիրվում են գրադարանային ֆոնդում ստացված հրատարակությունները, կազմվում են նոր ստացված նյութերի մասին տեղեկատվական բուկլետներ: Նոր ստացված գրքերի վերաբերյալ անցկացվում են գրքի տեսություններ, ընթերցանության ժամեր, ցուցահանդես դիտումներ, տպագրվում է տեղեկատվություն մամուլում, կազմվում են պարտադիր ընթերցանության ցանկեր: Համայնքային գրադարանների համար անցկացվում են սեմինար-խորհրդատվություններ, մեթոդական օգնություններ՝ գրադարանային սպասարկման աշխատանքների բարելավման վերաբերյալ: Համայնքային գրադարաններին ուղարկվում են նոր ստացված գրքերի թեմատիկ ցանկերը: Պատրաստում են կենսամատենագիտություններ, թեմատիկ գրականության ցանկեր, թեմատիկ թղթապանակներ, բուկլետներ, կազմակերպում է բնակչության թղթային և էլեկտրոնային տեղեկատվության սպասարկումը:

Բացի մարզային գրադարանից ներկայացնենք Արմավիրի մարզում գործող գրադարանների ընդհանուր պատկերը:

- Արմավիր քաղաքի քաղաքային գրադարաններ-3
- Արմավիր քաղաքի մանկական գրադարաններ-2
- Արմավիրի տարածաշրջանի համայնքային գրադարաններ-30
- Էջմիածնի քաղաքի գրադարաններ-7
- Էջմիածնի տարածաշրջանի համայնքային գրադարաններ-36
- Բաղրամյանի տարածաշրջանի համայնքային գրադարաններ-7

Զգործող գրադարաններ

- Արմավիրի տարածաշրջանի համայնքային գրադարաններ-8
- Էջմիածնի տարածաշրջանի համայնքային գրադարաններ-7
- Բաղրամյանի տարածաշրջանի համայնքային գրադարաններ – 4

Վերջին տարվա տվյալներով Արմավիր քաղաքում առկա է 3 քաղաքային գրադարան:

1. Քաղաքային թ. 1 մասնաճյուղ - ք. Արմավիր, Հանրապետության փողոց, Մշակույթի տուն:

2. Քաղաքային թ. 4 մասնաճյուղ - ք. Արմավիր, Սայաթ-Նովա 8/Ա:

3. Քաղաքային թ. 5 մասնաճյուղ - ք. Մեծամոր, Մշակույթի տուն:

Արմավիրում առկա է 2 մանկական գրադարան.

1. Արմավիր, Զիվանու 40:
2. Արմավիր, Հ.Ավետիսյան 12/Բ:

Տարածաշրջանի համայնքային գրադարաններն են՝

1. Ալաշկերտ - ֆոնդ՝ 11933 միավոր:
2. Այգեշատ – ֆոնդ՝ 18850 միավոր:
3. Այգևան - ֆոնդ՝ 14269 միավոր:
4. Արգավանդ - ֆոնդ՝ 8559 միավոր:
5. Արմավիր – ֆոնդ՝ 13702 միավոր:
6. Արտաշար – ֆոնդ՝ 4384 միավոր:
7. Արևիկ – ֆոնդ՝ 8153 միավոր:
8. Բամբակաշատ – ֆոնդ՝ 16182 միավոր:
9. Գետաշեն - ֆոնդ՝ 5167 միավոր:
10. Եղեգնուտ – ֆոնդ՝ 5549 միավոր:
11. Զարթոնք – ֆոնդ՝ 6888 միավոր:
12. Լենուդի - ֆոնդ՝ 6570 միավոր:
13. Լուկաշին – ֆոնդ՝ 13778 միավոր:
14. Խանջյան – ֆոնդ՝ 15116 միավոր:
15. Հայկավան - ֆոնդ՝ 5207 միավոր:
16. Հացիկ – ֆոնդ՝ 12474 միավոր:
17. Մայիսյան – ֆոնդ՝ 6575 միավոր:
18. Մարգարա – ֆոնդ՝ 9949 միավոր:
19. Մրգաշատ - ֆոնդ՝ 12438 միավոր:
20. Նոր Արմավիր – ֆոնդ՝ 8124 միավոր:
21. Նոր Կեսարիա – ֆոնդ՝ 5022 միավոր:
22. Նորապատ – ֆոնդ՝ 21918 միավոր:
23. Նորավան – ֆոնդ՝ 2987 միավոր:
24. Շենավան – ֆոնդ՝ 5299 միավոր:
25. Տանձուտ - ֆոնդ՝ 9090 միավոր:
26. Փշատավան – ֆոնդ՝ 6015 միավոր:

Արմավիր տարածաշրջանի չգործող գրադարաններն են՝

1. Ամասիա – ֆոնդ՝ 12314 միավոր:
2. Արագափ – ֆոնդ՝ 11952 միավոր:
3. Արաքս – ֆոնդ՝ 6950 միավոր:
4. Բերքաշատ – ֆոնդ՝ 4175 միավոր:
5. Երասխահուն – ֆոնդ՝ 7347 միավոր:
6. Զրաշեն – ֆոնդ՝ 7504 միավոր:
7. Մրգաշատ 2- ֆոնդ՝ 2770 միավոր, միացել է Մրգաշատ 1-ին:
8. Վարդանաշեն – ֆոնդ՝ 6077 միավոր:

Էջմիածին քաղաքի գրադարանները

Խորհրդային Հայաստանում առաջին պետական գրադարանը ստեղծվել է Էջմիածին քաղաքում 1921 թ.: Այսօր Էջմիածնում գործում է գրադարանային կենտրոնացված համակարգ՝ քաղաքային 7 գրադարաններով.

1. Հովհ. Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան
2. Վ. Հովհաննիսյանի անվան գրադարան
3. Վ. Թոթովենցի անվան թիվ 2 գրադարան
4. Թիվ 2 մանկական գրադարան
5. Ա. Այվազյանի անվան թիվ 3 գրադարան
6. Մ. Թարյանի անվան թիվ 4 գրադարան
7. Թիվ 5 գրադարան:

Այս գրադարանները գիտամշակութային, կրթական, տեղեկատվական կենտրոններ են՝ հարուստ ու բազմալեզու գրականությամբ, պահպանվող և սպասարկվող նյութերի տեսականիով, տարբեր ձևաչափի և գիտության տարբեր ճյուղերն արտացոլող փաստաթղթերի պահոցով, գրադարանային ոլորտում մասնագիտացած գրադարանավարներով: Համակարգն ունի 6 համակարգիչ: Էջմիածնի գրադարաններն իրենց առջև հստակ խնդիր են դրել աջակցել թվայնացման աշխատանքներին, գրադարանից օգտվողների համար ապահովել աշխատանքային լավագույն պայմաններ ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմամբ, նպաստել բաց մատչելիության մոդելների և բաց ծրագրային լուծումների վրա հիմնված թվային գրադարանների ստեղծմանը:

Վ. Հովհաննիսյանի անվան գրադարան: Վ. Հովհաննիսյանի անվան գրադարանը գտնվում է Էջմիածին քաղաքի Մ. Մելիսկյան փողոցի վրա, որը զբաղեցնում է 440 քմ տարածք: Գրադարանը կենտրոնացվել է երեք գրադարանների գրքային ֆոնդերի հիման վրա 2005 թ.: Այդ գրադարանները Հովհ. Թումանյանի, Ղ. Աղայանի և Վ. Հովհաննիսյանի անվան գրադարաններն են, որոնք սկսել են գործել 1950 թ.: Միավորումից հետո գրադա-

րանն ունի 90.964 միավոր գրքային ֆոնդ, 3200 ընթերցող, իսկ հաճախումները՝ 30.642-45.800: Գրադարանի տնօրենն է Ազգանուշ Կարապետյանը: Գրադարանն ունի նաև առանձին մանկական բաժին, գործում է առանձին աբոնեմենտ և ընթերցասրահ, որտեղ ընթերցողներն օգտվում են տեղեկատու աղբյուրներից և մեկ օրինակով գրքերի ընթերցասրահի ֆոնդից: Այդ ընթերցասրահում են կազմակերպվում և անցկացվում գրադարանում անցկացվող բազմաթիվ և բազմաբնույթ միջոցառումները: Գրադարանում մշտական ու շատ կարևոր տեղ են զբաղեցնում գեղեցիկ ու ճաշակով ձևավորված բազմաբովանդակ ցուցահանդեսները՝ նվիրված արվեստի ու գրականության գործիչներին: Գրադարանն ամեն տարի կազմակերպում է բազմաբնույթ միջոցառումներ, գրական գեղարվեստական ցերեկույթներ, հանդիպումներ գրողների, արվեստի գործիչների և այլ անվանի մարդկանց հետ:

Վ. Թոթովենցի անվան թիվ 2 գրադարան: Վ. Թոթովենցի անվան թիվ 2 գրադարանը ստեղծվել է 1949 թ. Զվարթնոց գյուղի ակումբի շենքում՝ Էջմիածնի մանկավարժական տեխնիկումի գրադարանի հիման վրա և ունի մասնագիտական ու գեղարվեստական հարուստ գրականություն: 2006 թ. գրադարանը տեղափոխվել է թիվ 15 մանկապարտեզի շենք: Այժմ ունի 9130 միավոր գրականություն և 900 ընթերցող: Գրադարանի գրքային ֆոնդը հարստանում է քաղաքապետարանի և ընթերցողների նվիրատվությունների միջոցով: Տնօրենն է Վարդուհի Քարամյանը: Կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ:

Էջմիածին քաղաքի Չարենց թաղամասի թիվ 2 մանկական գրադարան: Էջմիածին քաղաքի Չարենց թաղամասի թիվ 2 մանկական գրադարանը բացվել է 1974 թ.: 1971-2004 թթ. գրադարանը գտնվել է Չարենց թաղամասի թիվ 7 շենքի առաջին հարկում: Ընդամենը մի քանի ամիս է գործել թիվ 2 քաղաքային գրադարանը: Աշխատանքային բազմամյա փորձ ունեցող գրադարանավարներ Սիրանուշ Պետրոսյանը և Լիլի Գյուլբեկյանը կազմակերպել են հետաքրքիր միջոցառումներ, ստեղծել գեղեցիկ ցուցափեղկեր ու պաստառներ: Գրադարանի ակտիվ ընթերցողների և ակումբա-գրադարանային տեխնիկումի ուսանողների անմիջական մասնակցությամբ այստեղ կազմակերպվում են գրքերի քննարկումներ, հանդիպումներ ընթերցողների հետ: Այժմ գրադարանը գտնվում է Չարենցի թիվ 5 մանկապարտեզի հարևանությամբ: Տնօրենն է Արմինե Միսակյանը: Ունի գրքային մեծ ֆոնդ՝ 30.661 կտոր գրականություն, 1200 ընթերցող: Վերջին տարիներին քաղաքապետարանի կողմից գրադարանը պարբերաբար ստանում է նոր հրատարակված գրքեր:

Ա. Այվազյանի անվան թիվ 3 գրադարան: Ա. Այվազյանի անվան թիվ 3 գրադարանը հիմնադրվել է 1968-1969 թթ. Կոմիտասի անվան փողոցի՝ նախկինում որպես ամառային թատրոնի շենք ծառայող կառույցում: Գրքային ֆոնդը կազմում է 14.462 միավոր գրականություն: Գրադարանը զբաղեցնում է 63 քմ տարածք: Տնօրենն է Լուսինե Խանամիրյանը: Գրադարանում բազմիցս կազմակերպվել են երեկույթներ, ցերեկույթներ,:

Մ. Թարյանի անվան թիվ 4 գրադարան: Էջմիածնի թիվ 4 գրադարանը հիմնադրվել է 1976 թ. Վազգեն Առաջին փ. թիվ 47 շենքի առաջին հարկում (33 քմ մակերեսով), 5011 միավոր գրքային ֆոնդով: Այնուհետև ստեղծվել է գրադարանների կենտրոնացված համակարգ, և գրադարանը դարձել է այդ համակարգի անդամ: Լինելով տեղեկատվության հաղորդման կարևորագույն օղակներից մեկը՝ գրադարանը տարիներ շարունակ ստացել է բազմաթիվ թերթեր և ամսագրեր հայերեն և ռուսերեն լեզուներով: Ֆոնդի համալրմանը զուգընթաց աճել է նաև ընթերցողների թիվը, հատկապես՝ դպրոցահասակների: 1997 թ. գրադարանային համակարգը լուծարվել է և ստեղծվել է «Կրթություն» միացյալ տնօրինությունը: Գրադարանների գրքային ֆոնդը չի համալրվել նոր գրականությամբ: Գրադարանում կազմակերպվում են ժամանակավոր ցուցահանդեսներ՝ նվիրված հորեյլանական տարելիցներին, ինչպես նաև հիմնական ցուցահանդեսներ՝ «Մնացական Թարյան», «Հայրենական մեծ պատերազմ», «Գեղեցիկի աշխարհում», «Հույս և հավատ», «Գիտելիքի աղբյուրի», «Մեր համաքաղաքացի ստեղծագործողները», «Հայաստանը և հայ դատը»:

Թիվ 5 գրադարան: Էջմիածնի գրադարանային 7-րդ տեղամասի թիվ 5 գրադարանը հիմնադրվել է 1981 թ. Զվարթնոց թաղամասի 8-րդ շենքի նկուղային հարկում, 1989 թ. տեղափոխվել է Արագածի զանգվածի թիվ 1 շենք, 2005 թ. գտնվում է թիվ 16 «Ոստան» մանկապարտեզի տարածքում և ունի 150 քմ մակերես: Գրադարանը սկզբնական շրջանում ունեցել է 700 միավոր գրականություն: Տարիների ընթացքում համալրվել է նորանոր գրքերով և հարստացել: Այսօր ունի բաժնույթ, ընթերցարան, այբբենական, կարգային և մատենագիտական քարտարաններ: Այն հիմնականում սպասարկում է Արագածի զանգվածի և Զվարթնոց թաղամասի ընթերցողներին: Վերջին տարիներին գրադարանը քաղաքապետարանի կողմից պարբերաբար համալրվում է նոր գրականությամբ: Այժմ գրադարանի գրքային ֆոնդը կազմում է 16.300 միավոր գրականություն: Տնօրենն է Սիրվարդ Անտոնյանը: Գրադարանի գործունեության ողջ ընթացքում անցկացվել են և այժմ էլ իրականացվում են բազմաթիվ և բազմաբնույթ միջոցառումներ, գրքերի տեսություններ, ցուցահանդեսներ, որոնք և նպաստում են հասարակություն-ընթերցող կապի ամրապնդմանը:

Էջմիածին տարածաշրջանի համայնքային գրադարանները՝

1. Ակնալիճ - ֆոնդ՝ 6500 միավոր:
2. Ակնաշեն - ֆոնդ՝ 7477 միավոր:
3. Աղավնատուն - ֆոնդ՝ 11566 միավոր:
4. Ամբերդ - ֆոնդ՝ 6922 միավոր:
5. Այգեկ - ֆոնդ՝ 4895 միավոր:
6. Այգեշատ - ֆոնդ՝ 7446 միավոր:

7. Ապագա - ֆոնդ՝ 5750 միավոր:
8. Առատաշեն - ֆոնդ՝ 7885 միավոր:
9. Արագած - ֆոնդ՝ 6580 միավոր:
10. Արշալույս - ֆոնդ՝ 10049 միավոր:
11. Արտիմետ - ֆոնդ՝ 5236 միավոր:
12. Արևաշատ - ֆոնդ՝ 7400 միավոր:
13. Բաղրամյան - ֆոնդ՝ 8832 միավոր:
14. Գայ - ֆոնդ՝ 10250 միավոր:
15. Դաշտ:
16. Դոդս - ֆոնդ՝ 6380 միավոր:
17. Թաիրով:
18. Լեռնամերձ:
19. Լուսազյուղ:
20. Խորոնք - ֆոնդ՝ 5645 միավոր:
21. Ծաղկալանջ - ֆոնդ՝ 4722 միավոր:
22. Ծաղկունք - ֆոնդ՝ 6542 միավոր:
23. Ծիածան - ֆոնդ՝ 5520 միավոր:
24. Հայկաշեն - ֆոնդ՝ 5368 միավոր:
25. Հովտամեջ - ֆոնդ՝ 6000 միավոր:
26. Մեծամոր:
27. Մերձավան - ֆոնդ՝ 9594 միավոր:
28. Մրգաստան:
29. Մոսալեռ - Պահեստավորված:
30. Նորակերտ - ֆոնդ՝ 9785 միավոր:
31. Շահումյան - ֆոնդ՝ 9073 միավոր:
32. Ոսկեհատ - ֆոնդ՝ 7000 միավոր:
33. Զրառատ:
34. Տարոնիկ - ֆոնդ՝ 3608 միավոր:
35. Փարաքար - ֆոնդ՝ 11033 միավոր:

Էջմիածնի տարածաշրջանի համայնքային չգործող գրադարաններն են՝

1. Ֆերիկի
2. Շահումյանի Թ/Ֆ
3. Գրիբոյեդովի

4. Պտղունքի
5. Հայթաղի
6. Գեղակերտի

Ուսումնասիրությունները կատարել ենք հենց գրադարաններում՝ ուսումնասիրելով գրադարանում առկա ֆոնդը, շենքային պայմանները: Որոշ տվյալների քաղել ենք հաշվետվություններից: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մարզի գրադարաններում զգացվում է մասնագետների պակաս, խիստ մտահոգիչ է գրադարանների քանակի նվազումը:

SUMMARY

Library work has always been a socially significant activity. We have conducted studies in Armavir region libraries to understand the level of viability of the library. Our study has shown that there is a lack of specialists in the regional libraries, there is a tendency on closing the libraries..

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ. ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Բանալի բառեր՝ Մանկական գրադարան, դպրոցական գրադարան, կրթադաստիարակչական աշխատանք:

Keywords. Children's library, school library, educational work.

Ինչպես գիտենք, մանկական գրադարանում դաստիարակչական աշխատանքների համակարգը կառուցվում է ժամանակի կողմից թելադրվող խնդիրներին համապատասխան և կրում է համապարփակ բնույթ: Մանկական գրադարանը այս աշխատանքները կազմակերպում է՝ ելնելով ընդհանուր, համակողմանի դաստիարակության նպատակից, որի հիմնական ուղղություններն են բարոյական, պատմահայրենասիրական, գեղագիտական, ֆիզիկական, հոգևոր, գիտաճանաչողական, բնապահպանական, աշխատանքային, քաղաքացիական և այլն: Այս բոլոր ուղղությունները սերտորեն փոխկապակցված են, սակայն յուրաքանչյուրն ունի իր ուրույն դերն ու առանձնահատկությունները¹:

Հայաստանի Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը հանդիսանում է բազմագործառույթ, տեղեկատու-մշակութային, ուսումնական և կրթական կենտրոն: Հիմնադրման օրվանից գրադարանն իրականացնում է Հայաստանի մանկական գրադարանների մեթոդա-մատենագիտական գործունեության համակարգումը, պարբերաբար հրատարակում է մանկական գրականության հանձնարարական ցանկեր, մեթոդական ձեռնարկներ:

Երեխաներին գրքի հետ կապելու, նրանց ընթերցասիրություն սովորեցնելու առաջին քայլերը սկսվում են նրանց գրադարանի հետ կապելու աշխատանքից: Նախ գրադարանավարները ժամանակ առ ժամանակ ճշտում են քաղաքի նախադպրոցական հիմնարկների, դպրոցների, քոլեջների ու վարժարանների ցանցը, անհրաժեշտ թվային տվյալները, դրանք համեմատում են ընթերցողների թվի հետ և պարզում իրենց հետագա աշխատանք-

¹ Հովսեփյան Մ., Կրթադաստիարակչական աշխատանքները Խնկո-Ապոր անվան մանկական գրադարանում, Խնկո-Ապոր անվ. ազգ. մանկ. գրադ-ի հրատ, Երևան: 2008, էջ 9:

քային հնարավորությունները: Այնուհետև ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ, կազմակերպվում են այցելություններ, զրույցներ, տեսություններ ու էքսկուրսիաներ, որոնք երեխաներին հնարավորություն են տալիս մոտիկից ծանոթանալու գրադարանին, նրա ֆոնդերին և գրադարանի հետագա ծրագրերին: Միջոցառումները կազմակերպվում և մատուցվում են հնարավորինս պարզ, մատչելի ու գրավիչ խոսքով: Նախնական ծանոթությունից հետո երեխան ավելի մոտիկից ու մանրամասն ծանոթանում է իր գրադարանի մյուս ենթաբաժիններին: Ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթեր՝ նա դառնում է գրադարանի բաժանորդ և իրավունք ստանում օգտվելու նրա ծառայություններից: Ընթերցողի համար լրացվում է առանձին անհատական քարտ, որտեղ գրանցվում են նրա մասին անհրաժեշտ տեղեկություններ և ուսման ու ընթերցանության վերաբերյալ տվյալներ: Գրադարանավարի և ընթերցողի առաջին շփումից, նախնական զրույցից շատ բան է կախված: Գրադարանավարի աշխատանքին մեծապես նպաստում են քարոզչամիջոցները՝ գրադարանային ամենատարբեր միջոցառումները և տեղեկատվական գովազդները՝ ԶԼՄ-ների և սոցիալական ցանցերի միջոցով, ինչպես նաև անմիջական կապը դաստիարակների, ուսուցիչների և ծնողների հետ: Այսպիսով, երեխաներին ընթերցանության մեջ ներգրավելու ուղղությամբ տարվող աշխատանքի հաջողությունը կախված է տարբեր գործոններից՝ գրադարանավարի մշտական ուշադրությունից, մանկական ու դպրոցական գրադարանավարների, ուսուցիչների և ծնողների համատեղ ջանքերից:

Դպրոցական և մարզային գրադարանավարների համար գրադարանում պարբերաբար կազմակերպվում են սեմինարներ: Այդ սեմինարների նպատակն է օգնել դպրոցական և մարզային գրադարանավարների մասնագիտական որակավորման կատարելագործմանը, գրադարանում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մեթոդների ուսուցմանը: Կարելի է վստահորեն ասել, որ Հայաստանի ազգային մանկական գրադարանի գործունեությունն ուղղված է իրականացնելու երեխայի տեղեկություն ստանալու և կրթության իրավունքը, հասարակության համընդհանուր տեղեկացվածության պայմաններում նրա իրավունքների պաշտպանությունը²:

Հայաստանի յուրաքանչյուր դպրոցում կա գրադարան և գրադարանավար: Դպրոցի գրադարանավարները պատասխանատու են գրադարանների պաշարների կառավարման, հսկողության, մաքրության, խնամքի, ինչպես նաև դրանց շրջանառության և վերադարձի համար:

Հայաստանի նոր կրթակարգով սահմանվում է հմտությունների և գիտելիքների զարգացում՝ հակառակ նախորդ կրթակարգով պահանջվող փաստացի գիտելիքների կուտակմանը: Նոր կրթակարգը հատկանշում է. ավելի բարձր մտածողության հմտությունների զարգացում, խնդրի լուծման ունակություն, սովորողի աճող պատասխանատվությու-

²Սիմոնյան Է. Էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրների օգտագործումը, Երևան, 2009, էջ 10:

նը անձնական ուսումնառության գործում, սովորողների ակտիվ ու ինքնուրույն ուսումնառություն և աշխատանք փոքր խմբերում, հետազոտական ունակությունների զարգացում: Բացի դասագրքերով ուսումնառությունից, վերոհիշյալ մոտեցումները պահանջում են ավելի բազմազան՝ տարբեր տեղեկատվության և գրական աղբյուրների օգտագործում ու մատչելիություն: Այլ կերպ ասած՝ պահանջում են դպրոցական գրադարանների զարգացում: Դա էլ, իր հերթին, առաջ է քաշում Հայաստանում դպրոցների գրադարանավարների վերապատրաստումներ իրականացնելու անհրաժեշտությունը՝ լավ կազմակերպված գրադարանի պահանջներին համապատասխան և դպրոցի գրադարանավարի հիմնական դերն ու գործունեությունը պարզաբանելու նպատակով:

Դպրոցական գրադարանը պետք է լինի լավ ֆինանսավորված, ընդարձակ, մաքուր և գրավիչ: Գրադարանը պետք է լինի դպրոցի «սրտում»-կենտրոնում, այսինքն՝ սովորողների ուսումնառության համար բարենպաստ տարածքում: Գրադարանը պետք է ունենա բավարար տարածք (աթոռներ և դասասեղաններ), որպեսզի կարողանա դպրոցի սովորողների 10%-ին միաժամանակ տեղավորել: Դպրոցի գրադարանավարը պետք է լինի լավ վերապատրաստված, գիտակ և ակտիվ՝ սովորողների ակտիվ ուսուցման և ուսումնառության գործընթացներին նպաստելու համար: Դպրոցի տնօրենը և ուսուցչական կազմը պետք է ակտիվ աջակցեն դպրոցի գրադարանի դերի բարձրացման խնդրին, և պետք է համագործակցեն դպրոցի գրադարանավարի ու գրադարանից օգտվողների հետ, որպեսզի սովորողների մոտ զարգացնեն ինքնուրույն ուսումնառության և տեղեկատվության որոնման հմտությունները: Դպրոցի գրադարանի պաշարները պետք է ներառեն տարբեր աղբյուրներ. գրքեր, ժողովածուներ, պարբերական մամուլ, էլեկտրոնային բաժանորդագրություններ, տեսա և ձայնանյութեր և այլն: Դպրոցական գրադարանները տեխնիկապես պետք է հագեցած լինեն նոր սարքավորումներով: Գրադարանը պետք է ունենա համակարգչային գրացուցակ, որը կընդգրկի ոչ միայն ուսումնական ծրագրերով պահանջվող նյութերը, այլ նաև կունենա հղումներ դեպի կրթական պաշարները: Դպրոցի գրադարանը պետք է ունենա համակարգչային ցանց և ինտերնետային կապ, որը հասանելի կլինի բոլոր օգտվողներին, այդ թվում այն պետք է ապահովի դպրոցի ներքին և արտաքին պաշարների որոնման հանրային առցանց քարտարանը: Իդեալական տարբերակով նախքան ավագ դպրոցի գրադարանի նախագծումը պետք է հաշվի առնվեն բոլոր առկա պահանջները:

Այժմ դպրոցական գրադարանները զբաղված են տարատեսակ աշխատանքներով, կապված դասագրքերի, տնօրինության գործավարական հանձնարարությունների և այլնի հետ: Ժամանակակից գրադարանները էականորեն տարբերվում են շատերիս պատկերացրած գրադարաններից: Գրադարանները դադարել են կատարել միայն «գիրք տալ – վերցնել» գործառույթը: Գրադարաններն ընթերցողներին գրավելու նորանոր ուղիներ են

որոնում: Այսօրվա խոշոր հանրային գրադարաններում սկսվել է գրքերի թվայնացումը որի շնորհիվ ընդլայնվում են սպասարկման շրջանակները: Թվային գրադարանը ժամանակի ու տարածքի սահմանափակում չունի, ապահովում է գրքի երկարաժամկետ պահպանությունը: Թվայնացված գրքերը դրվում են կայքում, որի միջոցով պահպանվում է գրականությունը և բոլորը կարող են դրանից օգտվել:

Դպրոցական գրադարանների նպատակն է կրթական գործընթացին զուգահեռ տեղեկատվության ապահովումը, մանկավարժների կրթական գործընթացին աջակերտների աջակցությունը: Պետք է աջակցել աջակերտներին, որպեսի նրանց ունակությունները զարգանան, դառնան հոգով հարուստ անհատներ: Դպրոցական գրադարանների նպատակն է գրադարանային սպասարկման կազմակերպումը՝ համախմբելով դպրոցի բոլոր աջակերտներին: Դպրոցական գրադարանների առաջնային խնդիր է դիրվում ֆոնդերի ձևավորումը: Եթե մանկական գրադարանները ձեռք են բերում համակողմանի գրականություն գեղարվեստական, գիտաճանաչողական, տեղեկատու, որը կարող է ապահովել երեխաների բարոյական, ընդանրապես դաստիարակության խնդիրները և նպաստել նրանց ազատ ժամանցի նպատակային և ճիշտ կազմակերպմանը, ապա այլ են մոտեցումները դպրոցական գրադարանների ֆոնդերի ձևավորման հարցում: Այստեղ հիմնական ելակետը ուսումնական, ծրագրային, մեթոդական գրականությամբ աջակերտներին ու մանկավարժներին ապահովելն է: Դպրոցական գրադարանների ֆոնդերում անհրաժեշտ է ունենալ այնպիսի գրականություն, որը նպաստի օգտվողի կրթական ընթացիկ և հետագա գործունեությանը, մասնագիտական կողմնորոշմանը³:

Դպրոցականների մեջ գրքի նկատմամբ հետաքրքրության ձևավորումը հասարակության կարևոր խնդիրներից մեկն է: Այս խնդրի լուծմանը կոչված են ծառայելու ոչ միայն դպրոցը, այլև գրադարանները:

Ինչպես բացահայտել երեխայի ընդունակությունները, ինչպես զարգացնել դրանք, ինչպես պարզել նրա հետաքրքրությունները ու ինչ նոր հետաքրքրություններ առաջացնել, ինչպես լրացնել նրա դպրոցական գիտելիքները, ինչպես ձևավորել և զարգացնել նրա գեղագիտական ճաշակը և այլն: Ամենակարևորը թերևս երեխայի վստահությունը ձեռք բերելն է: Երեխան չի սիրում իրեն թելադրվող, պարտադրվող խոսքն ու գործելակերպը: Ուստի գրադարանավարը պետք է զգուշորեն՝ մանկավարժ-հոգեբանի հմտությամբ կարողանա շահել երեխայի վստահությունը: Նա իր տեսադաշտում պետք է պահի ոչ միայն, և նույնիսկ, ոչ այնքան ակտիվ ընթերցողներին, որքան քիչ կամ վատ կարդացող «դժվար» երեխաներին:

Գրադարանավարի դերը շատ մեծ է կրտսեր դպրոցականներին գրքին և գրականությանը կապելու գործում:

³ Ոսկանյան Շ. Համալրման արդի խնդիրները (Գրադարանային ձեռնարկ), Երևան, 2008, էջ 4-10:

Այսպիսով, դպրոցականի յուրաքանչյուր այցելություն գրադարան նրա մոտ սեր է առաջացնում ընթերցանության հանդեպ, սովորեցնում է կատարել գրքի ճիշտ ընտրություն, ինչպես նաև նպաստում է կարդացած գրքի նշանակությունը, իմաստը, գեղարվեստական ուժը ճիշտ ընկալելուն:

Գրադարանավարի աշխատանքը երեխայի հետ ըստ էության, նպատակաուղղված մանկավարժական գործունեություն է: Միևնույն տարիքի երեխաների ընթերցանության մակարդակների անհատական տարբերությունները կարող են լինել շատ նշանակալից: Անհատական ինչպես նաև խմբային զրույցների, հարց ու պատասխանի միջոցով գրադարանավարը հայտնաբերում է այն պատճառները, որոնք դպրոցականների շրջանում առաջացրել են որոշակի հետաքրքրություններ⁴:

Բանավոր հարցումների, զրույցի միջոցով գրադարանավարը պարզում է նաև թե երեխան ինչպես է ընթերցել գիրքը, որքանով է ըմբռնել, հիշում է արդյոք հերոսների անուններն ու վարքագիծը, դեպքերը, ինչպիսի կարծիք ու գնահատականներ ունի, ինչպես է տրամաբանում և այլն:

Կրտսեր դպրոցականին որևէ գաղափար ներշնչելու և հասանելի դարձնելու համար անկասկած նախ հարկավոր է նվաճել երեխայի սերը և վստահությունը: Հմուտ գրադարանավարը կարողանում է նվաճել մանուկ ընթերցողների սերն ու համակրանքը⁵:

Իրոք դժվարին և պատասխանատու խնդիր է դրվում բոլոր նրանց առաջ, ովքեր զբաղվում են մանկական գրականության ստեղծմամբ և մատուցմամբ: Երեխայի մեջ դեռևս վաղ հասակում դրսևորվում է հետաքրքրություն դեպի շրջապատող աշխարհը, նրա երևույթները և, հատկապես, դեպի գեղեցիկը: Նրանք մեծ բավականությամբ են լսում, իրենք են պատմում, արտասանում, երգում ու պարում, դիտում ֆիլմեր ու նկարներ: Հագեցնել երեխայի հետաքրքրությունների ծարավը, զարգացնել նրա մեջ եղած ընդունակությունները կարող են գրքերը, ընթերցանությունը: Անգնահատելի է այն վիթխարի ազդեցությունը, որ թողնում է լավ գրքի ընթերցանությունը մարդու վրա: Ինչպես ասել է Մ. Գորկին՝ «Գիրքը մարդկության հոգեկան ուժերի հետագա զարգացման ամենահզոր զենքն է»: Անձի ընթերցանության մշակույթը կախված է նրանից, թե ով և ինչպես է կազմակերպել նրա ընթերցանությունը մանուկ հասակում: Երեխայի համար գրականության ընտրությունը խիստ անհատական աշխատանք է, քանի որ պետք է հաշվի առնել երեխայի նախասիրությունները, բնավորությունը և այն շրջապատը, որտեղ ապրում է նա:

⁴ Голубева Н.Л. Функция детской библиотеки как института инкультурации личности, Библиотековедение, 2007, N 1, с. 24-28.

⁵ Կրթադաստիարակչական աշխատանքները Խնկո-Ապր անվան ազգային մանկական գրադարանում, Երևան, 2006, 52 էջ:

Ուստի ընթերցանության ղեկավարումը նպատակ է, իսկ ընթերցողի առանձնահատկությունները ուսումնասիրելը՝ այդ նպատակին հասնելու միջոց:

Գիտատեխնիկական առաջընթացի ներկա ժամանակաշրջանում, երբ գրքից բացի երեխայի կյանքում հաստատուն տեղ են գտել տեղեկատվության տարածման և մատուցման ժամանակակից միջոցներ, պարզ է, որ ընթերցողի հետաքրքրությունների սահմանները ավելի լայնացել են, պահանջներն ու ցանկությունները դարձել են խորը և բազմակողմանի:

Կրտսեր դպրոցականների մեջ գրքի նկատմամբ հետաքրքրության ձևավորումը յուրաքանչյուրիս առաջնահերթ խնդիրն է: Ուսուցիչների, ծնողների, գրադարանավարների ուսերին է ընկած այդ պատասխանատու գործի իրականացումը:

Այսպիսով, մանկական և դպրոցական գրադարանները պետք է ամուր թելերով երեխաներին կապեն ընթերցանությանը և ամեն վայրկյան նպաստեն նրանց կրթադաստիարակչական աշխատանքներին:

SUMMARY

The system of educational work in children's and school libraries is a comprehensive nature. Such libraries organize activities based on a common, comprehensive educational objective. Children's and school libraries should connect the children to the library with strong strings and contribute to their educational activities.

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՖՈՆԴԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բանալի բառեր՝ Կենտրոնական գրադարան, մատենագիտական աշխատանք, գրադարանային գործ:

Keywords. Central library, bibliographical work, librarianship.

Գրադարան ամենից առաջ նշանակում է գրականություն՝ գրքեր, պարբերականներ, քարտեզներ, կերպարվեստի նյութեր և այլն: Առանց գրականության չկա գրադարան, չկա և գրադարանային որևէ աշխատանք:

Գրադարանային գիրքը-հասարակական սեփականություն է, որի պահպանումը յուրաքանչյուր քաղաքացու և առաջին հերթին գրադարանային աշխատողի պարտքն է, որին պետությունը վստահել է գրադարանի ամբողջ ֆոնդը: Ֆոնդերի պահպանումն ապահովելու համար, անհրաժեշտ է ճիշտ հաշվառում կատարել, որով հնարավորություն է ստեղծվում իմանալու գրադարանում քանի օրինակ և ինչպիսի գրքեր կան:

Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանը տեղեկատվական, մշակութային և կրթադաստիարակչական գործունեություն իրականացնող կազմակերպություն է Երևանում: Այն իր նշանակությամբ և գործառույթներով երկրորդ խոշոր գրադարանն է՝ Ազգային գրադարանից հետո:

«Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ը /համայնքային ոչ առևտրային կազմակերպություն/ ունի համընդհանուր ֆոնդ, որը նախատեսված է Երևան քաղաքում բնակվող, նաև ՀՀ այլ մարզերից Երևանում աշխատող կամ սովորող ընթերցողների հանրակրթական, մշակութային, տեղեկատվական և մասնագիտական պահանջների բավարարման համար:

ՀՈԱԿ-ի միասնական ֆոնդը իրենից ներկայացնում է կենտրոնական գրադարանի և մասնաճյուղ-գրադարանների ֆոնդերի համակարգ:

րադարանային ֆոնդը հավաքական հասկացություն է: Այն տարբեր է իր կազմով: Հաճախ համարվում է, որ գրադարանային հավաքածուները բաղկացած են գրքերից: Իրոք, գրքերը դրանց հիմքն են կազմում: Սակայն գրքերը ընդհամենը հրատարակության մի տեսակն են:

Գրադարանում ֆոնդն այն ակտիվ մասն է, որը լիարժեքորեն լուծում է գրադարանների առջև դրված սոցիալական խնդիրները՝ ազդելով մարդու գիտական աշխարհայացքի ձևավորման վրա: Գրադարանային ֆոնդը նպաստում է ցանկացած մակարդակի ընդհանուր և մասնագիտական կրթություն ստանալուն և դրա հետագա կատարելագործմանը:

Գրքային ֆոնդի համակարգ ասելով՝ հասկանում ենք այն, թե գրադարանի ամբողջ գրականությունը ինչպիսի առանձին մասերից է բաղկացած, մասեր, որոնց ամբողջությունը մի համակարգ է: Գրադարանի ամբողջ գրքային ֆոնդի բաժանումը առանձին մասերի բխում է գրականության տարբեր տեսակների առանձնահատկություններից, գրադարանի առջև դրված խնդիրներից և այլ հանգամանքներից:

Կենտրոնական գրադարանում ամբողջ գրականությունը նախ երկու հիմնական մասի է բաժանվում՝ ընդհանուր գրապահոց և առանձին ենթաբաժինների ֆոնդ: Կա նաև առձեռն ու ծառայողական գրականության գրքային ֆոնդ:

Կենտրոնական գրադարանը հնարավորություն է տալիս ստեղծել մշտապես համալրվող, վերաբաշխվող և բոլոր ընթերցողների կողմից հավասարապես օգտագործվող միասնական ֆոնդ: Ի տարբերություն մասնաճյուղ-գրադարանների և կենտրոնական գրադարանի բաժինների ֆոնդերի, գրապահոցի գրքային ֆոնդը հարուստ ու բազմաբովանդակ է. այն հնարավորություն է ընձեռնում լիակատար կերպով բավարարելու ողջ համակարգի ընթերցողների ոչ միայն մասնագիտական, այլև՝ եզակի ու բացառիկ պահանջները: Գրապահոցի հիմնական դերն գրադարանի կենտրոնական համակարգի ընթերցողների սպասարկման կազմակերպումն է ինչպես սեփական, այնպես էլ մնացած կառուցվածքային ստորաբաժանումների /մասնաճյուղ-գրադարանների և ԿԳ բաժինների/ միջոցով: Պահանջված գրականությունը միասնական ֆոնդում չլինելու դեպքում գրապահոցն այն բավարարում է միջգրադարանային բաժնույթի /ՄԳԲ/ միջոցով:

Միասնական ֆոնդերի կազմակերպման և օգտագործման բաժինը կազմակերպում է նաև սպասարկում միջգրադարանային բաժնույթի օգնությամբ:

Ընթերցողների սպասարկումը ՄԳԲ-ի միջոցով կատարվում է այն դեպքում, երբ համակարգի միասնական ֆոնդում բացակայում է անհրաժեշտ հրատարակությունը:

«Ավ. Իսահակյանի անվան ԿԳ» ՀՈԱԿ-ում համալրման աշխատանքներն ընդգրկում են մի քանի հիմնական գործընթաց.

1. Նոր լույս տեսած գրականության ուսումնասիրություն,
2. Գրադարանին անհրաժեշտ գրականության որակական ընտրություն,
3. Գրականության ձեռքբերում տարբեր աղբյուրներից,
4. Անհրաժեշտ գրականության հետադարձ համալրում,

5. Գրադարանային ֆոնդի պարբերաբար ուսումնասիրում՝ արդիականությունը կորցրած գրականությունը հայտնաբերելու նպատակով սպասարկումը այդ կերպ առավել դինամիկ և արագ կազմակերպելու համար:

Գրքափոխանակում

Ավետիք Իսահակյան անվան կենտրոնական գրադարանը և մասնաճյուղ-գրադարանները իրենց բաժանորդագրությունները միշտ իրենք են իրականացնում:

Գրադարանը օգտվում է «ՀԱՅՄԱՄՈՒԼ» Հայաստանի մամուլի տարածման գործակալության ծառայությունից: Բաժանորդագրվել է նաև տասնյակ այլ թերթերի և ամսագրերի վճարովի ու անվճար հիմունքներով: Տարվա ընթացքում վճարովի հիմունքներով գրադարանի մամուլի բաժինը ստանում է «Մարի» ամսագիր (Երևան, 12 օրինակ), «Հայաստան» ամսագիրը (6 օրինակ) և «Գործք» ամսագիրը:

«Ավ. Իսահակյանի անվան ԿԳ» ՀՈԱԿ-ի մամուլի բաժինը բաժանորդագրվել է նաև «Նոր օր», «Մանկավարժական համալսարան», «Մաշտոց», «Բագին», «Հայկական բանակ», «Հայ զինվոր», «Սփյուռք», «Վարկանիշ», «Վարագ», «Արձագանք», «Տիր», «Կամար», «Վէմ», «Հայուհի», «Դիտակ» և այլ թերթերի ու ամսագրերի:

Կենտրոնական գրադարանը ամսագրեր ու թերթեր է ստանում նաև սփյուռքից: Օրինակ՝ «Պայքար: Օրաթերթ ազգային, քաղաքական եւ գրական: Պաշտոնաթերթ Ռամկավար Ազատական կուսակցության Ամերիկայի շրջանի» շաբաթաթերթը (Ուոթերթաուն, ԱՄՆ), «Ալիք ազգային, հասարակական, քաղաքական» շաբաթաթերթը (Թեհրան):

Գրադարանի մամուլի բաժինը 2019 թ. առաջին կիսամյակում բաժանորդագրվել է «Հայաստանի Հանրապետություն», «Առավոտ», «Հայկական ժամանակ», «Գինդ», «Գրական թերթ», «Կրթություն», «168 ժամ», «Իրավունք», «Ֆուտբոլ», «Կանչ», «Ժողովուրդ», «Республика Армения», «Голос Армении», «Новое Время» թերթերին և յուրաքանչյուրից ձեռք բերել մեկական օրինակ:

Գրադարանի համար շատ կարևոր նշանակություն ունեն նվիրատվությունները՝ որպես ֆոնդերի համալրման շարունակական գործընթաց: 2019 թ. առաջին եռամսյակում անհատներից և տարբեր կազմակերպություններից ստացված նվիրատվությունների քանակը կազմում է մոտ 300 միավոր գրականություն: Գրադարանի բարձր հեղինակությունը և ֆոնդերում ստեղծված հայտնի մարդկանց անհատական հատուկ հավաքածուների բաժինը մշտապես նորանոր նվիրատուներ է բերում գրադարան. գիտնականներ, գրողներ, պրոֆեսորներ, արվեստագետներ և այլն: Կան անհատների, ովքեր իրենց անձնական գրադարաններն են նվիրում Ավետիք Իսահակյանի անվան գրադարանին՝ համոզված լինելով, որ այս գրադարանում իրենց տարիներով և մեծ սիրով հավաքած գրականությունը լավագույնս կպահպանվի և լիարժեք կծառայի ընթերցասեր հասարակությանը: Հարկ ենք համարում նշել մի քանի անուններ, ովքեր իրենց հարուստ հավաքածուն

նվիրել են Ավետիք Իսահակյանի անվան գրադարանին. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հեն-րիկ Հովհաննիսյան, պրոֆեսորներ Յակով Խաչիկյան, Տիգրան Հախումյան, Նելլի Բարաթյան, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Սերգեյ Գալստյան, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Հասմիկ Կարապետյան, գրականագետ Ալեքսանդր Թովփյան, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Անահիտ Թովփյան, քաղաքական գործիչ Սերգո Երիցյան, բանաստեղծ Մարո Մարգարյան, Իսպանիայի «Արարատ» միության նախագահ Արարատ Ղուկասյան և այլք: Անհատներից բացի գրադարանին մեծ քանակությամբ գրքեր են նվիրաբերել (մինչ օրս էլ նվիրաբերում են) Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանը, Երևանի պետական համալսարանը, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանը, Հայաստանի գրողների միությունը, Բրիտանական խորհուրդը, ԱՄՆ դեսպանատունը, Քովելյթի դեսպանատունը, Երևանի քաղաքապետարանը և այլն:

2018 թվականի ընթացքում գրադարանային ֆոնդին նվիրաբերվել է 9537 միավոր գրականություն, որից 7300-ը՝ կենտրոնական գրադարանի ֆոնդին, 2237-ը՝ մասնաճյուղ-գրադարաններին:

Գրականության տացքը ըստ գիտության ճյուղերի 2018 թ. հետևյալ պատկերն ունի.

Հասարակական-քաղաքական՝ 1830 միավոր

Բնական գիտություններ, բժշկություն՝ 493 միավոր

Տեխնիկական, գյուղատնտեսություն և տնտեսագիտություն՝ 205 միավոր

Մշակույթ և սպորտ՝ 588 միավոր

Բանասիրություն, գեղարվեստական գրականություն՝ 6321 միավոր:

2018 թ. բյուջետային միջոցների հաշվին ստացվել է 1122 միավոր գրականություն, որից 621-ը՝ կենտրոնական գրադարանի ֆոնդին, 501-ը՝ մասնաճյուղ-գրադարաններին:

Գրականության տացքը ըստ գիտության ճյուղերի հետևյալ պատկերն ունի.

Հասարակական-քաղաքական՝ 349 միավոր

Բնական գիտություններ, բժշկություն՝ 43 միավոր

Տեխնիկական, գյուղատնտեսություն և տնտեսագիտություն՝ 16 միավոր

Մշակույթ և սպորտ՝ 43 միավոր

Բանասիրություն, գեղարվեստական գրականություն՝ 671 միավոր:

2019 թ. հունվարի 1-ի դրությամբ «Ավ. Իսահակյանի անվան ԿԳ»-ի ընդհանուր ֆոնդի գրքատացքը կազմել է 709.733 միավոր գրականություն, որից 489.862-ը՝ կենտրոնական գրադարանի ֆոնդին, 219.871-ը՝ մասնաճյուղ-գրադարաններին:

Գրականության տացքը ըստ գիտության ճյուղերի հետևյալ պատկերն ունի.

Հասարակական-քաղաքական՝ 127.810 միավոր

Բնական գիտություններ, բժշկություն՝ 49.692 միավոր

Տեխնիկական, գյուղատնտեսություն և տնտեսագիտություն՝ 38.881 միավոր

Մշակույթ և սպորտ՝ 49.805 միավոր

Բանասիրություն, գեղարվեստական գրականություն՝ 443.5451 միավոր:

Կենտրոնական գրադարանն իր բնույթով ունիվերսալ է: Այն բավարարում է քաղաքի բնակչության բոլոր խավերին: Աննպաստ կացության պատճառով մշակութային շատ օջախներ լուծարվեցին, իսկ Երևանի Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանը, դիմակայելով շատ դժվարությունների, շարունակում է իր արդյունավետ գործունեությունը:

«Ավ. Իսահակյանի անվան ԿԳ»-ի հարուստ գրքային ֆոնդը կարևոր դեր է խաղում մեր մշակութային և տնտեսական կյանքում, օգնում է ժողովրդի մշակութային մակարդակի բարձրացմանը, նպաստում գիտության, տեխնիկայի և տնտեսության բոլոր բնագավառների աշխատողների սպասարկմանը: Ֆոնդում ընդգրկված գրականությունը հանդիսանում է ինչպես բովանդակության, այնպես էլ գիտական տեսակետից առաջավոր: Այն ընթերցողներին զինում է գիտելիքներով, նպաստում նրանց քաղաքական և մշակութային մակարդակի աճին, օգնում կոնկրետ խնդիրների ու հարցերի լուծմանը:

SUMMARY

The rich collections of the Yerevan city municipal central library plays an important role in our cultural and economic life, helps to increase the cultural level of the citizens.

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Բանալի բառեր՝ Անձնական գրադարան, կերպարվեստ, տուն-թանգարան, գրադարանի հավաքածու, թանգարանային ցուցադրություն:

Keywords. Personal library, Fine arts, Home-museum, Library collection, Museum exhibit.

Մեր մշակութային գործիչներից շատերը ունեն իրենց անձնական գրադարանները, որոնք ոչ միայն իրենց, այլև մեր ժողովրդի հարստությունն են: Այսպիսի գրադարանները պետք է հասանելի լինեն բոլորին: Ահա ինչու քննության ենք առել գույների մեծ վարպետ Մարտիրոս Սարյանի անձնական գրադարանը:

Մարտիրոս Սարյանը եղել է 20-րդ դարի արվեստի դեմքը կերտող առաջատար նկարիչներից մեկն է: Նրա ստեղծագործությունը՝ առաջին ցուցահանդեսից մինչ այսօր, իր վրա է սևեռել հանրության ուշադրությունը:

Մարտիրոս Սարյանի անունը կրող փողոցի N 3 առանձնատանը կից 1966-1967 թթ. մեծ նկարչի կենդանության օրոք Հայաստանի կառավարության որոշմամբ կառուցվեց եռահարկ գոլտրիկ մի շենք, որը դարձավ նրա ստեղծագործությունների ցուցադրավայրը, իսկ նկարչի մահից հետո՝ նրա տուն-թանգարանը: Թանգարանի շենքը բաղկացած է երկհարկանի առանձնատանից, ուր նկարիչն ապրել և ստեղծագործել է 1932-1972 թթ. և եռահարկ պատկերասրահից, որը կառուցվել է այդ տանը կից 1967 թ.: Մ. Սարյանի տան հատակագծի հեղինակն է մեծանուն ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը: Թանգարանային հատվածը կառուցվեց Մարկ Գրիգորյանի նախագծով:

Դեպի փողոց դուրս եկող ճակատամասի վերին հատվածի խճանկարը Մ. Սարյանի էսքիզով կատարել է նկարիչ Գագիկ Սմբատյանը: Տուն-թանգարանի առաջին տնօրենն է եղել նկարչի որդին, կոմպոզիտոր Ղազարոս Սարյանը, ով իր վրա էր վերցրել շենքի կառուցման աշխատանքների ղեկավարումը: 1967-2005 թթ. թանգարանը գլխավորել է արվեստաբան Շահեն Խաչատրյանը, ով մեծ նվիրումով հարստացրել և համալրել է թանգարանի ֆոնդը: 2003-2004 թթ. տուն-թանգարանի տնօրենն է եղել Լուսիկ Միրզոյանը, ով մինչ այդ երկար տարիներ թանգարանում աշխատել է որպես գլխավոր ֆոնդապահ: 2004 թվականից տուն-

թանգարանը ղեկավարում է ներկայիս տնօրեն, նկարչի թոռնուհի, բանասիրական գիտությունների թեկնածու Ռուզան Սարյանը¹:

Թանգարանի կերպարվեստի ֆոնդի ստեղծման հիմքը դարձան նկարչի նվիրաբերած 50 ստեղծագործությունները: Հետագայում ֆոնդերն ընդլայնվել են գնումների և նվիրատվությունների շնորհիվ: Թանգարանում տարվում է նաև գիտական աշխատանք. կազմվում է նրա կյանքի և ստեղծագործության լիակատար տարեգրությունը, հրապարակվում են նրա հուշերը, ձեռագրերն ու նամակները, կազմվում է աշխատանքների լիակատար կատալոգը: Ներկայումս մշակվում է նաև տուն-թանգարանի հուշային ֆոնդը: Թանգարանում կազմակերպվում են հատուկ կրթա-մշակութային ծրագրեր երեխաների և երիտասարդության համար, անցկացվում են թեմատիկ միջոցառումներ, դասական կամերային երաժշտության համերգների ընդգրկմամբ²:

Մ. Սարյանի թանգարանի ցուցադրությունը ներկայացնում է նկարչի ստեղծագործական բոլոր շրջաններն ու ժանրերը՝ սկսած 16 տարեկանում կատարած առաջին գծանկարներից մինչև կյանքի վերջին ամիսներին ստեղծված աշխատանքները: 300-ից ավելի ստեղծագործությունից կազմված մշտական ցուցադրությունը կազմակերպված է թանգարանի երեք հարկերում ժամանակագրական կարգով: Այն ընդգրկում է նաև հայտնի աշխատանքներ Սարյան ընտանիքի հավաքածուից: Այցելուները հնարավորություն ունեն այցելել տուն-թանգարանի սրբավայրը՝ Վարպետի արվեստանոցը: Տուն-թանգարանը ենթարկվել է հիմնանորոգման, կառուցվել է չորրորդ հարկը, ուր գործում է բազմագործառնական դահլիճ: Այստեղ կազմակերպվում են կոնֆերանսներ, սեմինարներ, դասախոսություններ, շնորհանդեսներ, համերգներ, ցուցահանդեսներ: Դահլիճը անվանվել է Վարպետի որդու և հարսի անունով՝ Ղազարոս և Արաքսի Սարյաններ³:

Թանգարանում իր առանձնահատուկ տեղն ունի գրադարանը, ուր ներառված են Մարտիրոս Սարյանի հեղինակած գրքերը, Մարտիրոս Սարյանը որպես ընթերցող, Մարտիրոս Սարյանի մասին գրված գրքերը, այն բոլոր ընծայագրերով գրքերը, որոնք նվիրել են գույների հանճարեղ վարպետին: Շուջերկրյա ճանապարհորդությունների արդյունքում նկարիչն իր գրադարանը հարստացրել է Գյոթեի, Հայնեի, Շիլլերի, ռուս բանաստեղծներ Բորիս Պոլովոյի, Պավել Կուզնեցովի և այլոց գրական ժողովածուներով:

Այսօր Վարպետի տուն-թանգարանի հավաքածուում կարելի է գտնել այդ գրքերի զգալի մասը: Ուսումնասիրությունների արդյունքում հանդիպել ենք այնպիսի գրքերի կամ գրքույկների, որոնք արտատպված են որևէ ամսագրից կամ հանդեսից:

Գրադարանում առանձնանում են Ղազարոս և Արաքսի Սարյաններին նվիրաբերված գրքերը, որոնք առանձին ֆոնդ են կազմում, Մուշեղ Աղայանի (կոմպոզիտոր, երաժշտագետ,

¹ Սարյան Ռուզան, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան, Եր., 2007, էջ 10:

² Սարյան Ռուզան, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան, Եր., 2007, էջ 107:

³ Հովհաննիսյան Հ.Ս., Երևանի թանգարանները, Եր., 1979, էջ 99-100:

Լուսիկ Աղայանի եղբայրը) և Արծրուն Հարությունյանի (Արաքսի Հարությունյանի հայրը) գրքերի հսկայական հավաքածուները: Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի ներսում գտնվող գրադարանն մինչ այսօր համալրվում է նվիրատվությունների, գնումների, ընտանիքի անդամների գրական ստեղծագործությունների հրատարակությունների հիման վրա: Հավաքածուում մեծ տեղ են գրավում ընծայագրումով գրքերը, անվանի հեղինակների, նկարիչների, հայտնի քաղաքական և հասարակական գործիչների նվիրաբերած գրքերն իրենց ուրույն տեղն են գրավում այս փոքրիկ գրադարանում:

Գրադարանը հրաշալի պատկերացում է տալիս բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության, մտաշխարհի, նրա հոգևոր հետաքրքրությունների մասին: Գրադարանում գերակշռում է գեղարվեստական գրականությունը: Քիչ չեն նաև գիտական, փիլիսոփայական, բնագիտական, կրոնական, աստվածաբանական, արվեստին՝ հիմնականում նկարչությանը վերաբերող գրքերը:

Մարտիրոս Սարյանի գրքերի հետ ծանոթանալով պարզ դարձավ, որ գրքերի զգալի մասը լույս են տեսել օտար երկրներում, մեծ մասը Վարպետն ինքն է իր հետ բերել, մյուս մասն էլ հեղինակների ընծայագրումներով նվիրվել են Մարտիրոս Սարյանին: Նրա անձնական գրադարանը նկարչի թողած մեծ ժառանգության մի զգալի մասն է, որը պետք է զգուշորեն պահպանվի և փոխանցվի գալիք սերունդներին: Առանձնահատուկ արժեք ունեն ընծայագրերով գրքերը, որոնց ցանկը ներկայացնում ենք առանձին:

1. Սիրաս Հմայակ, Անահիտ, Եր., 1940, 396 էջ:

Ընծայագրվում է՝ «Հայկական նկարչության մեծաքանքար վարպետ, սիրելի ընկեր Մարտիրոս Սարյանին. 17 նոյեմբեր 40 թ.»:

2. Զորյան Ստեփան, Պապ թագավոր, Եր., 1944, 707:

Ընծայագրվում է՝ «Միշտ սիրելի Մարտիրոս Սարյանին՝ գույների մեծ բանաստեղծին և ազնիվ հայրենասերին. Ստ. Զորյան, 2 մայիս 45 թ.»:

3. Ստեփանյան Անժելա, Ոսկե մեղալ, Եր., 1952, 370 էջ:

Ընծայագրվում է՝ «Գույների հանճարեղ վարպետ, թանկագին Մարտիրոս Սարյանին իր երկրպագուից: Ս. Ստեփանյան, 29 օգոստոս 54 թ.»:

4. Հոմերոս, Ոդիսական, Եր., 1958, 366 էջ:

Նվիրել է Համազասպ Համբարձումյանը. «Հավերժական մեծարանքի արժանի և միշտ սիրելի Մարտիրոս Սարյանին, Համ. Համբարձումյանից.

Դե՛հ շարժիր՝ նկարիչ

Վրձինդ հանճարի

Վերձանիր գույնի մեջ

Սուրբ հոգին աշխարհի:

Համ. Համբարձումյան, 21 մարտ 58 թ.»:

5. Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա-ի ուղևորությունը, Էջմիածին, 1956, 331 էջ:
Ընծայագրվում է՝ «Մեծատաղանդ նկարիչ Մարտիրոս Սարյանին հիացումով և օրհնությամբ՝ Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, 2 ապրիլ 1957 թ.»:
6. Զարյան Ռուբեն, Սիրանույշ, Եր., 1957, 343 էջ:
Ընծայագրվում է՝ «Շատ սիրելի Մարտիրոս Սարյանին, մեր արվեստի կաղնուն՝ հիացմունքով և հպարտությամբ: 25 մարտ 57 թ.»:
7. Տերյան Վահան, Երկեր, Եր., 1956, 742 էջ:
Ընծայագրվում է՝ «Պատկառանքի զգացմունքով՝ Մարտիրոս Սերգեյիչին, Մեծ արվեստագետին և իմ սիրելի Սարիկին՝ նրա արշանավոր ժառանգին, 9 հոկտեմբեր 56 թ.»:
8. Հումերոս, Ողիսական, Եր., 1955, 512 էջ:
Նվիրել է Համազասպ Համբարձումյանը. «Սիրելի Բարեկամ Մարտիրոս Սարյանին. Մեր ժամանակի նշանավոր արվեստագետին, որն ամենքից ավելի նուրբ կկարողանա հասկանալ այն անսահման հոգևոր գունեղը, որը կա և հավիտյան կմնա Հումերոսի անհրական ստեղծագործության մեջ: Համ. Համբարձումյան, 12 ապրիլի 1956 թ.»:
9. Վազգեն Ա Հայրապետ Հայոց, Կենսագրություն, կոնդակներ, քարոզներ, Եր., 1958, 403 էջ:
Ընծայագրվում է՝ «Մեծատաղանդ նկարիչ Վարպետ Մարտիրոս Սարյանին սիրով և օրհնությամբ՝ Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, 10 դեկտեմբեր 1958թ.»:
10. Թոթովենց Վահան, Երկեր, Եր., 1958, 679 էջ:
Ընծայագրվում է՝ «Սիրով հիշատակ՝ մեծ վարպետ ու հայրենասեր Մարտիրոս Սարյանին, նույնքան մեծ հայրենասեր Վահանի երկերը, 7 մարտ 1958թ.»:
11. Սուքիասյան Սաքո, Էջեր Վահան Տերյանի կյանքից, Եր., 1959, 305 էջ:
Ընծայագրվում է՝ «Հայ ժողովրդի արժանավոր զավակ, շատ սիրելի Մարտիրոս Սարյանին՝ հեղինակից, 28 հոկտեմբեր 1959 թ.»:
12. Սարյան Սարգիս, Սովետահայ արդի պատմվածքը, Եր., 1959, 127 էջ:
Ընծայագրվում է՝
«Իմ լավագույն ընկերոջը,
Իմ մեծագույն աղբյուրին՝
Ներշնչանքների, ոգևորության,
Կյանքի և բոլոր գեղեցկությունների,
Իմ սիրելի, սիրելի հայրիկին
Իր ավագ որդուց»
3 հոկտեմբեր 59թ.
13. Հիշողություններ Եղիշե Զարենցի մասին, Եր., 1961, 394 էջ:
Ընծայագրությունը գիրքը կազմողի կողմից է:

Ընծայագրվում է՝ «7 տարվա հալածանքներիս ամիսը, արդյունքը՝ մեր օրերի մեծ վարպետ՝ Մ. Սարյանին, Կազմողից, 20 մայիս 61 թ.»:

14. Armenian Program, Martiros Sarian Great Armenian Artist, New York City, November 6-12, 1961.-31 p.:

Ընծայագրվում է՝ «Ժողովրդի Անզուգական Արտիստ մեր թանկագին Վարպետ՝ Մարտիրոս Սարյանին խորին յարգանքով և ջերմ սիրով:»

15. Mariani Valerio, Michelangelo, The Paiter Milano, 1964:

Ընծայագրվում է՝ «Հայաստանի բնության երգիչ՝ գույների հայոց մեծագույն վարպետ Մարտիրոս Սարյանին 90-ամյակի առիթով, Սուրեն Սարգիսյան, ԱՄՆ, 23 սեպտեմբեր 1970 թ.»:

16. Սարմեն, «Երկեր երկու հատորով. Հատոր առաջին», լույս է տեսել Երևանում 1966 թվականին, բաղկացած է 430 էջից:

Ընծայագրվում է՝ «Շատ սիրելի Մարտիրոս Սարյանին՝ մեծ վարպետին, մեր ժողովրդի պարծանքին, Սարմեն, 19 մայիս 67թ.»:

17. Սևակ Պարույր, «Անլռելի զանգակատուն», լույս է տեսել Երևանում 1966 թվականին, բաղկացած է 270 էջից:

Ընծայագրվում է՝ «Նորից երգում-մորմոքում է Կոմիտասը, կախարդում է ու մոգում է աստվածային Կոմիտասը, ամենամեծ դու նահատակ, ամենահայր, ամենահայ~, գինու կարասն՝ ուրիշներին, մեզ հերիք է քո մի թասը: Պարույր Սևակ»:

18. Սարյան Մարտիրոս, «Գրառումներ իմ կյանքից». (Նվիրում եմ որդուս՝ Սարիկի պայծառ հիշատակին), լույս է տեսել Երևանում 1966 թվականին, բաղկացած է 202 էջից:

Ընծայագրվում է՝ «Իմ սիրելի խելոք հարսին՝ Արաքսույիս, Մարտիրոս Սարյան, 12.12.1968թ.»

19. Ինճիկյան Արամ, «Մտերիմներ և մտորումներ», լույս է տեսել Երևանում 1967 թվականին, բաղկացած է 342 էջից:

Ընծայագրվում է՝ «Հավերժական Սարյանին, ամենախոր ակնածանքով ու սիրով, 10 հուլիս 1968:»

20. Թումանյան Հովհաննես, «Երկերի ժողովածու.» չորս հատորով, հատոր առաջին, լույս է տեսել Երևանում 1969 թվականին, բաղկացած է 427 էջից:

Ընծայագրվում է՝ «Շատ սիրելի Սարյաններին, Թումանյան, 28 մայիս 69 թ.»:

21. Լիսիցյան Ստեփան, «Զանգեզուրի հայերը», լույս է տեսել Երևանում 1969 թվականին, բաղկացած է 334 էջից, ինչպես նաև նկարներից:

Ընծայագրվում է՝ «Սիրելի Լուսիկ և Մարտիրոս Սարյաններին, Ստեփան Լիսիցյանից, 28 մարտ 70 թ.»:

22. Սուրենյան Կարպիս, «Բնիկ որտեղացի եք», լույս է տեսել Երևանում 1969 թվականին, բաղկացած է 219 էջից:

Ընծայագրվում է՝ «Մեր մշակույթի Նահապետ Մարտիրոս Սարյանին ու նրա ազնվաշնորհ կողակից տիկին Լուսիկ Սարյանին՝ պատկառանքով ու սիրով, Կ. Ստեփանյան, 19 մայիս 1970թ.:»

23. Տարօնեցի Աղա, «Պատասխանատուները Տարօնի Եղեռնին», լույս է տեսել Սան Ֆրանսիսկոյում 1966 թվականին, բաղկացած է 528 էջից:

Ընծայագրվում է՝ «Հայրենիքի նկարչական նվիրագույն վարպետ Մարտիրոս Սարյանին, 1 մարտ 1969 թ.:»

24. Սերբար Եվգինե, Հարազատ անուններ, Եր., 1970, 134 էջ:

Ընծայագրվում է՝ «Մեծատաղանդ վարպետին իր ընտանիքով, Ե. Սիրբար»:

Գույների հանճարեղ վարպետին գրքեր նվիրել են անվանի ռուս հեղինակներ և այլ ոլորտների ներկայացուցիչներ:

25. Симонов Константин, Стихи, пьесы, рассказы, Озиг, 1949, 747 с.

“Дорогому Мартиросу Сергеевичу с глубоким уважением от автора. Вам Константин Симонов”.

26. Кузнецов Павел, Павел Варфоломеевич Кузнецов 75 лет со дня рождения 55 лет творческой деятельности, Москва, 1956, 25 с.

“Дорогому моему не изменимому и прекрасному Мартиросу Сергеевичу Сарьяну”.

27. Шагинян Мариетта, Воскрешение из мертвых, Москва, 1964, 407 с.

“Дорогому Мартиросу Сарьяну с любовью и неизменным восхищением”.

28. Кирпотин В., Достоевский в шестидесятые годы, Москва, 1966, 560 с.

“Дорогому Мартиросу Сергеевичу Сарьяну с восхищением и уважением”.

29. Пружан И.Н., Пушкирев В. А., Натюрморт в русской и советской живописи.' Ленинград, 1971, 86 с.

“Глубокоуважаемому Мартиросу Сергеевичу от Гос. Русского музея. Ученый секретарь”.

SUMMARY

The Saryan Museum has its own library, where the books authored by Martiros Saryan, books about Martyros Saryan, Saryan's own acquisitions, and the books with the autographs of the poets are collected. The library gives a wonderful idea of the poet's life and creative work, his intention, his spiritual interests.

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ
ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՈՐՈՆՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԸ

Բանալի բառեր՝ հայ մամուլի խմբագիրներ, հայ պարբերական մամուլ:

Keywords. Editors of Armenian periodicals, Armenian periodical press.

Սույն հոդվածում կներկայացնենք հայ խմբագիրների կենսագրական տվյալների որոնման աղբյուրները և նյութերը: Կարժևորենք հայ խմբագիրների կատարած աշխատանքը և առհասարակ հայ պարբերական մամուլի դերն ու նշանակությունը:

Հայկական տպագրական քաղաքակրթության կամ տպագիր-մշակութային ժառանգության մեջ որպես պատմական աղբյուր հույժ կարևոր արժեք է նեկայացնում հայ պարբերական մամուլը, որն արտացոլում է հոգևոր-մշակութային, գիտակրթական, հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական տարաբնույթ իրողություններ, ուստի հայ պարբերական մամուլի պատմության համակողմանի իմացությունը և ուսումնասիրումն ունի կարևոր նշանակություն մեր պատմության վիճահարույց հիմնախնդիրների լուսաբանման տեսանկյունից:

Հայ իրականության մեջ հայերեն առաջին ամսագիրն «Ազդարարն» է, որը լույս է տեսել Հնդկաստանի Մադրաս քաղաքում 1794-1796 թթ.¹, իսկ 1816 թ. Ռուսաստանի Աստորախան քաղաքում հրատարակվեց արևելահայ առաջին թերթը՝ «Արեւելեան ծանուցմունքը»²:

Այնուհետև հայերեն պարբերականներ են լույս տեսել Իտալիայում, Թուրքիայում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Անգլիայում, Իրանում, Հունաստանում, Մերձավոր Արևելքում, Ֆրանսիայում և այլուր³:

Պարբերական մամուլի հրատարակման գործում դրվատանքի է արժանի հայ խմբագիրների կատարած ազգանվեր աշխատանքը: Պարբերականների էջերում հանդիպում ենք պարբերականի հրատարակման գործում տարբեր ծառայություններ մատուցած ան-

¹ Հայերեն առաջին պարբերականը և նրա խմբագիրը, Եր., 2016, էջ 5:

² Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII-XIX դարեր: Հատոր 1, Գահիրե, 2006, էջ 84:

³ Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967): Համահավաք ցանկ /Կազմ.՝ Ա. Կիրակոսյան, Եր., 1970, էջ 5:

ձանց՝ գլխավոր խմբագիր կամ պատասխանատու խմբագիր, խմբագրի տեղակալ, գեղարվեստական խմբագիր, տեխնիկական խմբագիր, խմբագրական խոհուրդ, թողարկման պատասխանատու և այլն:

Խմբագիրների կենսագրական տվյալների որոնման համար կարելի է օգտվել էլեկտրոնային և թղթային զանազան աղբյուրներից և նյութերից.

1. Հայաստանի ազգային գրադարանի /ՀԱԳ/ կայքի «Հայ մամուլ» շտեմարան՝ <http://tert.nla.am/>:

2. Հայաստանի գրողների միության կայք՝ <http://wua.am/>:

3. Պարբերական հրատարակությունների զանազան կայքեր, օրինակ՝ «Գրական թերթ» պարբերականի կայք՝ <http://grakantert.am/>:

4. Համացանց, Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան, «Դիմագիրք» սոցիալական ցանց:

5. Հեղինակավոր գրառումներ:

6. Կենսամատենագիտություններ:

7. Հանրագիտարաններ:

8. Կենսագրական բառարաններ:

9. Ծածկանունների բառարաններ:

10. Գրադարանային գրացուցակներ:

11. Արխիվային փաստաթղթեր:

Հակիրճ ներկայացնենք և արժևորենք վերոնշյալ կետերը:

1. ՀԱԳ-ի կայքի «Հայ մամուլ» շտեմարան. այս շտեմարանում⁴ մամուլի նկարագրություններից բացի ներառված են նաև տարեգրքերը և տեղեկագրերը, ուստի կիրառելի է նաև հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակ բնորոշումը: Շտեմարանում ներկայացված են հայատառ, այլալեզու, երկլեզվյան ու բազմալեզվյան մամուլի այն անվանումները, որոնց բնագրային լեզուներից մեկը հայերենն է, ինչպես նաև էլեկտրոնային պարբերականներ՝ սկսած 1794 թվականից մինչև մեր օրերը⁵: Շտեմարանի գրառումները պարունակում են պարբերականների հիմնական մատենագիտական տվյալները՝ համաձայն ՀՍ 361-2013 «Տեղեկատվության, գրադարանային և հրատարակչական գործի ստանդարտների համակարգի, Մատենագիտական գրառում, Մատենագիտական նկարագրություն, Ընդհանուր պահանջներ եւ կազմման կանոններ»: Թվայ-

⁴ Շտեմարանի մասին ավելի մանրամասն տե՛ս Ղազարյան Հայկանուշ, «Հայ պարբերական մամուլ» համահավաք էլեկտրոնային շտեմարանը: «Անցյալի պահպանություն հանուն ապագայի»: Հայկական գրադարանների միջազգային չորրորդ համաժողովի նյութեր, Եր., 2016 թ. հոկտեմբերի 17-19:

⁵ Շտեմարանը հասանելի է <http://tert.nla.am/> հասցեից:

նացված, առցանց զետեղված պարբերականները ըստ տարիների և հերթական համարների հասանելի են «Կարդալ առցանց» հղումով: Այն լրիվ տեքստային շտեմարան է, հաճախ կոչվում սկզբնաղբյուրային⁶, ուստի աղբյուրագիտական կարևորագույն արժեք է ուսումնասիրողների համար:

2. Հայաստանի գրողների միության կայք՝ <http://wua.am>: կայքում զետեղված են հետևյալ բաժինները՝ պատմություն, օրենսդրություն, կառույց, անդամներ, սփյուռքահայ անդամներ, նորություններ, հայտարարություններ, գրական կյանք, գրական մամուլ, գրական կապեր⁷: Որոշման արդյունքում կարելի է ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը:

3. Պարբերական հրատարակությունների զանազան կայքեր, օրինակ՝ «Գրական թերթ» պարբերականի կայք՝ <http://www.grakantert.am/>⁸: Հայաստանի Հանրապետությունում հրատարակվող պարբերականների մի մասն ունի նաև իր կայքը, կարևոր են նաև պարբերականների էլեկտրոնային արխիվները:

4. Վիքիպեդիա: Վիքիպեդիան ամենամեծ հանրագիտարանն է աշխարհում: Այն ստեղծվում և պահպանվում է աշխարհով մեկ ավելի քան 1,4 միլիոն մասնակիցների կողմից: Ամեն ամիս Վիքիպեդիայից օգտվում է 388 միլիոնից ավելի այցելու: Վիքիպեդիայում հաշվվում է ավելի քան 20 միլիոն հոդված 260-ից ավելի լեզուներով: Վիքիպեդիայում կարող ենք գտնել խմբագիրների կենսագրական տվյալների մասին տեղեկություններ:

5. Հեղինակավոր գրառումներ. գրադարանային աշխատանքներում լայնորեն կիրառվող շտեմարանը հնարավորություն է ընձեռում կատարել որոնումներ նաև հեղինակավոր գրառումների ձևաչափով:

«Հեղինակավոր գրառում»-ը հանդիսանում է ՄԵԸՔ 21 հաղորդակցության ձևաչափերից մեկը: Այն նախագծված է անձնանունների, առարկայական խորագրերի և դրանց ենթաբաժինների ստանդարտացված նկարագրման համար: Շատ հաճախ հեղինակի անունը գրքի տիտղոսաթերթին նույնը չէ, ինչ իրական կյանքում: Կան գրողներ էլ, ովքեր ունեն մի քանի կեղծանուններ: Բացի դրանից, բազմաթիվ հեղինակներ կյանքի ընթացքում փոփոխում են անունները, ստանում են տիտղոսներ: Ավելին, տարբեր երկրներ, ելնելով իրենց մշակութային ավանդույթներից, ունեն հեղինակների նկարագրման սեփական օրենքները: Եվ որպեսզի ընթերցողը՝ փնտրումներ կատարելիս, իսկ քարտագրողը նյութը մշակելիս, հեղինակի ինքնությունը պարզելու հարցում կարողանան ճիշտ կողմնորոշվել, մեծապես կարևորվում է հեղինակավոր տվյալների դերը: Այսինքն՝ քարտարանում տվյալ հեղինակի համար պետք է ստեղծվի մեկ մուտքի կետ, որն էլ մատչելի կդարձնի հեղինակի

⁶ Զարգարյան Տիգրան, Թվային գրադարաններ, Եր., 2002, էջ 75:

⁷ <http://www.wua.am>, Հայաստանի գրողների միության կայք:

⁸ <http://www.grakantert.am>, «Գրական թերթ» պարբերականի կայք:

բոլոր ստեղծագործությունները՝ անկախ այն բանից, թե անվան ի՞նչ տարբերակներ է կրում նա⁹:

6. Կենսամատենագիտություններ: Մատենագիտության մեջ ուրույն տեղ է գրավում անհատական (պերսոնալիա) մատենագիտությունը, որի նպատակն է ի մի հավաքել նշանավոր մարդկանց աշխատությունները, նրանց մասին եղած գրականությունը, գիտական մշակման ենթարկել այդպիսիք և կազմել լիարժեք մատենագիտություններ¹⁰: Անհատական մատենագիտությունը և անհատական մատենագիտական ձեռնարկներն արտացոլում են փաստաթղթեր՝ նվիրված մեկ անհատի՝ գրողի, գիտնականի, հասարակական գործչի¹¹: Կիրառելի է նաև կենսամատենագիտություն եզրույթը:

7. Կենսագրական հանրագիտարաններ: Կենսագրական հանրագիտարանը պատմության յուրատեսակ արտահայտություն է: Առանձին անձանց կենսագրությունները, զուտ անհատական լինելով հանդերձ, ներկայացնում են նաև ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի, մշակույթի, գիտության, գրականության, սպորտի և այլ ոլորտների որոշակի դրսևորումները, որոնց ամբողջությունը ժողովրդի ընդհանրական պատմությունն ու նկարագիրն է¹²:

8. Կենսագրական բառարաններ: Կենսագրական բառարանի պահանջը վաղուց է զգացվել հայ իրականության մեջ, այնպիսի մի բառարանի, որտեղ հնարավոր լինի գտնել մեր գրողների, հրապարակախոսների, արվեստագետների, առհասարակ մշակույթի գործիչների կենսագրական տվյալները¹³:

9. Ծածկանունների բառարաններ: Ծածկանունների գործածությունը համաշխարհային երևույթ է: Համաշխարհային մշակույթը հարուստ է այնպիսի դեմքերով, ովքեր ավելի հայտնի են իրենց ծածկանուններով:

Ծածկանունների գործածության պատճառները բազմազան են՝ քաղաքական, հասարակական, անձնական, լրագրական: Հեղինակը հանդես է գալիս ծածկանվամբ՝ սոցիալական երևույթների մասին քննադատական խոսք ասելու, երբեմն ճշմարտությունը բացեիբաց հայտնելն անհարմար գտնելու կամ խուսափելու, իր դիրքին ու զբաղմունքին անհամապատասխան բան գրելու կամ գրածին կարևորություն չտալու, ազգանունը հայերեն կամ բարեհունչ դարձնելու, պարբերականի նույն համարում մի քանի նյութ տպագրելու և այլ նկատառումներով:

⁹ Զարգարյան Տիգրան, Դասախոսությունների նյութեր, Եր., 2014:

¹⁰ Կոստիկյան Հր., Մատենագիտության հիմունքները, Եր., 1968, էջ 337:

¹¹ Справочник библиографа, СПб, 2006, с. 27.

¹² Ով ով է. հայեր (Կենսագրական հանրագիտարան: Երկու հատորով): Հատոր 1, Եր., 2005:

¹³ Ստեփանյան Գառնիկ, Կենսագրական հանրագիտարան: (Հայ մշակույթի գործիչները), 3 հատորով: Հատոր 1, Եր., 1973, էջ 3:

Պարզել գրականության մեջ և պարբերական մամուլում ծածկանուններով հանդես եկած հեղինակների իսկությունը և այդ կերպ նպաստել անցյալի գրական ժառանգության գնահատությանը՝ վաղուց արդեն անհրաժեշտություն է դարձել պատմամշակութային հարուստ անցյալ ունեցող ժողովուրդներ համար¹⁴:

10. Գրադարանային գրացուցակներ: Գրացուցակավորումը գործընթացների ամբողջություն է, որն ապահովում է գրադարանային գրացուցակների ստեղծումը և գործառնությունը¹⁵: Գրադարանների տեղեկատվական ռեսուրսներն (հավաքածուները) արտացոլված են էլեկտրոնային ձևաչափով և թղթային գրացուցակներում: Գրացուցակներում ներկայացվում են պարբերականի վերնագիրը, ենթավերնագիրը, տպագրավայրը, հրատարակման տարեթիվը, հերթական համարները և խմբագիրների անունը, ազգանունը: Գրացուցակներում ներառված են նաև խմբագիրներին վերաբերվող ուսումնասիրություններ:

11. Արխիվային փաստաթղթեր: Արխիվային փաստաթղթերն ունեն կարևոր նշանակություն հասարակական կյանքի զանազան ոլորտների համակողմանի ուսումնասիրման և լուսաբանման տեսանկյունից: Արխիվներում պահվում են վավերագրեր, ինչպես նաև առանձին հիմնարկների ու անհատների գործունեության վերաբերյալ ժամանակի ընթացքում ստեղծված փաստաթղթերի հավաքածուներ¹⁶: Խոսքը վերաբերում է նաև մշակույթի, կրթության և գիտության տարբեր բնագավառների հայտնի անձանց և գործիչների կյանքին և գործունեությանը վերաբերվող փաստաթղթերին, որոնք պարունակում են անհրաժեշտ տեղեկատվություն:

Հավաստի և օբյեկտիվ և հնարավորինս լիարժեք տեղեկատվություն ստանալու համար աղբյուրների և նյութերի պարունակած տեղեկատվությունը անհրաժեշտ է համեմատել:

SUMMARY

Armenian press have a significant role for historians, ethnographers, students and educators. Armenian editors played a great role in the publication of Armenian periodicals. There are different sources about the biographical data of the editors. In this article the author has described the sources, from which data are being collected.

¹⁴ Հովակիմյան Բ., Հայոց ծածկանունների բառարան, Եր., 2005, էջ 5:

¹⁵ Справочник библиотекаря, СПб, 2006.

¹⁶ Մուրադյան Անահիտ, Արխիվագիտություն, Եր., 2013, էջ 6:

ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
(Համառոտ ակնարկ)

Բանալի բառեր՝ Երաժշտական գրադարան, գրադարանի հավաքածու, գրադարանի պատմություն:

Keywords. Music library, library collection, library history.

Անցած դարի 60-ական թվականները հայկական երաժշտական մշակույթի բուռն զարգացման տարիներ էին: Ստեղծագործողների մի աստղաբույլ կար, ովքեր իրենց գործունեությամբ մնայուն արժեքներ էին ստեղծում և հայկական երաժշտարվեստի փառքը տարածում նախկին Խորհրդային Միությունում և նրա սահմաններից դուրս: Լայնորեն հայտնի էին Առնո Բաբաջանյանի, Էդվարդ Միրզոյանի Ալեքսանդր Հարությունյանի, Ղազարոս Սարյանի, Ադամ Խուդոյանի, Էդգար Հովհաննիսյանի և ուրիշների անունները:

Հանրապետությունում գործում էին բարձրագույն (Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա) և միջնակարգ մասնագիտական երաժշտական ուսումնարաններ և արվեստի դպրոցներ, մշակույթի պալատներին և տներին կից երաժշտական խմբեր և խմբակներ:

Բնականաբար, այս պայմաններում հասարակական պահանջ էր առաջացել ստեղծել երաժշտական մասնագիտական գրադարան, որով նպաստավոր պայմաններ կստեղծվեին երաժշտական գիտելիքների ստացման և խորացման համար:

Հայաստանի Խորհրդային կառավարության որոշմամբ 1967 թ. հունվարից Ալ. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի շենքում (Չայկովսկի 27) սկսեց գործել Հանրապետական երաժշտական գրադարանը: Լինելով Մշակույթի նախարարության ենթակայության ներքո՝ գրադարանի հավաքածուները սկսեցին ձևավորվել ու զարգանալ ոչ միայն հայ, այլև ռուս և օտարազգի երաժշտական ստեղծագործությունների համալրման հիմքի վրա: Գրադարանի համալրման, հավաքածուի ձևավորման գործում, նոտաներից և երաժշտական ստեղծագործություններից բացի, ուշադրություն էր դարձվում արվեստի, բառարանային և հանրագիտարանային հրատարակությունների ձեռքբերմանը: Առանձնակի ուշադրություն էր դարձվում ծայնապնակներին, ձայներիզներին:

Հանրապետական երաժշտական գրադարանը Ալ. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցում գործել է մինչև 1980 թ. սեպտեմբերը: Այնուհետև գրադարանը տեղափոխվել է Տիգրան Մեծ փողոցի N53 բազմահարկ շենքի առաջին հարկի 265 քմ. մակերեսով տարածք: 1980 թ. գրադարանի հավաքածուն կազմում էր ավելի քան 110 հազար հաշվառային միավոր:

2003 թ. Հանրապետական երաժշտական գրադարանը անվանափոխվել է «Երաժշտագիտական գրադարան» ՊՈԱԿ-ի:

ՀՀ կառավարության 2016 թ. նոյեմբերի 24-ի N1204-Ն որոշմամբ «Երաժշտագիտական գրադարան» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվելով միացել է «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ին: Կառավարության այդ որոշմամբ սահմանվել է, որ «Երաժշտագիտական գրադարան» ՊՈԱԿ-ի իրավահաջորդը «Կոմիտասի թանգարան-ինստիտուտն» է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

Այսպիսով, գրադարանը Տիգրան Մեծ փողոցի N53 շենքում գործել է մինչև 2017 թ. փետրվարի 17-ը, այնուհետև տեղափոխվել է «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի շենք, Արշակունյանց 28 հասցեով:

Գրադարանի բաժինները

Իր գործունեության ընթացքում գրադարանը, որոշ փոփոխություններով հանդերձ, հիմնականում ունեցել է հետևյալ բաժինները.

- Համալրման և մշակման
- Հավաքածուի կազմակերպման, օգտագործման և պահպանման
- Սպասարկման
- Ձայնունկնդրման
- Հանրության հետ կապերի և տեղեկատու մատենագիտության:

Բաժինների գործունեությունը սերտորեն փոխկապակցված է եղել: Համակարգումը հիմնականում իրականացվել է գրադարանի տնօրենի կողմից:

Գրադարանի հավաքածուի ձևավորումը և կազմը

2017 թ., մինչև վերակազմավորվելը, գրադարանի հավաքածուն կազմել է ավելի քան 237 հազար հաշվառային միավոր: Այդ ամբողջական հավաքածուն մուտքագրված է 122 գրանցամատյանում, որից 114-ում գրանցված են նոտաները և գրքերը, իսկ 8-ում՝ Ձայնադարանի հավաքածուն:

Ըստ գրանցամատյանների՝ նոտաները և գրքերը կազմում են 221804 հաշվառային միավոր, իսկ ձայնադարանի հավաքածուն՝ 15281 միավոր, որից 13493-ը ձայնապնակներ են, իսկ 1788-ը՝ այլ կրիչներ, լազերային պնակիտներ, ձայներիզ և տեսաերիզ: Գրադարանում պահպանվում են հայ և օտարերկրյա կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ սկսած 17-րդ դարից: Հավաքածուի մեջ նշանակալի են դաշնամուրային, վոկալ, լարային, փողային, նվագախմբային, օպերային կլավիրներ, պարտիտուրներ և այլ բնագավառների վերաբերյալ գրականություն, թերթեր, հանդեսներ և այլն:

Տասնամյակների ընթացքում գրադարանը հիմնականում համալրվել է պետական միջոցներով: Անցած դարի 90-ական թվականներին և 21-րդ դարի առաջին և երկրորդ տասնամյակներում գրադարանի համալրմանը իրենց նպաստն են բերել նաև անհատները, կազմակերպությունները և՛ Հայաստանից, և՛ այլ երկրներից:

Հավաքածուն հարստացել է բազմաթիվ անուններով և կազմում է շուրջ 45 հազար: Որպես մասնագիտական գրադարան՝ այն եզակի տեղ է գրավում մեր հանրապետությունում: Հավաքածուում կան մեծանուն կոմպոզիտորներ Արամ Խաչատրյանի, Էդվարդ Միրզոյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Հարո Ստեփանյանի և մշակույթի ու արվեստի նշանավոր գործիչների ինքնագրերով հրատարակություններ:

2017-2018 թթ. հավաքածուի վերահաշվառման և «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հետ վերակազմակերպման ընթացքում ծավալուն աշխատանքներ տարվեցին հավաքածուն բազմօրինակներից առանձնացնելու, ոչ մասնագիտական և բազմօրինակ գրականությունը Հայաստանի ազգային գրադարան տեղափոխելու և հավաքածուի բացակա միավորները արձանագրելու ուղղությամբ:

Արդյունքում, 88861 միավորը գտնվում է Կոմիտասի թանգարան-ինստիտուտում, որից 4656-ը ձայնադարանի միավորներ են, իսկ 98047-ը՝ Հայաստանի ազգային գրադարանում, որից 10570-ը ձայնադարանի միավորներն են: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ գրադարանի հավաքածուի ամբողջական ստուգում-վերահաշվարկում մինչև Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հետ վերակազմավորվելը չի կատարվել: Եղել են հավաքածուի որոշ բաժինների, երբեմն նաև առանձին հրատարակությունների ստուգումներ, որոնք կրել են մասնակի բնույթ:

Գրացուցակները և քարտարանները

Գրադարանի ամբողջական հավաքածուի տեղեկատվական արտացոլումը ներկայացված են գրացուցակների և քարտարանների միջոցով: Ե՛վ նոտային գրականության հավաքածուն, ինչպես նաև բաժնային գրականությունը, և՛ ձայնադարանի հավաքածուն ունեն այբբենական, կարգային, վերնագրային գրացուցակներ՝ հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով:

Նշանակալի է նաև քարտարանների բովանդակային բազմազանությունը: Այսպես, երգերի վերնագրերի քարտարան, բանաստեղծների ստեղծագործությունների հիման վրա գրված երգերի քարտարան, ըստ կատարողների, դիրիժորների, գեղարվեստական ղեկավարների, համույթների, մանկական ստեղծագործությունների, ըստ տարբեր երկրների երաժշտության և այլն:

Հավաքածուն ներկայացված է գրադարանային-մատենագիտական դասակարգմամբ:

Սպասարկումը

Գրադարանի հավաքածուների սպասարկումը կատարվել է գրադարանի ներսում և գրադարանից դուրս՝ բաժնույթների կիրառմամբ: Տարեկան գրադարանի հավաքածուներից օգտվել են շուրջ 5,5-6 հազար ընթերցող: Նրանք հիմնականում Կոնսերվատորիայի, երաժշտական քոլեջների, դպրոցների սովորողներ են, երաժշտության ուսուցիչներ, դասախոսներ, կոմպոզիտորներ, երաժշտագետներ և հասարակության տարբեր խմբերի ներկայացուցիչներ: Տացքը կազմել է տարեկան 260-280 հազար:

Ընթերցողներին երբեմն սպասարկել են նաև միջգրադարանային բաժնույթի միջոցով, եթե պահանջվող նոտան կամ գիրքը գրադարանում չի եղել:

Ակտիվ է եղել միջոցառումների կազմակերպումը, որին ներգրավված են եղել հանրապետության նշանավոր կոմպոզիտորներ, երաժշտագետներ և տարբեր գործիքների վրա նվագողներ:

Մատենագիտական աշխատանքներ

Գրադարանում կատարվել են որոշակի մատենագիտական աշխատանքներ, կազմվել են թեմատիկ քարտարաններ, եղել են մատենագիտական հրատարակություններ: Այսպես, «Ղազարոս Սարյան: Կենսամատենագիտություն» /Եր., 1999 թ./ և «Հայ երաժշտական գիրքը և նոտաները 1664-1950 թվականներին» /Եր., 2014 թ./ մատենագիտական աշխատանքները:

Վերջին տարիներին կազմվել են մի քանի մատենագիտություններ, որոնք ֆինանսական դժվարությունների պատճառով չեն հրատարակվել: Մատենագիտական աշխատանքների ծավալումը նպաստել է ընթերցողների բազմաբնույթ պահանջների արդյունավետ բավարարմանը:

Նվիրատուները

Գրադարանի հավաքածուների հարստացմանը նպաստել են բազմաթիվ կոմպոզիտորներ, երաժշտագետներ, անհատ կատարողներ, կազմակերպություններ և հաստատություններ: Գրադարանն ունի «Նվիրատուների քարտարան», որոնցից են՝ Էդվարդ Միրզոյան, Հարո Ստեփանյան, Գեղունի Զթյան, Մեդեա Աբրահամյան, Ալինա Փախլանյան, Արամ Սաթյան, Արաքսի Սարյան, Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատուն, Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանատուն, Արեգ Լուսինյան, Դանիել Երաժիշտ և էլի շատ-շատեր:

Ներկա վիճակը և կատարված աշխատանքները

Ինչպես վեր նշեցինք, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հետ վերակազմավորվելուց հետո հավաքածուի հետ տարվող աշխատանքները նոր թափ են ստացել, հատկապես բազմօրինակների առանձնացման, հիվանդ միավորների բացահայտման և համապատասխան ցուցակների կազմման, հավաքածուի և գրացուցակների ու գրանցամատյանների համեմատման, միավորների գրադարանային տեղակայման ուղղությամբ:

Թանգարանի տնօրինությունը ուշադրության կենտրոնում է պահում գրադարանի խնդիրների լուծումը: Հատկապես պետք է նշել, որ ծայնադարանի ծայնապնակները թվայանցվում են և առաջիկայում հայերեն միավորների հետ կապված ընթերցողները ականատես կլինեն նոր իրողությունների:

Դանդաղորեն, բայց ակտիվանում է գրադարանից օգտվողների դրական վերաբերմունքը, քանի որ գրադարանի նոր շենք տեղափոխվելը կարծես դժվարություններ է ստեղծել նոր իրողությունները ընդունելու կապակցությամբ: Այդուհանդերձ, դա հաղթահարելի է, քանի որ նաև նորմալ պայմաններ են ստեղծված և՛ ձմեռվա, և՛ ամառվա համար:

Գրադարանում կատարված փոփոխություններն առաջիկայում ավելի ակնհայտ կդառնան: